

ՀՐԱՄԱԿՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՑԵԼԵԿԵԱՆԻ

Ա.ԲԵԱԿ 2090.668.6

ՆԵՂԵԶ ՅՈՎՆԱԹԱՆ ԱՃՈՒՂԷ  
ԵՒ


ՅՈՎՆԱԹԱՆ ՅՈՎՆԱԹԱՆԵԱՆ ՆԿԱՐԻՉԸ



ՆԵՐՄԵՍԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ՓԱՐԻԶ

1910



1236.

ԱՐԵՎԱՆ 20ՊԲ.ՀԱՅԱՆ



ՆԱԴԱՇ ՅՈՎՆԱԹԱՆ ԱՇՈՒՂԸ

ԵՒ

ՅՈՎՆԱԹԱՆ ՅՈՎՆԱԹԱՆԵԱՆ ՆԿԱՐԻԶԸ

~~ՑԱՐԱԿ. Ա 3849~~  
~~32~~



ՀԵՐԱԿՈՒՄԱՆ ՅՊՈՐՈՒ

ՓԱՐԻԶ

1910



ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆ ԱՃՈՒՂԸ

ԵՒ


ՅՈՎՆԱԹԱՆ ՅՈՎՆԱԹԱՆԵԱՆ ՆԿԱՐԻԶԸ




## **ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ**







Արմանակարդ (գիրքը ին մէջուղի)



Մեր մէջ յաճախ գանգատներ բարձրացած են մեր նախնեաց թողած զրական ու գեղարուեստական արտադրութեանց միօրինակութեան , աղքատութեան մասին : Քայլց քանի անցեալը կը պրպտենք , քանի հողուն տակը թաղուած , վաղնջական կիսափուլ տաճարներու մէջ մոռցուած կամ ձեռագիրներու մէջ թաքչած հնօրեայ հայ մոտաւոր կեանքի նշխարները երեւան կը հանենք , կը ստիպուինք խոստովանելու որ գանգատեկու իրաւունք ունեցողը չէ մէնք , այլ մեր նախնիքն են : Անոնց մէջ շատեր , մեր կարծածէն ու գիտցածէն շատ աւելի՝ շափով ու որակով սաղանդ են ցոյց տուեր , գործ են արտադրեր . բայց իւրաքանչիւրին մահուընէն յետոյ , իրենցմէ շատերուն գործը՝ եթէ չէ փացեր բարբարոսներու քանդիչ արշաւանքներուն հեղեղին տակ , փացեր է կամ մոռացման մէջ սուզուեր մնացեր է հայ հասարակութեան յանցազարտ անհոգութեան , անգիտակցութեան , ապերախտութեան հետեւանքով : Ահա բանաստեղծ Յովեաթան մը , և նկարիչ Յովեաթան մը , որ գես մենէ միայն մէկ ու կես գար առաջ արժէք-քաւոր գործ մը արտադրեր են , և այսօր անոնց անունն իսկ մեզի անծանօթ է : Ո՞վ գիտէ՝ աւելի հին ժամանակներու մէջ , ի՞նչքան Յովեաթաններ գոյութիւն են ունեցած , որոնց գործն ու յիշատակը կորած է առյաւէտ կամ խուլ անկիւն մը խրած՝ խուզարկու ձեռքի մը կը սպասէ :

Աինչդեռ Այեաթ-Նովայի և իրեն յաջորդող գրեթէ բոլոր աշուզներուն , նոյն իսկ ամենէն միջակներուն , երգերը հրատարակուած են գլոբի ձեւով և հաւաքածուներու մէջ բազմիցս արտատպուած , մինչեւ այսօր

անտիպ մնացած հն տաղերը Նազաշ Յովեաթանին, այդ նուրբ երգչին որ Ասյաթ-Նովայէն իսկ առաջ Կովկասի մէջ Հայկական սաղը հնչեցուցած է ամենաքաղցր շեշտերով: Պ. Գ. Լեռնեանի „Հայ աշուղներ“ գրքին մէջ Նազաշ Յովեաթանի անունը յիշուած է անցողակի: Երկրորդական աշուղի մը անունին պէս, հետեւեալ երկոտող ծանօթութեամբ: Նազաշ Յովեաթան, — (Կարճիկ? Յովեաթան), յայտնի չէ մէկ ո՞ր թուականին է եղել, ուղեցել է շատ հայերէն երգեր: Այս երկոտողին համ կը գտնելք Հրատարակուած՝ միմիայն „Ուսկի՞ց կուզաս, Քաղցըր բըլոււլ“ տաղը: Քնար Հայկականը, Ախուակ Հայաստանին և նմանօրինակ հաւաքածուները մէկ կտոր մը միայն կը պարունակին Նազաշ Յովեաթանէն, — „Յօրժամ եղե գարուն, արեւ ծագեցաւ“ տաղը: — այդ ալ՝ Նազաշով Ագամի վերագրուած՝ ձեռագրի սխալ ընթերցման մը հետեւանքով: Գալով նկարիչ Յովեաթանին արտագրութեանց, որոնցմով ողողուած ու գեղազարդուած է Էջմիածնայ Մայր-Տաճարը, ոչ միայն ո և է Հայ մը չէ գտնուած որ մտածէր զանոնք ուսումնափրութեամբ մը ծանօթացնել Հայութեան, այլ և գտնուած է Հայ մը — Խրիմեան կաթողիկոսը: — որ անոնց մէկ ստուար մասը քանդած փճացուցած է անհաւատալի գանտալութեամբ:

Հրատարակերպի այս հատորը՝ իմ փափառ է դարմանել Հայ հասարակութեան այդ ապաշնորչ վերաբերմունքը դէպ ի իր այդ երկու տաղանդաւոր զաւակները:

Նազաշ Յովեաթան աշուղին տաղերուն ծանօթացայ, և զանոնք օրինակեցի, 1898ին՝ Վիեննայի Ֆիիթարեանց ձեռագիրները խուզարկած միջոցիս: Ըստոնց մեծամասնութեան մէջ տիրող քնքուշ, սիրուն, շնորհալիք քնարերգութիւնը, և անոնցմէ մէկ քանիին զգացման մեծ թարմութիւնն ու ձեւի փափուկ գեղեցկութիւնը զիս հմայեցին, և մտադրեցի՝ առաջին առիթով որ միջոց ունենայի՝ Հրատարակել այդ անտիպ մնացած շահեկան տաղաշարքը: Փարիզ գարձիս, Վարդգէս Սուրենեանց և Փանոս Թէրլէմէզեան նկարիչներն ինձ յայտնեցին թէ Էջմիածնայ որմաննկարները գործն են Նազաշ Յովեաթան անուն վարպետի մը: Արովհետեւ իմ աշուղս ալ կը կոչուէր Նազաշ (Նկարիչ), և իր որդին՝ Ցակոր՝ անոր մաշն ողբերգող տաղի մը մէջ կը ներկայացնէ զայն „Շնորհալից ձեռն նկարիչ սրբոց“, ո՞ր միշտ զարդարեւ բազում սրբոց տուն, ենթագրեցիւ— և վերոյիշեալ նկարիչներն ալ այդպէս կը կարծէին: — որ աշուղն ու Էջմիածնայ տաճարը նկարագրդող վարպետը միւնոյն ամձն էին: Կը ցանկայի սակայն՝ աշխատութիւնս հրատարակելէ առաջ՝ անձամբ տեսնել նկարչին գործը Էջմիածնայ մէջ, տեղեկութեաներ Ճարել՝ տեղույն վրայ՝ այդ գործին որպիսութեան, ինչքանութեան մասին և հեղինակին կեանքին վրայօք: Անցեալ տարի՝ այդ ցան-

կութիւնս կատարուեցաւ : Աւտովմասիրութիւններս յանդեցան՝ նախ՝ սա եղրակացութեան որ Յովեաթան աշուղը, թէպէտ և ինքն ևս նկարիչ, Էջմիածնայ տաճարին որմանկարիը չէ , ոյլ ոյս վերջինը՝ թռուն է առաջնոյն :

Քանաստեղծ-նկարիչ Յովեաթանը մեռած է ըստ իր Յակոբ որդւոյն՝ ողբերգի (1) վերնագրին՝ մի Ռազմաւ թվական՝ այսինքն ք. թ. 1722ին . Նոյն ողբերգին մէջ՝ Յակոբ կը յիշատակէ թէ իր հոյրը վախճանած է „վաթուան և մէկ տարեկան հասակի մէջ . ուրեմն ծնած է 1661ին : Երգ, Էջմիածնայ տաճարին ներքին վերանորոգումն ու նկարազարգումը՝ Վուկաս կաթողիկոսի օրով և „ի ձեռն հանճարաւոր արհեստագէտ նկարչին Յովեաթանու“ կատարուած է՝ ըստ Ըահմաթունեանի՝ 1786ին (2), Խոկ Մայր-Աթոռի գիւտանէն քաղուած և այդ վերանորոգումը մանրամասնօրէն նկարազրող զրութիւն մը , զոր Հ. Գ. Վ. Յովեաթիւն հրատարակած է՝ գժրազգարար առանց ու և ուսումնասիրութեան կամ ծանօթազրութեան՝ Արարատի 1901 մայիս-յունիսի թիւին մէջ , ու և է թռուական մի յիշատակեր , բայց նկարիչը կ'անուանէ՝ „Ծովոմթեցի գեղեցկանկար և քաջափարժ Յովեաթանեան Յովեաթան շնորհալի պատկերահան և ծաղկարար վարպետն“ : Անտարակուսելի է ուրեմն որ Էջմիածնայ տաճարը փառազարդող Յովեաթանը , որ կը կոչուի Յովեաթանեան՝ իր նշանաւոր մեծ հօր անունով , թռուն է նկարիչ-տաղերգու Յովեաթանին , որդին Յակոբի՝ որ աշուղ է և նազաշ : Զենք գիտեր թէ վերջին Յովեաթանը , շարունակելով իր պատուն ու հօրը երկար գործունեութեան ընտանեկան աւանդութիւնը , վրձնին հետ սաղ ալ բանեցուցած է : Այդ մասին ու և է յիշատակութիւն չկայ մեզի ծանօթ սակաւաթիւ վաւերազրերուն մէջ : Աւելի հաւանական է որ ինքը իր ամրող տաղանդը նկարչութեան մէջ կերպնացուցած է , որով և արտազրած՝ հյուկապւզործ մը , ստուար ու բազմաձեւ : Այս հասարով ես կ'ուզեմ ծանօթացնել մեր հասարակութեան այդ երկու մոսուածները միախին քով քովի : Երկու ուշագրաւ հայ տաղանդներ են որ պիտի երեւան գան՝ միեւնոյն անունը կրկնակ փայլով մը յաւերժացնելու , և հայ արուեստի պանմէօնին մէջ երկու նոր արձան կանգնեցնելու :

(1) Այս տաղը՝ որ իր գտնուի Յակոբի կարգ մը սիրային տաղերու նես՝ Կաղաք-Յովեաթիւ տաղերէն յետոյ՝ Վիճնայի Մէֆրաւեանց թ. 537 ձեռագրին մէջ , կը հատարակեմ այս հատուին մէջ ամբողջութեամբ : Յակոբի միւս տաղերը բոյլ նմանողութիւններ են նօր սիրեցներուն , և շամեկանութեամբ գործի :

(2) Սառագրութիւն կարտովիկ Էջմիածնի եւ իինց գաւառացն Այրարատոյ , աշխատախորւթեամբ Յովեաթան ևսիօկոպոսի ծանխարութեանց ծանիշացոյ , միարանի սրբյ Էջմիածնի . հատու Ա :

Ա.

ՆԱՇԱՇ ՅՈՒՆԱԹԱՆ ԲԱՆԱՏԵՂԸ

Կեռնքին վրայ ոյս բանաստեղծ նկարչին, ոչինչ գիտենք բաց ի ոյն մէկ քանի մանրամասնութիւններէն զոր կուտայ իր որդին Յոկոր հօրը մաշուանը ձօնած ողբերգին մէջ՝ Ծնած 1661ին՝ Ախուկանի Ծոսօթ զիւզուքալպին մէջ (1), կը գտնանի իր ծննդավայրը՝ 1722ին։ Արշեսով նաղաց՝ նկարիչ է եղած, շատ մը եկեղեցիներ որմանկարած, շատ մը սուրբերու պատկերներ զծած։ Այդ նկարչական արտադրութիւնները ո՞ր եկեղեցիներուն յատկացուած էին, անոնցմէ մնացած են քանի մը կտոր ոչինչ զիտենք՝ առ ոյժմ։ Յօյտնի կ'երեւայ այդ ողբերգէն՝ թէ անուս բնազդական արտևստագէտ մը չէ եղած Յովեաման, այլ զիտուն բանի։ Հնորհալից վարպետ իմաստուն<sup>1</sup>, «Քարտուզար տակից հնոց և նորոց՝ բանաստեղծ վարպետ» (այսինքն զրաբար և աշխարհաբար քաջ զիտցող ձարտար բանաստեղծ), «Պանազան շնորհք վարպետաց ուսեալ», «Էջեալ շնորհիւ՝ ազրիւը զիտութեան, հմաւ ընթերցմանց քերականութեան»։ Յովեաման ամրաբած է ուրիմն մեծ հմտութիւն ինչքան որ կարելի էր իր ժամանակին ու միջավայրին մէջ, հմտութիւն զրական և նկարչական։ ամերող Կոմիկար պարտած, և առար երկիրներ ալ ձամրորդած է, «Երկիր շատ շրջեաց տար յաշխարհ՝ օտար», հաւանականաբար Պարսկաստան, թերեւս Տաճկաստան, թերեւս իսկ Խրոսոյի մէկ քանի մասերը. և այդ աշխարհէ աշխարհ թափառութեարով իր մաքին պաշարը ձոխացուցած, իր երանցապանակին ու քնարին ուժն ու այլոզանութիւնը բազմազատկած է։ Հայոց ողգի և հայ եկեղեցւոյ պատմութեան հմաւ, ասուածաբանութեան քանակեակ, իբր սարկուաց՝ եկեղեցւոյ մէջ մերթ պաշտօն իսկ կատարած, հեղինակաւոր բանգէտ մարզու պատկառելի զիրք մը ունեցած է (2). «Ծանօթ էիր, կ'ըսէ ողբերգուն, համայն մեծաց իշխանաց», որոնց

(1) Յու.օր, աւան մը բանաստեղծական դիրել, վասիներով, ձուերով, անտաներով. մէ և մէ զարեւու մէջ անուանի է դարձած՝ նարսութամբ, վանաւականութեամբ, եկեղեցիներու ընութեամբ. նաևնուու է եղած Գևարդինի կամ Գևար անոն կրտսանց վանք, որոն կուսան ևս ձևագիրներ օրինակելու մէջ կը մրցին վանականներու նես։

(2) Ս. Պապարու վանինի ձեռագիրներն մին կը պարմակէ բա Հ. Մ. Պոտերեանի ինձի նաղորով մէկ աղյեկորեան։ Յրբազոսի պատմութեան օրինակուրիսն մը՝ նեւեւայ յիշաւակուանով։ Արդ գրեաւ զար ի նադան Ազակին՝ ըն նոյնանա որդյոյն Քրիստոնի ուուրբի առանձին, ու զեւն իւր միեւաց



Ա. Ասուածածին  
(Խէման Սևղանի գմբերի մաշնաշին վրայ նկարուած)



ապարանքին մէջ հաւանականաբար՝ յաճախ կ'երթար փայլեցնել իր աշուղի կամ նկարչի տաղանդը . „Բազում վանօրայք , կ'ըսէ դարձեալ Յակոր , և շատ միաբան , Գիտուն կարգացողք և աստուածաբան , Դիմէին առ քեզ , հարցանէին բան , Տայիր պատասխանի” : Իր ատենին մէջ անտարակուսելի կերպով մեծահոչակ վարպետի անուն մը շինած անձ մը , անուն որ իր ծննդավայրէն շատ հետուները տարածուած է . „Եյլ երեւելի” անուամբ հոչակեալ “ , Աւենիս շատ ծանօթ եղբարք պատուական , Քո մահըն լրւան և խելաց անկան : Շատ հետաստանէ փափաքին ցանկան քոյին տեսութեան” : Աղջամիտ ու սրամիտ մարդ , աւանդասէր , եկեղեցասէր , բայց ոչ տիրացու , ընդհակառակն՝ տիրացուական բարքերուն , տգէս կրօնամոլութեան , փնմի ու սորուկ տէրտէրականութեան ատող ու հեղնող , ինչպէս կը տեսնելիք „Մոնթէնրու մասին իր կծու երգիծանութենէն : Քազմաձիր , յորնավասարակ , մեծարելի ազնիւ գէմք մը վերջապէս , որ արգանի է ընդ միշտ վայելելու Հայութեան մէջ այն խոր յարգանքը զոր իր ժամանակակիցներն իրեն ցոյց տու եր են :

\* \* \*

Կաղաշ Յովեաթանի տաղերը զոր կը հրատարակեմ այս հատորին մէջ , օրինակուած են՝ ամենամեծ մասամբ՝ Վիեննայի Միսիթարեանց Մատենադարանի թիւ 537 ձեռագրէն , և մասամբ նոյն մատենադարանի թիւ 412 և 456 ձեռագիրներէն : Ծանօթութեանց մէջ նշանակած եմ այն կտորները որ թ. 412 և 456 ձեռագիրներէն առնուած են : Թիւ 537 ձեռագրին մէջ գտնուող կտորներէն մէկ քանին կը գտնուին նաև Վիեննայի Միսիթարեանց թ. 493 , 514 , 369 և 647 ձեռագիրներուն , Վիեննակի Միսիթարեանց թ. 470 , Կզմիածնոյ թ. 601 ձեռագրին , Պ. Կ. կոստանեանցի “Մկրտիչ Կաղաշ և իւր առջերը” գրքոյին , „Քնար Հայկական”ին և Պ. Գ. Լեռնեանի „Հայ Աշուղներ” հատորին մէջ : Ծանօթութեանց մէջ նշանակած եմ այդ կտորներուն՝ այս այլևայլ օրինակներու համեմատութեամբ տարբերութիւն :

---

Ի սուրբ կողմ կենաւարին Քրիստոսի , առաջնորդութեամբ տեսն Պետոսի արևելյանուսի , ի հայրապետութեան տեսն Եղիազարու կարսդիկոսի , որ յայս ամի յամսեանն օգոստոսի եկեալ բակեցաւ ի սուրբ Արուն Եղմիածին . ի բուականին Հայոց Թօն.Ա (1682) , ի բազաւութեան Պարսից Զան Սէկմանին . արդ գրեցաւ զայ ձեռամբ Յովիարան դպրի ի գեղէն նոորոյ , և նայրէ իմ զտէ Յովիանն հանգուցեալ ի Քրիստոս :

Հաւանական է որ այս Յովիարան դպիր՝ ապազյա աւուղն է , այդ միջոցին 21 տարեկան , ձեռազքի օրինակութիւններով զբաղած . այսպէսով՝ կ'ունենան իր հօր անոնք ալ՝ Յովիան , որ հանանայ էր :

ները, և սկզբնական բնագիրը ջանացած եմ վերտակագմել վարիանթներուն լրաւգոյնները գործածելով։ Ընդօրինակիչներու կողմէ աղաւաղեալ բառերը և ուղղագրութեան սխալները ուղղած եմ՝ նշանակելով ծանօթութեանց մէջ բնագրին պարունակած ձեւը, — բաց ի շատ աննշան մանրամասնութիւններէ։

Նստէք ի մէջիս, հարը և եղբարբ<sup>1</sup> տաղը, զոր Պ. Կ. Կոստանեանց հրատարակած է իր „Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը“ հատորին մէջ, ապա հօգապէս Նաղաշ Յովեաթանի գործն է և ո՞չ Մկրտչնը, ինչպէս Պ. Կոստանեանց ինքն ալ հնթագրաբար նկատել տուած է։ ԽԶ. տաղը (Յորժան եղեւ զարուն արեւ ծագեցաւ) զոր „Քնար Հայկական“ և „Ասիակ Հայաստանի“ հրատարակած են իւր զործ Ըդամ Նաղաշօֆի, անտարակուսելի կերպով Նաղաշ Յովեաթանին է։ տուեներուն սկզբնատառերը Յովեաթան անունը կը ձեւացնեն, ու Վիհեննայի թ. 369 ձեռագիրը այդ տաղին իւր վերնագիր ունի՝ „Տաղ Նաղաշ Յովեաթանի“, իսկ Վիհեննայի թիւ 647 ձեռագիրը, որ նմանապէս այդ կտորը կը պարունակէ, ունի իւր վերնագիր՝ „Տաղ ուրախութեան սեղանոյ ի Նաղաշ Յովեաթանէ ասացեալ“։

\* \* \*

Յովեաթանի բանաստեղծութիւնները կը բաղկանան երեք շաբքէ, կրօնական ու խրատական տաղեր, երգիծական քերթուածներ և սիրոյ ու խրախանքի երգեր։

Կրօնական տաղերը սակաւաթիւ են, երկու տաղ (գրաբար) Աստուածածինը օրհնաբանող, բաւական կոկիկ գրուած, առանց ու և է ինքնատպութեան, ու „Խրատ պիտանի վասն Հոգւոյ“ տիտղոսով քերթուած մը՝ աշխարհաբար, որ, իր ժաղովրդական համեզ պատկերացից ոճով, բնական շնորհալի գնացքով, տիրող զգացմանը քնքութեամբ, տաղաչափութեանը ճարտարութեամբ՝ Հայոց խրատական բանաստեղծութեան ամենէն աղւորէցիրէն մէկն է։

Սողոմոն թագաւոր և Աղեքանղըր,

Հմիլ ուր է մեծ մարդ քանց նորա ծանտըր . . .

(1) Վիհեննայի Միթրարեանց թիւ 537 ձեռագիր բնօրինակուած է նախ տան 1748. թ. 412ր՝ 1765, թ. 15ր՝ 1758 և յաշոր տարիներ. թ. 493ր՝ 1802 և յաշոր տարիներ. թ. 514ր՝ 1792 և յաշոր տարիներ. թ. 369ր՝ 1738—1746. թ. 647ր, բուական անյայ, հուանականարար՝ մէջ դարւուն։ Վենեսէլի Միթրարեանց թ. 470 ձեռագիրը կը պարունակէ միայն երկու կտոր Նաղաշ Յովեաթանէ. Էջմիածնայ թ. 604 ձեռագիրը կը պարունակէ միայն մէկ կտոր։

Զըտարան աշխարհէս մըկ հիլալ սանտըր .

Զանք արա՛, ժառանգէ՛ երկնից չարպաղնն :

Երգիծական կտորները տասնէն աւելի են . ասոնց մէջ կան մէկ քանիւներ . այնքան կոպիտ ու անչամ (հաւանականաբար՝ ժամանցի համար թեթեւօրէն գրուած) որ աւելըրդ համարեցոյ հրատարակել զանոնք , նկատելով որ այդ այնքան երկար որբան գուեհիկ կտորները բանաստեղծին աւելի վասար են քան ո և է հրապար աւելցնել իր գործին : Բայց այդ շարքին այն էջերը զոր հրատարակած եմ՝ արժեքք զուրկ չեն , ցոյց կուտան սրամնութիւն մը՝ որ՝ գեղջուկ ու պարզուկ , բայց համեղ է և մերժ ուժեղ ու կծու : „Ի վերայ կատուին և մկանց “ը , „Տաղ ի վերայ մածունի՞ն , „Գովասանութիւն երևանայ քաղաքին “ը , և մանաւանդ „Վալք հաւասար Մանեթերին “ը , տգէտ , աղտոտ , կոպիտ , կոռուպտն փոքրաւորներու խայթիչ հեգնանկար , շահեկան են՝ ու կրնան նկատուիլ հայ նոր երգիծական բանաստեղծութեան նախափարձերը , Արովիանէն իսկ առաջ :

Երրորդ շարքը , սիրոյ , Խրախճանկի երգեր , բնութեան զովքեր , տօնական տաղեր , ամենասառուար ու լաւագոյն մասն է Նաղաշ Յովիաթանի գործին :

Յովիաթանի բանաստեղծութիւնը չի կրնար Քուշակինին հետ բաղդատուիլ : Չունի անոր շափ ցեղային ինքնատպութիւն . Սայեաթ-Նովայի պէս՝ Յովիաթան ալ տոգորուած է պարսիկ ու թուրք բանաստեղծութեան ազգեցութեամբ . և որքան ալ խորին մէջ հայկական շեշտն զգալի ըլլայ , իր ձեին մէջ մահմեատական գեղեցկագիտութենէն շատ տարրեր կը մտնեն : Յովիաթան չունի նաև Քուշակի ներշնչման այլազանութիւնը , գաղափարներու նորութիւնը և ճոխութիւնը , ոճի գերագոյն սեղմութիւնն ու նրբութիւնը , զգացման ներուժութիւնը , բացարութեան չքնաղ գիւտերը : Բայց կը հաւասարի Սայեաթ-Նովային . թէպէտ և խառնուածքները տարբեր են այդ երկութիւն մէջ : Սայեաթ-Նովա աւելի խոր զգայնութիւն մը կը յայտնէ , ծանր ու խօհոն բան մը կայ իր ներշնչմանը մէջ , անկեղծ տառապանքի շեշտ մը կը զգացուի իր սիրերգին խորը . իր տարիփատենչ սիրուր , ուր ցանկութիւնը չէ միշտ թրթուացողը , այլ մերթ մաքուր քնկուշ զգացում մը , միտիքական ծալքեր ունի , ուր Ասաուծոյ մայլ ստուերը կը տիրապեաէ սիրոյ վարդ ոգիին : Յովիաթանի ներշնչումը աւելի պարզ է . անոր գլխաւոր ազբիւրն է կեանքի հրձուանքը . երջանիկ արեւուախառնուածք մը , որաւն համար կեանքը քաղցր եղած պէտք է ըլլայ և որ իր երախտագիտութիւնը կը յայտնէ կեանքին՝ խանդաղատագին անուշաթիւնով մը երգելով անոր հազըլները որ բնութեան գողտը գեղեցկութեանց ծոցը կը գիթթին : Կը աշխարհայեացքը այն է զոր Ավրատիս ու Խայեամ՝ տարբեր շեշտերով՝ երգեցին . „կեանքը աղոր , բայց վաղանցուկ

է , կ'ըսէ Յովեաթան , պէտք է օգտուիլ անոր ընծայած բոպէական քաղցրութիւններէն , պէտք է վայելել բնութիւնը , կինը և գինին՝ որ՝ բարութեան ու եղբայրութեան չետ՝ կեանքին միակ արժէքը կը ներկայացնեն :

Վայիւըն ոչ զիտես թէ զի՞նչ ծընանի ,  
Մարդոյ կեանքը վայրի ծաղկի նըմանի ,  
Որ այսօր բացեալ՝ վաղիւն անցանի .  
Խըմնք , եղբարք , զինի , մեղ անուշ լինի .  
Առէք՝ խըմնք զինի , բանն Աստուած շնի :

Քնքուշ բարութիւն մը , եղբայրական գորովի շունչ մը կը ծածանի այս զուարթ և անհոգ կենցաղասիրութեան վրայ , ինչպէս լուսընկան՝ ծովուն վրայ քաղցրուէն ծփծփուն .

Եպս ում սըրտի քէն ունի , հաշտութեան ծընայ .  
... Մինակ մի՛ ուտէք , բաժանեցէք , հաւասար նըստէք :  
... Կարմիր զինի խըմնք մեկզմէկի ծօս ,  
Միմեանց տըւէք ծաղիկ վարդ անուշահոս :  
... Այլ եւ խաղաղութեամբ խըմնին է հալալ ,  
Ոչ հարթիլ , ոչ կըսուել և ոչ բարկանալ .  
Պարկեցտութեամբ ըմպել , սիրով զուարձանալ :

Իր սիրերդը դաշն ու թարմ դայլայլն է երջանիկ տարիաւորին , զմայլական պաշտամունքի խունկը որ կը բարձրանայ դէպ ի գեղուհին , փառարանող օրհներդը որ կը թրթուայ սիրոյ ծաղկազարդ խորանին սոքը : Կոյն իսկ երբ կը ճգնի ողբար , այդ սիրերդը զուարթ է ներբնապէս . “Ճեւի համար” են այդ բոլոր տրատունցները . այդ լացերը հեշտութեան են աւելի քան տառապանքի . պազատանքը կը լուսաւորուի ապահով յաղթանակին պայծառ ճաճանչու մովք .

Զալո՛ւմ , ուրա՛խ եմ , ամա՛ն , ամա՛ն , կը դոչէ երգիչն իր տաղերէն մէկուն մէջ , — ինչ որ ցոյց կուտայ որոշապէս թէ իր ողբերը՝ ա՛լ աւելի ուրախու ըլլալու , ա՛լ աւելի սիրուելու և վայելելու տենչ մըն են քան ճշմարիտ տառապանքի ճիչեր :

Յովեաթանի երգերուն մէջ թուրք ու պարսիկ բանաստեղծութեան — մասնաւորապէս ժողովրդականին — ազդեցութիւնը ակներեւ է՝ ինչպէս ըսի . մերթ թրթերէն ու պարսկերէն տողեր , երկուղներ իսկ կան երգերէն ոմանց մէջ . բայց և այնպէս , այդ բանաստեղծութիւնը , թէպէտ մին ամենէն հեշտասէրներէն ու հեթանոսներէն որ մեր մէջ տեսնուած ըլլան , լիտի , կոպիտ ու զուտ տոփական հանգամանք չունի՝ ինչպէս յաձախ՝ մահմետական ժողովրդներու քերթութիւնը , և խորքին մէջ՝ հայ-քրիստոնեայ աշուղի զգայնութիւնը ի յայտ կը բերէ , ու նոյն իսկ ճեւին մէջ՝ թուրք-

պարսիկ փոխառիկ տարբերովը հանդերձ՝ շատ աւելի սերտ կապ ցոյց կուտայ հայ աշուղական հին բանաստեղծութեան հետ քան Սայեաթ-նովայի երգը, որ աւելի անձնական նկարագիր մը կը յայտնէ՝ մահմետական բանաստեղծութենէն առնուած տաղաչափական ու հռետորական ձեւերու մէջ արտափայլող։ Յովլաթանի մէջ կը գտնենք բաւական պատկերներ, գաղափարներ, գարձուածքներ, որ քուչակը կը յիշեցնեն. ահա քանի մը օրինակներ.

Նըռներդ հող կու զառնայ, է՛ր պինդ կու պահես,

Թող համբուրեմ օրհնեմ՝ հոգով զարդարվես :

(Յ-Հ-Շ-Շ-Ն)

Այդ ձերմակդ որ դուն ունիս, ըզշամամ ծիծերդ որ ի ներս,

Մեռնիս այլ անդին երթաս՝ զայդ ձերմակ ծոցիկդ ի՞նչ առնես.

Զամենըն որդերն ուտեն, դու է՛ր զիս ճահրում կու պահես :

(Ք-Ա-Ն-Ե-Ւ)

Զերդ ձուկըն ջըրէն զուրս կուզամ տապակ :

(Յ-Հ-Շ-Շ-Ն)

Ես ձուկ ու դու ջուր, հո՛գի. առանց ջուր՝ ձուկըն մեռնի :

(Ք-Ա-Ն-Ե-Ւ)

Ինձ կարօտ մի՛ թողուկ, նազու սիրակա՞ն,

Կու մեռնիմ, կու մընաս դու ինձ պարտական :

(Յ-Հ-Շ-Շ-Ն)

Ասցին թէ դու դեղ ունիս, տուր ինձի որ կենդանանամ,

Թէ չէ կու մեռնիմ զընամ, զան ասեն քեզ ճարդասպա՞ն :

(Ք-Ա-Ն-Ե-Ւ)

Գիեի պիտի, ոչ խըմում ես, ոչ բերում ես :

(Յ-Հ-Շ-Շ-Ն)

Զարախն ալ ափին ունի, ոչ խըմէ ոչ տայ խըմելու :

(Ք-Ա-Ն-Ե-Ւ)

Քեզ ո՞նց թողեմ, ո՞նց հեռանամ, ո՞նց մոռանամ :

(Յ-Հ-Շ-Շ-Ն)

Առանց քեզ ես ո՞նց ապրիմ կամ իմ աչերլա տանի քուն :

(Ք-Ա-Ն-Ե-Ւ)

Լեզուի տեսակէտով, Յովլաթան շատ տարբեր է Սայեաթ-նովայէն :

Յովլաթանի լեզուն խառնուրդ մըն է արեւելեան և արեւմտեան

հայերէնի, գրաբարի զարդերով բարդացած, հին աշուղական բանաստեղ-

ծութեան ասութիւններով ու բառերով ձոխացած. Սայեաթ-նովայի լեզուն

պարզ է, միատարր, թիֆլիսի Հայոց տեղական բարբառն է՝ անխառն :

Գալով տաղաչափութեան, ձեւերը զոր կը գործածէ Յովլաթան .

նուազ փոխառիկ, աւելի ինքնատիպ և ազատ կը թուին քան Սայեաթ-Նովա-  
յինները, որոնք արաբ-պարսիկ տաղաչափական բարդ ձեւերուն վրայ  
կաղապարուած են: Յովեաթանի տաղաչափական ձեւերը աւելի պարզ են՝  
սիրերգներուն մէջ մանաւանդ: սովորական «երգ»ի տաղաչափութիւնն է,  
ընդհանրապէս քառասող տաներու բաժնուած, յաճախ յանկերգով, որ  
մերթ չորրորդ տողն է, մերթ զատ տող մը կամ երկող մըն է որ  
կ'աւելնայ քառատողին: Տողերուն վանկերն են 7 (առանց հատածի),  
8 (առանց հատածի), 11 (6-5), 9 (5-4 և մերթ առանց հատածի),  
11 (4-4-3 և մերթ առանց հատածի), 15 (7-8 և մերթ 8-7, մերթ  
առանց հատածի). Կարգ մը աւելի երկայն տողերով տաղերու մէջ՝  
(ինչպէս Ժ. տաղը) տողը տասնվեց վանկ ունի՝ առանց որոշ հատածի:  
Վան ալ տաղեր, որոշ հատածներու բաժանմամբ, ուր կը գտնենք տողեր՝  
անկանոն՝ օրինակչի աղաւազման հետեւանքով: Մերթ՝ այլ և այլ վարի-  
անժներէ օգտուելով, կամ երր շատ դիւրին էր գուշակել պակած բառը,  
լրացուցած եմ տողը. բայց յաճախ թողած եմ նոյնութեամբ, քմահած  
փոփոխութիւններ չաւելցնելու համար:

Ներդաշնակութեան զգացումը շատ խոր ու փափուկ է Յովեաթանի  
մօտ (ինչպէս և Սայեաթ-Նովային, ինչպէս մեր հին աշուղներուն մեծ  
մասին ու մանաւանդ անման քուշակին մօտ): Այդ տեսակէտով, մեր նոր  
բանաստեղծները շատ բան ունին սորվելու մեր հին աշուղներէն: Բառերը  
ընտրուած ու գասաւորուած են երաժշտականութիւն յառաջ բերելու ակնե-  
րեւ ու գրեթէ միշտ զմայլելիօրէն յաջողած դիտումով մը. նկատելի է որ  
մեր լեզուին երկայն ու ծանր խժալուր բաղաձայններով խճողուած կարգ  
մը բառերը վտարուած են ընդհանրապէս այդ երգերէն. կը սիրեն հոն  
քաղցրահնչիւն. կարճ ու սահուն բառերը, ձայնաւորներով լեցուն. ու  
պարսիկ, արաբ բառերը, այնքան երգեցիկ ու նուրբ. զոր Յովեաթան  
լրաբուռն կը գործածէ. քիչ չեն նպաստեր իր տաղերուն երաժշտականու-  
թիւնն աւելցնելու. բառերուն գասաւորումն ալ մեծ ձաշակով, կիրթ ական-  
ջով է կատարուած. գրեթէ բոլոր տողերը կը թաւային հանդարտ, թեթեւ,  
անգայթ.

Աչքերդ այնախանա, ոսկեղէն սուր այ.

Սիահ արտեւանումբդ կապած է թուրայ.

Քու սերըն կըրակ է, իմ սիրաբն՝ քուրայ.

Դու իմ խելքըս տարար, ես չունիմ դարար:

Ունքերը է հիւալ, վարսերը լալայ.

Ես քու սիրուղ կուլամ, կու կանչեմ նալայ.

Մեր մէջի թշնամին անկանի բալայ.

Դու իմ խելքըս տարար, ես չունիմ դարար:

Ա 3840  
Լեզուի քաղցրախօս՝ հազարամ բըլբուլն .

Մէկ ձեռնիդ զինւոյ թաս, մէկ ձեռնիդ սըմբուլն .

Երեսիդ խալերն կապած սիահ գուլն .


Դու իմ խելքը տարար, ես չունիմ զարար :

ՈՃը, թէ՛ Յովեաթանին և թէ՛ Սայեաթ-Նովային մէջ, փափուկ է և նուրբ . — ի նկատի ունենալով անշուշտ՝ լաւագոյն կտորները . Սայեաթ-Նովայինը՝ աւելի ծանր, խոր ու վեհ, Յովեաթանինը՝ աւելի թեթեւ, չնորհալի, ոստոստուն, լուսաւոր : Ճաշակելու համար Յովեաթանի ոճին հրապոյրը, անհրաժեշտ է նախ ընտրութիւն մմընել իր տաղերուն մէջ, որոնք անհաւասար են . թոյլ մասեր չեն պակսիր հոն, մերթ՝ աշուղական քլիշէներ յեղյեղուած, անկապակից, առանց ոգեւորող անկեղծ ներշնչման . այդ տկար կտորներուն մէջ կը գտնենք նաեւ մերթ գուհշկութիւններ, մերթ՝ տիրացուական տարրի մը խառնուրդը : Այդ տաղերուն մէջը կան սակայն առնոււազն 15-20 հատ, քանի մը երգիծական հատուրապէս „Յորժամ եղեւ գարուն, արեւ ծագեցաւ” զմայլելի երգը, և „Հայոց Զատիկին” զուարթաչող զարնանաբոյր տաղը, և մանաւանդ կարդ մը սիրերգներ, թարմ, գունագեղ, գողտը զգացումով մը լեցուն, ինչպէս ի միջի այլոց՝ „Նոր ծաղկեցաւ այգին, եկել է գարուն”, „Եկ գընանք պաղչէն նըստեմք չորս բոլորն շարած վարդի”, „Նազելի ծաղիկ, տամ քեզի բարեւ”, „Գովկելի ծաղիկ ես գու ի մէջ ծաղկանցըն վարդ թաջիսար”, „Ամեն առաւօտ կուգաս ծաղկներով”, „Աւստի” կուգաս, քաղցըր բըլբուլ”, „Լուսի նըման պայծառ երես բոլորած”, „Առաւօտուց մէկ մի տեսայ զարդարած”, „Ասել ես թէ գարնան վախիթը”, ևն . որոնք իրական և ինքնայատուկ արժէք ունին և սահմանուած են տեւական կեանքի մը :

Տեսէք, օրինակի համար, վերոյիշեալ տաղերուն մէջէն՝ հետեւեալը, էն ազւոր սիրերգներէն մին Հայոց բանաստեղծութեան .

~~Յան~~ Յանաւօտ կուգաս ծաղկներով,  
Երեսօբդ նըման շէմսի զամարայ,  
Մով աչքերդ լըցած անզին քարերով,  
Ունքերըդ վրայ կապած հրեղէն կամար այ :

Լուսինն ամէն օր երեսդ կու նորի .  
Քեզ տեսնողին խելքն ի՞նչպէս բոլորի .  
Քո ծոյըն պալչայ նըրան խընծորի ,  
Պինդ կու պահես աշացն, էդ ում համար այ :



Երթունքը բարակ է, կարմիր ու փայլուն,  
Տեսնողն խեւ կ'ելնի և սիրողն արին.  
Երբոր բարով համնիմք շնորհազարդ զարուն,  
Ես էլ չեմ հաճրերել՝ կ'ելնեմ աւարայ:

Ճամապարհղ կու նայիմ՝ տեսնեմ երբ կու դաս,  
Մածուկ ծիծաղելով ինձ բարեւ կու տաս.  
Հայի՛ որ թնամոյն շուտ կու հաւատաս.  
Ես կուլամ, զու ուրախ՝ նըստիր դա՛մ արա:

Այս հասրնատիր սիրերգներէն իւրաքանչիւրը՝ բաժակ մը ազնիւ  
գինիի բուրումն ու տարութիւնը կը շնորհէ ընթեցողին, կամ՝ ցօղա-  
թուրմ քնկշութիւնը դաշտէն նոր փրցուած խուրձ մը ծաղկի: Եւ ատի  
աւելի քան բաւական է որպէս զի մենէ մէկը փութար այդ սիրուն տա-  
զերն ու զանոնք հիւսող երգչին անունը լոյս արեւ հանել անարդար  
մռացումի մը խաւարէն:



Բ.

## ՅՈՎՆԱԹԱՆ ՅՈՎՆԱԹԱՆԵԱՆ ՆԿԱՐԻԶԸ

Ինձ ծանօթ երկու աղբիւր կայ միայն՝ այս անձնաւորութեան վրայ  
կենսագրական աեղեկութիւն տուող, այն է Ծահիսաթունեանի գործին մէկ  
հակիրճ հատուածը և Արարատի մէջ հրատարակուած դիւանական գրու-  
թիւնը: Ինչ որ կը զանենք ատոնց մէջ Յովինաթան նկարչի մասին՝ շատ  
քիչ բան է. ծննդեան թուականը յայտնի չէ, ոչ ալ մահուան. ծնած է  
ինքն ալ՝ իր հօր ու պապուն բնափայրը՝ Ծուօթ, որովհետեւ ինքն եւս  
ըստ դիւանական գրութեան՝ կը կոչուի „Ծուօթեցի“: բայց ո՞րտեղ ուսած  
է, կովկասէն դուրս ուղեւորած է՝ իր պապուն պէս. չենք զիտեր:  
Ծահիսաթունեանի հատուածը շատ լակոնական է. ահաւասիկ.

„ (Պուկաս կաթողիկոս) նորոգել ետ ըստ բոլորին և դմէջ սրբոյ Տա-  
ճարիս՝ զորմունս և զառաստաղն բազմատեսակ գեղեցիկ նկարուք խորհր-  
դաւոր պատկերոք ի ձեռն հանձարաւոր արհեստագէտ նկարչին Յովինա-  
թանու, որոյ յիշատակարան արձանագրութեանն զնի ի շրջապատ հիման  
մեծի կաթողիկէին, ի ներքոյ արձանագրութեանն Համատանցի Աստուա-  
ծատուր կաթողիկոսի, յայս օրինակ.



Տրդաս, Աշխեն և Խուրովիդուխ  
(Միմաններ, Քանդարանին մէջ պահուած)



« Ի բուիմ (Հարյ) ԱՄԵԼԵ (1786) շնորհիւն Աստվծոյ Տեր Ղուկաս կարողիկոս վերսին նորոգել եռու զիսահևեալ զերկուս սիւնս սրբոյ Տաճարին, ապս եւ զրոյոր մէջո սորին՝ որ անշացեալ էր, նորապէս բռեալ ծաղկեցոցի հանդերձ խորհրդաւոր սատկերօց՝ իւն զոյիւն ստացելովի՛ ի յօննեալ ժողովրդոց մարց, ի յիշատակ ինձ եւ իմոցն, ի վայելս ազգի Հայոց եւ միարանից սրբոյ Արքուոյ։ Արդ, խնդրեալ ի վայելողաց յիշել զիս յարժանանայց յաջորս ձեր առ Աստված՝ յումն եւ դուք յիշեալ լիշիք, ամէն։ »

Վ.յա հատուածին մեծագոյն արժէքը այն է որ թուական մը կուտայ, էջմիածնայ Տաճարին ներքին վերանորոգման թուականը, 1786, որով և Յովամաթան նկարչին ո՞ր ատեն ապրած ըլլալուն մասին մօտաւոր ծանօթութիւնն մը կ'ունենանք։

Գրւանական գրութիւնը աւելի հարուստ է մանրամասնութիւններով։ Եւյդ գրութիւնը, մեծապէս շահնեկան է՝ ոչ միայն իր տուած բազմադիմի տեղեկութիւններովը Տաճարին վերանորոգման մասին, այլ և իր արևելքան յորդահոս, ճոխերանգ, պերճափառ օճափը՝ զօր չի յաջողիք խանգարել իր գրաբարին բաւական մաքուր մեծավայելչութիւնը մերթ ընդ մերթ ծակծկող օսար բառերուն զաւեշտականութիւնը։ Գրութեան առաջին մասը կը զծէ նկարագիրն ու կեանկը՝ կաթողիկոսացումէն առաջ ու յետոյ Արմէոն մեծագործ կաթողիկոսին արժանաւոր յաջորդն եղող այդ պատուական Ղուկաս Հայրապետին, «յյր գերահանձար և նրանկատ, խոնարհամիտ և հեղարարոյ, բարեկարգութեանց և սրբութեանց կրոնից սիրող հօգոր, վրէժինդիր և կարգաւորիչ առ յանցաւորս իւր յայժ անցիշաշար և համբերող, և քաղցրաբանութեամբ և սիրով և հոգեւոր իրատիւք ուղղիչ, և առ կարօտեալս և չքաւորս ողորմած և զժամագունեղ, և հարկաւոր պահասութեանց նոցին լցուցիչ և սրտագիւրիչ, և ստորագրեցելոց իւրոց ըստ իւրաքանչիւր չափու և աստիճանի շահող և միմիթարիչ թէ՛ ի բանս, թէ՛ ի գործս և թէ՛ յարդիւնս, և ըստ ամենայնի միարանասէր՝ Զեմ ուզեր ծանրանալ այդ առաջնն մասին վրայ, որ կարեւոր է իր Մայր-Աթոռի պատութեան մէկ էջը լուսաւորող վաւերագիր, և կ'անցնիմ երկրորդ մասին, որ նիւթիս հետ ուղղակի կապ ունի։ Գրութիւնը կը յիշատակէ նախ՝ վերանորոգումները զոր Ղուկասէն առաջ Աստուածատուր (օծուած 1715, մեռած 1725) և Արմէոն (օծուած 1763, մեռած՝ 1780) կաթողիկոսները կատարած էին, որոնք սակայն պակասաւոր ըլլալով՝ խախտուիլ ու քայլայուիլ սկսած էին։

« Թէզիշտ յաւուրս Տեառն Աստուածատոյ հոգելոյս Հայրապետին, և ի ժամանակս նախալրդովճանն կալուածոցն զլլպաշից թագաւորաց, ի մէջ առ-

տուածեան տաճարիս շինեցան բոլոր ճարմարոնեայ հրաշակերտ շինուածքն եւ ծաղկեցան , եւ չորեցեան խախտեալ սխմբն նորոգեցան , եւ տանիքն եւ յատակն սալեցան , եւ մեջն սրբոյ տաճարիս բռամք ոպիտակեցան եւ պատկերազրեցան ի տեղիս տեղիս , եւ անհեթեթ ծաղկեցան հոգաբարձութեամբ նոյն հոգերոյ Ցեան Աստուածատրոյ Հայրապետին ի Ռո՞ԴՌ թուին որպէս զրի ի պատմոթիւնս նորին երանելոյ , ի գաւազանազրի ասա . սակայն 60 եւ այլ աւելի աճք մեցանելով , յայբան միջոցում սրբոյ տաճարի տանեաց բոլոր սալբն եւ քարինըն մաշեցեալիք եւ քայլայեալիք էին եւ տեղի տուեալ մտից անձեւեաց , եւ ի հոսիլ յորդաբուզս անձեւեաց եւ հեղեղաց խայն ի ներբռ մտանելով , զբաժեկիս եւ զմակունսն զիշացուցանելով եւ եղծանելով ի վայր թափէին , այնքան մինչ զի ի տեղիս տեղիս ի կաթիլ անձեւեաց յորդապոնից ի յատակս եկեղեցւոյն զանօթու սղութեանս զնէին ի պարապութիւն անձեւեաջուրց (զոր աչօք մերօք տեսօք) : Զայտ տեսանելով Ցեան Արմեոնի հոգելոյս կաթողիկոսի ճնաղի մերոյ , նախապէս մեծածախս զրամագնացութեամբ զբոլոր տանիսն սրբոյ տաճարին զիւրանար մերենայիւր (այսինքն զգերան մի պնդապէս ի վերայ տանեացն իբրև զշարիս աճրացուցանելով , եւ զբառանկիւնի փոկակապ թաթ մի ի ծայր գերանոյն կախելով ձախարակաւ , եւ զտուա փակին կամ պարանոցն ի լուծ երկուց եղանց կապէին եւ ուզդակի զեղինան քշող մի հանդէպ զերանին վարէր , եւ թաթ կշացն ելանելով եւ իջանելով զննադոյն քարինսն ի վայր բերէր , եւ զնոր քարինսն ի վեր տանիւր) եւս խարտեալ քարամբրք եւ կրամածիւր աճրապէս սալիլ ես . նաեւ զերկոսին ձախակարձան զասուց առաջն եւ յետին խախտեալ սինսն մինչեւ ի վերին կամարան հաստատապէս վերանորոգել ետ ի ձեռն քաջավարդ ճարտարապետի Սահակ կոչեցելոյ . եւ մինչ կամեր երանելին զմնացեալսն եւս նորոգել , անյաջողութիւնը եւ պէս պէս նեղութիւնը , եւ ճանաւանդ ճանրագոյն վլշտը եւ հիւանդութիւնը վերամաճանեալ արգելին , եւ վերջապէս վասն օրհասին կանխելոյ չուեաց առ ճշտաբազմալին իւր Քրիստոս . եւ խորհուրդն մնաց անկատար ։

Պուէկաս կը ցանկայ ամուր , տեւական , կատարեալ ու շքեղ վերանորոգման մը ձեւնարկել . քակել կուտայ բոլոր նախկին հինցած , աւրուած , խաթարուած ներքնազարդք , և ամրողջապէս կը նորազգեստէ Տաճարը , ատօր համար լիաբուռն յատկացնելով գումարներ զոր ամրարած էր ժողովրդական տուրքերով ու նուիրատուութիւններով , ու նաեւ բերել տալով լաւագոյն նիւթեղէնները և ամենէն նշանաւոր ու կարող արուեստագէտները , և ինքն իսկ՝ իբր ճաշակաւոր բանգէտ մարդ՝ անձամբ հսկելով , զեկավարելով , գործակցելով այդ վերաշինութեան : Կանք հոս զիւրանար կատարեալ .

« Իսկ ի յաջորդեն զինի նորին հոգելնստիր Հայրապետիս մերոյ Ցեան Կուկասու սրբազն Կաթողիկոսին , Աստուծով սկսաւ նա զմիրտ Զորաբարէլի

ստանալ, և առատատենչ սիրով վառել ի սէր և ի շինութիւն և ի վերանորոգութիւն սրբոյ Քրիստոսահիմն տաճարին . ձեռնարկեալ նախապէս զմացիալ զերկութիւն խախտեցիալ և բեկելիեալ սիւնան աջակողման դասուն, որ երկոքին կաթուղիկոսարանը են, շինեցուցանել ի հիմանց անտի և նորոգել հանդերձ իւրեանց քառակուսի վերնակամարօքն, մեծամեծ և անփոսկի ընտիր ընտիր քարամբր կարմրագունիւր բառապէս կոփակուկ տաշեցելովք . ձիթաշաղախ և պնդակազմ լոկոնիւր աճրապահ և հաստանեղոյս երկաթեայ կապիչս բացում զետեղելով ի մէջ սեանց առ ի ընտանել զբարին ընդ միմանս, և կրամաճիւր պնդել և քառակուսի հաւասարաշափ ճակատիւր զարդարել ի հիմացումն տեսողաց . և այսորիկ ձեռամբ քաջարհետ ճարտարապետի Գասպար կոչեցելոց . Գիտելի է և այս, զի զչորեսին սիւնան Աստուածեան տաճարին թէպէտ ի հիմանէ շինել զբեցար, որպէս և է իսկ՝ որբան առ շրջապատ քարինսն, որը բեկելիեալ և փոշիացեալ իսկ էին, բայց չնորդիւն ճարդաս ճարտարապետին Քրիստոսի, և աղօթիւր սրբոյ Լուսաւորչին մերոյ՝ հոծախիստ և թանձրախտուն խճողն (որ է լուըլսատումն) կարի աճրագոյն և պնդակազմ էր, մինչ զի յօժարակամ եթէ ճորժ կամ ուռն և կամ երկաթեայ զործիւր հովիւր վասն սերտութեան և աճրողջութեան զձայնս արձակեր, և տեսողըն զարձացեալը զփառս տային պահպանողին Աստուծոյ:

« Եւ յես երկուց սեսմցն խրակերակի՝ սկսաւ զբոյոր եկեղեցւոյ վերնակուոյց կամարաց և կամարամիջաց և սեանց և այլ շրջապատ որմոց եղծեալ և ապախմտեալ և ի մոխիր զարձեալ հնագոյն բռածեփան, այսինքն գաճսն, խորաքակել տալ, և ո՛չ թողուլ հշմարանը ինչ հնագոյն զաճից և եղծեալ անհեթեթ ծաղկանշից, սկսալ ի մեծ կամուղիկէի գմբէթամեթջ կերպոնեւն մինչեւ ի սուրբին յատակն եկեղեցւոյն՝ հանգերձ ամենայն խորանօք և բնմիւրն, բայց միայն զբանի մի հնագոյն պատկերն մնացին . զայնս ևս ի բաց առին ի տեղեացն առ ի վերանորոգել: Երդ՝ մինչ զբոյոր եկեղեցւոյ որմոց և առաստաղաց և չորեսին սեանց և կամարաց բռածեփան, այսինքն սիխազն, սկսան վարպետքն բակել, յայնժամ երեւեցան ի վաղնջուց ժամանակաց բակեցեալ տեղիքն և հնագոյն բեկեթեկեալ և ջախչախեալ բարինքն և երկիւզափի փառութիւնքն, ժամանական ի յատին դասոց երկոքին կամարըն, որը խսպառ փշրեցեալը էին, և մեծամեծ քարինքն ի տեղեաց իւրեանց ի բաց սասեցեալը, զորս ի բակեն մեծ ճարտարապետին զարհուրեալ վասն երկիւզի մահուան՝ զլուսալուր Մարկոս եպիկուզան առ սրբազանն էր յդեալ, առ ի ծանուցանել նմա զիտանգաւորութիւն կամարացն, զի մեծ կաթողիկէի գմբէթն ի վերայ այնց չորից կամարացն էր շինեցեալ, յորոյ ծանրութիւնն էին բեկառեալք, իբրև լուս սրբազանն (զերկիւզափի և) զարտաճառիթ լուրն զայն, ինքնին յարուցեալ զնաց ի տաճարն . և եկեալ ի զլուսի սանդղոյն և ետև զերկիւզափ աեղիսն, իւրով աստուածազեղեցիկ հանձրառովն զզիւրագոյն հնար իմն եցոյց ճարտարապետին առ ի զիւրաբանչիւր քարինսն փայտիւր և այլ մերենացիւր նախապանդել, և միակ միակ զփշրեալ քարինսն բեկոտեալ հանել, և ի տեղին

զնոր պնդագոյն և ընտիր ընտիր կամարաքարինս շարել լոկոնիւր և երկաթապէս առնել . նմանապէս և զայլ տեղին , որք ի ժամանակս Տեսան Աստուածատրոյ Հայրապետին , ի վերանորոգելն զմշջ եկեղեցւոյն , փասն վրավճանց և պատերազմացն որ ի մշջ Պարսից և Տաճկաց՝ յայնմ սասանման և յերկիւղալի ժամանակին անձեռնահաս լեալ ի շրջապատս սեանց և այլ որմոց՝ ի տեղի բարանց . ի վաղնջուց բակեցեալ և մաշեցեալ տեղին փայտիւր և վերափուլ կղմնոյերբ էին կարկատեալը և երեսըն բռեալը , որոց զիայտեայ կոտորմ տեսար աչօք մերոյք . այնոքիկ ևս բարամբը շինեցան պնդապէս և ընդ հայն յարձարեցան : Երդ՝ մինչ այսպէս տաճանակիր աշխատութեածք զամենայն քարեղեն բիկենեկալ տեղին և զննագոյն խախտեալուն նորոգել ես , ապա այնուհետև զքաջա՞նուտ բռածեփ , այսինքն զգաճպազ փարսիս բերել ես , և զաստուածակերս տաճարս բոլորապէս ի յատակէ որմոց մինչև ցմիջակէան մեծ գծելին հանդերձ բոլոր կամարօք և կամարամիջօք սեամբը և խորանօք արձաթափայլ սպիտակութեամբ բռածեփս առնել ես :

\* Արդ՝ մինչ նորոգեցան խախտեցեալ սինք և կամարը և այլ հութիւնն որբոյ Աստուածեան տաճարին և բռածեփ եղեալ ձիւսափայլ և արծաթանիշ սպիտակացան ի ներբուստ անտի բոլորապէս , ապա այնուհետև զգալիարարութեան և զպատկերագրոցնութեան պատրաստութիւնս տեսանելով՝ ի հետաւոր տեղեաց և ի հոյակապ մեծանուն քարաբաց զդրնագոյն , գերանդ երանդ և զսղակն ղեղորայս և զոսկեայ փարազս մարուրս ի յեալստուզ մեռամբ հարազս նուիրակաց արհագունից նախապատրաստել հոգալ և բիրել ես : Եւ ապա ամենայն զովութեանց արձանի և յոյժ անուանի նոովթեցի գեղեցկանկար և քաջավարժ Յովսաթանեան Յովսաթան շնորհալի պատկերանան և ծաղկարար փարաբեմն , որ ի թիվիլ բնակէր , ի ծնծազօր արքայէն Վրաց խորեալ՝ բերել ես ի սուրբ Աթոռս աշակերտոցն հանդերձ , զորս հայրական սիրով և պատուալ մեծաւ ընկալեալ , և զոռճիկս առաստ լիսանութեամբ շնորհեալ , և զպատշաճաւոր յարկս զարդարեալս ի բնակութիւն նոյցա սուեալ՝ հրամայեաց զզանազան և վիսրճրդաւոր օրինակս պէսպէս և գեղեցկատեսիլու ծաղկանց նախանկարել ի անութիւն և ի հաւանումն ինքեան , առ ի ծաղկարդել զորոր Աստուածակառոց և երկնանման տաճարն հրաշալի : Այլ և զգերանս մեծամեծն ստուարս և երկայնաձիգս և զսպատակական նոյնապիսիս ի ճայր փայտից՝ տաճանակիր աշխատութեամբ և զրածավատնութեամբ նախապատրաստեալ էր փասն խիկեալացից և այլ մերենացից ի պէսս նորոգութեան Աստուածեան տաճարին , որովք և նորոգեալ և սպիտակացեալ էր բոլոր եկեղեցին (որպէս և զբեցաք ի վիրոյ) . նոյն յարձարատեսաակ փայտիւր և զերանօքն հրամայեաց խորախանեմ և հնարապէտ հիւսանց մերաց ճարտարաց Պետրոս և Գաբրիէլ կոչեցելոց զտաճարն լուսակիր խիկեալայակապ , մերենայապատ և տախտակաշար առնել , ըստ յարձարութեան և ըստ պատշաճաւորութեան իւրաքանչիւր կամարաց , խորանաց և առաստաղից՝ ի զիւրութիւն և ի ձեռնահա-





Ս. Առեփամնոս  
\*(Մարմարի վրայ նկարուած, Աւազ Սեղանին նակատը)

սութիւն ծաղկարարաց . և այս ո՛չ եթէ մի անդամ , այլ բազում անդամ՝ ըստ պիտոյից և ըստ փափոխման իւրաքանչիւր տեղեաց . և հիւրն մեր քաջալարժ զորով պնդակաղմ յօրինէին . և այնուհետեւ Աստուծով զօրացեալ Յովեաման շնորհալին աներկիւրութեամբ զձեռն ի զործ արկանելով նախապէս զըռասմ կոչեց- եալ օրինակին և նկարագրին ցուցանէր Տեառն մերոց մեծի սիրավառ սրբազնին . և ըստ հաճութեան և հուանութեան նորին տաջեալ ոսկեամանչ փայլմածք և գեղագլէ յօրինմածք , գեղեցիկ և հիւրնալի տեսլամբ ծաղկազարդէր . և ինըն սիրատարի սրբազնն ո՛չ զագարէր յերթեւեկս առնելոց յԱստուածահրաշ տաճարն . և զրեթէ զախ և զձեւ ոսկեփայլ ծաղկանց զանազան զեղպեղեց և խորհրդասոր պատկերաց Աստուածազգեցիկ հանճարովն և նրաննկատ իմաստութեամբն իւրով ինըն յօրինէր ի զարծացւմն տեսազաց , ի ձեռն հանճարեղ խրատուց և պատուի- րանաց իւրաց հանապազրորդականաց , թէ յայնի և թէ ի ծածուկ , — նախապէս զերկստասան լուսակաց և խաչանիշ կամարամիջաց առաստազան և զնոյցն միջածիրան , կէօպէկ և պորտ կոչեցեալ , սկսաւ ոսկեծոց նկարիւր գեղաճաճանչ և բոլորակաձեւ միջակէտս նկարել , հանգոյն ճառագայթարձակ արեգական . և ոսկեայ թիթղամբք , այսինքն եալսուզեաց վարազաւ կապուտակ լէճէրթիւր և այլ պայծառագոյն ծաղկօք՝ զարդարեալ և զանազան ձեռով նկարակերտել , և իւրաքանչիւր կամարակապ առաստազաց միջածիրն ընդ իւր հանճիպակայ միջածիրն , համենատ համագոյզ և միաշափ յօրինեալ , այսինքն՝ աջակողման առաջին դասն ընդ ձափակողման առաջին դասուն , միջին ընդ միջնոյն , և վերջնն ընդ վերջնոյն՝ դոյզ զայդ հանդէպ միմեանց . ոսկեփայլ ճառագայթիւր երկրորդապէս զարսարազամասուց սրբազնատուրը բոլոր խորանն զարդարել ետ սակեզարդ ծաղկամբք վերնակառոց կամարօք , բոլորակաձեւ ոսկեկազմ և գեղա- ճաճանչ միջածիրիւր , սրմովք և առաստազօք , հանդէրձ պայծառափայլ յօրին- մածք՝ հիւրնալի տեսազաց : Երրորդապէս զ12 լուսակառոց և երկնանման աղիւ- կամարաց մշջն և ճակատն և կողմունն , հանդէրձ չօրիւր երինաբերձ սկամածիրն թէ ո՞րպէս ոսկեամոց նշուղիւր և գեղաճաճանչ ճառագայթիւր և պայծառատեսիլ ծաղկօք զանազանիւր զարդարեաց , և ոսկեփայլ զեղեց- կոմիւնամբ հիւրնարաշ յօրինուածով ազճնապաճոյճ պայծառազարդեաց . զուգա- հաւասար իւրաբանչիւր կամարեն և ճակատըն և կողմունքն հանդէպ միմեանց համանման ընկեր առ ընկեր համարազատ իրերաց՝ խորան ընդ խորանաց , ծաղիկ ընդ ծաղկանց . հաշիայը ընդ հաշիայից . և մանաւանդ զըռոր մշջն և զառասապս մեծի լուսակազմ և երկնահանգոյն կաթուղիկէին և բարձրաբերձ զմբէթին ի միջածրէն սկսեալ մինչեւ ցվերնակառոց կամարազլուխսն և անտի սկսեալ մինչեւ ցատորոսն չօրից սեանց , այսինքն ի յատակսն հանդէպ սիւնա- յանկիւնիւրն , թէ ո՞րպէս ընազարասիլ և հիւրնալի յօրինուածովք կերպակերպ խորհրդասոր ձեւօք , նրբասեսիլ զանազան ծաղկօք և ոսկեճաճանչ բոլորակօք , չըեղ և զարմանալի երանդ արփիափայլ փառօք ծաղկազարդեալ վայել-

չացոյց . գայնցանէ : ճանրամասնաբար անհնարին է ծեղ ճառել ասա : Քանդի՝ Աստուածանկար և լուսազարդ տաճարն ըստ Աստուածային տեսլեանն և մօծախորհուրդ գերազանցութեան և խաչանիշ ձեւակերպութեան , թէպէտ որպէս զոխն լուսեղէն և երկնի երկնի ի յերկրի վայելչապէս զեղով հրաշակառոյց յօրինմածք քան զամենայն գեղեցիկս գեղեցիկագոյն է ըստ ներքին և ըստ արտաքին տեսութեան . սակայն նոյնն մինչ ուկենկար պայծառազարկեցաւ , և եւս առաւել որպէս զիրեղէն և զլուսատիպ սիւն գերափայլեցաւ հանդերձ ամենայն առաստաղօք և կամարովք , խորանօք և սեամբք . և շրջապատ ործովք : Այլ և՝ հաւասարաչափ մեանց միջնին խարսխացն յորս ոորք կամարացն են եղեալք , ըստ բարձրութեան չափուց հինգ և կամ վեց կանգնոց ի վերայ շրջապատ բոլոր ործոց որ ի մէջ սրբոյ տաճարին զօտի զոյր հաստատեցեալ , որ ի բարբառս այլազգեաց թախչայ և կամ չխնիբար կոչի , գայն շրջաբոլոր զատին զուտ ուկեայ թիմղամբք և մաքուր լէճուէրդիւք ուկեզօծ ծաղկել ես պայծառափայլ տեսլեամբք . և որոց ի վեր և ի վայր զմեճամնեծ ծառս և ծաղկես վայելչապեղս և վարդափիթիթոս կաղմել հրամայեաց , հանդերձ նոնի ծառավիք կամաչափելիւք մէլիլ կոչեցելովք :

« Այլ և ի ճակասոս չորից լուսակառոյց սեանց ի ներքոյ վեճնախարսխաց բարձրաղիտակաց և միջնախարսխաց սալաթոս կոչեցելոց խրաբանչիւր սեանց քառանկինից չորից ճակասուց զոյր զոյր և միակ միակ զիրաշապեղ պատկերս Տէրունականս և տնօրինականս՝ զերորելից , գրորելից և զառարելոց և զայլ սրբոց , ուկեղարդս և զեղաղէշս խորհրդաւոր և վայելչապէս նկարագրել և շքեղազարդել ես ի վերայ կտաւոց , և ի ճակասոս սեանց և սեղանաց , խորանաց և շրջաբոլոր ործոց և առաստաղաց զեսեղել ես , և զոմանս ի վերայ ործոց պատկերագրեցոյց , զարմանակերտ և հրաշատեսիլ յօրինմածք և ուկեզօծ փայլմածք , ըստ ընդունելութեան եւ ըստ աւանդութեան , ըստ ծխի եւ ըստ վայելչութեան հայաստանեացս ուղղափառ եկեղեցեւոյց , որք մինին ընդ ամէնն թուով իբրև 120 և այլ աւելիք , որք էին պատկերք Տէրունականաց , տնօրինականաց , հրեշտակաց , առաքելոց երկուսասանից , մարգարելից , հայրապետոց , վարդապետոց , ճգնաւորաց , կուսանաց , թագաւորաց , զինուորաց և զերանուչակ ճարտիրոսաց հայկանելուից . զորս ըստ մեծի մասին նոր ի նորոյ ըստ ըզմալի և սիրավառ տենչունացն և ըստ Աստուածազրկեցիկ և նըրանկատ հանճարոյն պատկերագրել և յօրինել ես , և զոմանս որք հնացեալք և անգեղացեալք էին , նորոգեալ պայծառացոյց :

« Այլ և՝ զտեղին իջման Բանին Աստուծոյ և զհրաշակերտ մարմարուեայ զմբէթն որպէս սիւն հրեղէն և խորան լուսեղէն , որ ի կեղրոնի , այսինքն ի միջակիսի Աստուածան տաճարին հրաշակերտեալ է , գայն եւս նոր ի նորոյ վերսատին ներքոյ և արտաքոյ պատկերօք և ուկեզօծ ծաղկօք և երանդ կերանդ զունով շքեղազարդել ես հիանալի տեսուղաց , և արտպէս մինչեւ ցիննի և վեց ամս Աստուածակերտ և երկնանձան տաճարն ի միջակիսէ մեծ զմբէթին սկսեալ

մինչեւ ցստորոտսն սեանց և բոլոր որմոցն հանդերձ խորանօք և սեղանովք , բնմիւը և նոցին աստիճանօք ծաղկազարդեալ և պատկերագրեալ պայծառացոց երկնաբատակ և եղեմասարաս յօրինմածք . նաեւ՝ զղբունան նոյնոյ տաճարին արտաքին կողմամբք հանդերձ առաստաղան մեծի և հրաշակերտի զանգակատանն , որ պէս պէս ծաղկամբք և զանազան կինդանեաց և թռչնոց պատկերօր քանդակագործեցալ և նկարակերտեալ է , զայն զունազոյն գեղսվը ծաղկափայլ շքեղազարդեցոց և նորհրդաւոր պատկերս եւս ի յառաստաղս զրանցն նկարագրել ես , ի վայելչութիւն , ի յուրափառութիւն , ի բերկաստութիւն եւ ի պարճանա ազգին խրոյ Հայոց մեծաց , զոր Տէր Աստուած վայելի տայէ եւ հաստատուն պահնացէ մինչեւ ցմիւն անզամ գալուստն իւր : Յալէ :

« Եյ և ի զարդ և ի պայծառութիւն տնօրինականաց և տէրունականաց տօնից և թափօրաց զամենան խաչվառսն , որը վասն վաղեմի լիներին անպիտանացեալը էին , թէ՛ մեծամեծեցն և թէ՛ փոքրոնքն , զայն նոր ի նորոյ պայծառապէս նկարակերտել և շքեղազարդել և զունազոյն կերպասեօք զարդարել ես ի վայելչութիւն հոգեւոր հանդիսից : »

Այս նկարագրութեան մէջ մասնաւորապէս նշանակելի քանի մը կէտեր կան : Յովեաման գարպետը , կըսէ դիւանագիրը , Թիֆլիս կը բնակեր , և Պուկաս կամոզիկոս Արաց մեծազօր արքայէն՝ կը ինզրէ որ անոր թոյլ տայ գալ աշխատիլ Էջմիածին : Աւրեմն Յովեաման Արաց արքունիքին նկարիչն էր , ինչպէս Սայեամեւոփա՝ Ճիշտ նոյն շրջանին՝ զիսաւոր աշուզը նոյն Ճերակլ Բ. թագաւորին : Այդ գիրքին հասնելու համար , Յովեաման արդէն բազմաթիւ գործեր արտադրած ըլլալու էր թէ՛ Թիֆլիսի մէջ և թէ՛ Կովկասի այլ և այլ տեղուանքը : Արդեօք մնացած են նշխարներ Ճերակլի արքունիքին համար կոմմ այլուր իր յօրինած գործերէն : Պէտք է մնանաւել : Աւրիշ հարց մը . — Յովեաման կուգայ Էջմիածին , ո՞չ միայնակ , այլ աշակերտօքն հանդերձ . Աւրեմն ինչ որ կը մնայ այժմ Էջմիածնայ այդ վերանորոգումէն՝ միմիայն Յովեամանի ձեռակերտը չէ — անկարելի էր արդէն որ միակ անձ մը այդ վիմիարի գործը ինքնին զլուսի հաներ , — նոյն իսկ քանի մը տարուան մէջ . այլ և անոր մէջ կայ գործակցութիւնը իր աշակերտներուն : Որո՞նք են այն մասերը որ Յովեամանին մատէն են բզիսած , և որո՞նք՝ աշակերտներուն : Կայ նաեւ աս հարցը . Պուկաս ուզած է ամէն բան նորոգել . գեղեցիկ ու ամուր շինել , բայց ջնջելով ամէն ինչ որ եղծուած , քայլայուած կամ անձաշակ էր՝ ինի իւղաներկ նկարներէն մէկ քանին պահպանած է , ու որովհետեւ Հնացեալ և անգեղացեալ էին . նորոգեալ պայծառացոցց ” , նոյնպէս և բոլոր հին խաչվառները որ վասն վաղեմի լինելոյն Հնացեալք և անպիտանացեալք էին . թէ մեծամեծքն և թէ փոքրոնքն , զայս նոր ի նորոյ

պայծառապէս նկարակերտել և ըբեղազարդել և գունագոյն կերպասեար զարդարել եաւ:

Այս բոլոր գեղարուեստական գանձերէն՝ ինչ որ այժմ կը մնայ , աւաշ՝ կէսն իսկ չէ: Տաճարը մանող մը՝ այսօր՝ կը կարծէ թէ քիւրաերու արշաւանքի մը վաղորդայնին է որ հօն կը հասնի: Ի՞նչ հոյակաս անսիլ մը ունենալու էր այդ Ամբողջութիւնը՝ դեռ քանզիչ ձեռքը անոր չզպած մեծապանծ, երփնագեղ, գարնանափառ, փթթինազարդ ահազին բուրատան մը՝ պատերն ի վար յաւերժական թարմութեամբ ծագկեւորած, և այդ փանչերուն, դրասանցներուն, ածուներուն, նոճիներուն արանքէն՝ հոս ու հոն՝ պատշաճօրէն ու ներգաշնակօրէն շրջանակեալ՝ պատին իսկ վրայ նկարուած, կամ կուսաներկ՝ որմն ի վար կախուած, էական զէմբերը Արբազան պատմութեան և Հայոց պատմութեան, Մափուն ու Հայկը, Թագէռոն ու Տրդատը, Խսոսաւծածինն ու Հոփիսիմէն, Ալքայէլ Հրեշտակապետը և Վարդան Մամիկոնեանը, Ահարոնեան, որուն կը յայտնէի՝ անցեալ տարի Էջմիածնայ տաճարին իսկ մէջ՝ այդ աւերածութեան ինձ աղդած զայրոյթն ու աշուղթիւնը, համազգաց կը յայտնէր զինքն ինծի, և կ'աւելցնէր թէ ինքը՝ Գէորգեան Ճեմարանի աշակերտ՝ միշտ խորին ու քաղցր տուաւորութիւն մը կրած էր ի տես այդ Քրիստոնէութեան ու Հայութեան մեծ զէմբերուն որ Տաճարին որմերուն ծաղկապակ պուրակներուն մէջէն իր նորազարթ հոգիին կը խօսէին: Մկրտիչ կամթողիկոսին մէկ անհականարի քմայքը, — և ատօր շգիմաղրոտ Միարանութեան ալ աններելի թուլութիւնը — աւրշտիած, մեծ մասամբ վճացուցած են այդ գեղարուեստական աննման ամրողչութիւնը: Որմնազարդերուն ամենասառաւր մասը քանդուած է, ինչպէս և որմնանկար զէմբերը՝ քանզիկ յետոյ, և ոչ իսկ այդ հատակաստրները թանգարանին մէջ պահպանել ուզած է Խրիմեան, միարաններէն ամանք՝ իրմէ գաղանի՝ ցանկարգ պահպանել զանոնք, Խրիմեան իմացած է զայդ, և զործաւորներ զրկելով թաքրստոցը՝ փշուր բնել տուած է այդ կառուները: Կորուստ ազատ կը մնան՝ բաց ի Տաճարին զմբէմէն և մէկ քանի վերին մասերէն՝ որ Փեթերպուրի Հնագիտական Ընկերութեան գայթակզած միշտամառութեան շնորհիւ փրկուած են, երեք փորբիկ նշխարները զարդանկարներու, զլուի մը՝ որ Ա Մինասինը կը կարծուի, և Տրդատ, Խշիւն ու Խոսրավիկուխտ ծնրազիր աղմբքին՝ պաշտեի կառըր, զոր միարաններէն ոմանք յաջազած են ճողոզրել քանդողական մուեզնութենէն և այժմ կը զանուին թանգարանը (առանց լուսանկարը կը հրատարակեմ՝ հատորիս մէջ): Խզաներկ նկարներէն, որ 120էն աւելի էին՝ ըստ զիւանական զրութեան, հազիւ 20-30 համ կայ մնացած. անոնց մեծ մասը ջնջել տուած է Խրիմեան



Առաջնորդ մի  
(Կղար)



կամ չեռաւոր աննշան գիւղերու եկեղեցիներ ուղարկած . մէկ մասն ալ՝ տաճարին պահարկաները զրուած , ու մէկ քանին՝ շրջանակէն հանուած , չասարակ առարկաներու պէս՝ պլորուած անկիւն մը նետուած . այդ պլորուածներուն մէջ էր որ զտայ թագակիր Աստուածածնայ նկար մը , Յիսուս մանուկը գիրկը , երկու կողմը երկու սուրբ , — հմայիչ գործ մը հայ սիրիմիմիֆիֆի , ծալծլուած , մաշած , աւրուած՝ այն անխնամ վիճակին պատճառով ուր մնացեր էր . ասոր լուսանկարը ևս կը հրատարակեմ այս հատորին մէջ :

Ինչ որ կը մնայ ուրեմն , հետեւեալներն են . 1<sup>0</sup> Արմենիկար զարդարանքներէն՝ զմրէմը և որմերուն մէկ մասը , և քանի մը հասակուար ու մէկ երկու դիմանկար՝ թանգարանին մէջ . 2<sup>0</sup> Խջման Աղղանին ներքին և արտաքին զարդանկարներն ու պատկերները , որոնց մէջ կայ Աստուածածնին մը Յիսուս գիրկը՝ վերջին ծայր չնորհալի (1) . 3<sup>0</sup> Մուտքի դրան առաստաղին՝ վրայ աւելցուած „Խորհրդաւոր պատկերները“ և զայն ինչպէս և զանգակատունը պնազ ովէս ովէս ծաղկանց , զանազան կենդանեաց և թռչնոց քանդակներուն „Յովինաթանեան հոյլին կողմէ զունազոյն զեղովք ծաղկափառ շքեղազարդումը“ : Քեմին առաջըք՝ երկու սանդուզներուն մէժանդը՝ մարմարակերտ ճակատին վրայ նկարուած՝ Աստուածածնին ու սուրբերու շարբը . 5<sup>0</sup> Խաչքառներ : 6<sup>0</sup> Խաղաներկ նկարներ (ասաներկու ասաքեալք , Գարրիել Հրեշտակապեա , Միքայէլ Հրեշտակապեա , Աւետամ ընդունող Մարիամ , Աւետիսը բերող Հրեշտակը , Մկրտութիւն Քրիստոսի , Կնչումն Ա . Աստուածածնայ , Ա . Հոփիսիմէ , Աստուածածնին՝ Յիսուս գիրկը՝ քովք երկու սուրբ , Աւետամ (կամ Մարիամ Եղիսարեմի մաս ?) , Ընծայումն ի տաճար կամ երկրպագութիւն Առաքուց ? , Ա . Ընթրիք . Յարութիւն Քրիստոսի , Ունիոնայ , Թագէոս Առաքեալ , Քարթուղիմէոս Առաքեալ , Աստուածածն՝ Յիսուս գիրկը , արծաթեայ ճաճանչաւոր շրջանակոյ (2) :

Այս նկարչական բազմաձեւ գործին , ինչպէս և Կաղաջ Յովինաթանի քերթութեան մէջ , զգալի է օտար ազգեցութիւնը : Եւ յիմարութիւն պիտի ըլլար պահանջել այնպիսի շրջանի մը երբ հայ ժողովուրդը , անկամ կեանքէ վաղուց զրկուած , սուրկութեան մէջ մինչեւ վիզը խրած :

(1) Միշտիչ կարողիկար ուղած է Խջման սեղանն ալ նանգել , բայց զէր այլտեղ՝ Միաբանութիւնը կորով ցոյց տուած էր արզիլած է :

(2) Առնցմէ զա՞ զեր . կան բերեւ նանի մը մնացածներ , պլորուած ձեւի տակ , ո եւ է անկիւն մը , ինձ անձանօր : — Կան նաև՝ կցմածնայ տանարին մէջ կարգ մը բոլորովին նոր նկարներ , մեծ մասամբ անարմէ , որոնք ո եւ է կապ չունին Յովինաթանի ներ :

արտադրէր արուեստագէտներ ու բանաստեղծներ՝ զուտ հայկական բացարձակապէս ինքնաստիզ և ինքնաստեղծ ոգւով։ Էտականն այն է որ օտար ազգեցութիւնը, Յովնաթան նկարչին ինչպէս Յովնաթան բանաստեղծն մէջ, սարգօրէն կրուած չէ որ կ'երեւան, այլ իւրացուած, նորոգուած, ճոխացուած՝ հայ խառնուածքի մը մէջէն անցնելով, պատշաճեցուած՝ հայ միջափարին և զգայնութեան, ու յետոյ՝ երկուքին մօտ ևս, ակներեն է գոյութիւնը անձնական որոշ ու ամուր տաղանդի, և տաղանդը միշտ կը կ'երպարանափախէ, կ'անհատականացնէ ո և է արտաքին ազգեցութիւն որուն կ'ենթարկուի։

Յովնաթան նկարչին գործին մէջ կը զգացուի օտար երկու ազգեցութիւններ. — պարսկականը ու իտալականը։ Բայց այս մանրամասնութեանց մանելէ առաջ, նախ պէտք է զբաղիլ սա կարեւոր հարցով. այդ բոլոր գործերը՝ կրնա՞ն Յովնաթանին կամ զէթ իր գորոցին վերագրուիլ։ Դիւնական գրութեան ըստաներուն չետեւելով, կարելի է հաստատական պատասխան տալ այս հարցման։ Բայց գործերը տեսնելէ և անոնցմէ ումանց միջնւ գտնուած ոճի, ճաշակի, գծագրութեան, վրձնի տարբերութիւնները նկատելէ յետոյ, անկարելի է պահպանել այդ հաստատական պատասխանը։ Այս առեղծուածը լուծելու նպաստող տարր մը՝ այն է որ այդ բոլոր արտադրութեանց մէջ ամենէն աւելի անտարակուսելի կերպով Յովնաթանին գործը եղաղը՝ որմնագատեեներոն են, իրենց ընկերացող պատի վրայ յօրինուած զիմանկարներով։ Յովնաթանի բուն արհեստն իսկ էր „Ժաղկարարութիւն“։ որմնանկարչութիւն։ Աւրեմն և միւս գործերուն մէջ հաւանականօրէն պիտի կրնան Յովնաթանին վերագրուիլ անոնք որ արհեստով կը նմանին և կամ կը մօտենան այդ որմնանկարներուն։

Որմնագարդերուն մէջ կը տիրէ պարսիկ ազգեցութիւնը։ Բայց ի՞նչ աղատ, ի՞նչ յաջող ու անձնազրոշմ նմանողութիւն պարսիկ արուեստի, ի՞նչ յանկացից ճախութիւն, ներդաշնակութիւն, ի՞նչ քաղցրութիւն գոյներու հատականութերուն մէջ։ տաղանդաւոր Հայու մը ստեղծագործութիւնն է՝ պարսիկ տարափի մէջ։ Քանի մը հատականութերու լուսանկարչական վերարտագրութիւնը, զոր ընթերցազները պիտի գտնեն այս հատորին մէջ՝ շատ քիչ գտափար կուտայ այդ երփնաձոխ զարդարուեատին վրայ. պէտք է տեսնել։

Որմնագարդերուն մէջ ագուցուած զիմանկարները, որոնցմէ կը մեան միայն Տրդատ, Ըշխեն ու Խոսրովիշուար և Ա. Մինասը, ոչնչ ունին պարսկական. տառոնք գործն են չայ նկարչին որ երդոգական արուեստին ընդհանուր ծանօթութիւն ունի և որ ներշնչուած է մանաւանդ հայկական նին ճեղագիրներու մանրանկարներէն։ Վասնց հետ պէտք է զասուին նաև Աւագ Սեղանին առաջքը՝ մարմարակերտ ճակատին վրայ նկա-

րուած Աստուածածինն ու Առըրբերու շարքը, որոնց մէջ՝ Ա. Փիլիպպոսն ու Ա. Ստեփանոսը զմայլելի են, իջման սեղանը զարդարող նկարները, ու կտակի վրայ իւղաներկ նկարներէն՝ Ննջումն Աստուածածնայ, Թագակիր Աստուածածին՝ Յիսուս գիրկը, երկու քովը մէկ մէկ սուրբեր, Ա. Հոհիսիմէ, Ա. Ընթրիք, Յարութիւն Քրիստոսի, Ատնլուայ, Թագէսս Առաքեալ, Բարթուղիմէսս Առաքեալ. ասոնք բոլորը, ուր եւրոպական (մանաւանդ իտալական) արուեստի տարտամ Նմանողութեան մը հետ շատ միամիտ, զգացուած, արեւելաշունչ, Հայկական նօժ մը կը նկատուի, նոյն վարպետին ձեռքէն եղած կրնան համարուիլ, և կը թուի որ այդ բոլոր նկարներուն մէջ ասոնք են որ ամենէն աւելի Յովնաթանի գործը պէտք է ըլլան (1): Միւսները ոճոյ, շինուածքով, արուեստով զգալապէս տարբեր են, աւելի կանոնաւոր, աւելի յղկուած, աւելի իտալական: Աւետարեր հրեշտակը և Աւետընկալ Մարիամը (2), Գարբիէլ և Միքայէլ հրեշտակապետները սքանչելի գործեր են, զուտ եւրոպական արուեստով. Քրիստոսի մկրտութիւնը՝ իտալական գործի մը ընդօրինակութիւնը կը թուի. Առաքելոց զլուկները նոյնպէս Նմանողութիւն են իտալական արուեստի. այդպէս և՝ Երկրպագութիւն Մազուցը, Աւետումը, և խաչվառներէ ոմանց վրայ գտնուող սքանչելի նկարները: Գտնուար է այս երկրորդ շարքը և առաջնը՝ վերագրել ուոյն արուեստագէտին: Արդեօք ենթադրելու է որ Յօվնաթանի գործակցող աշակերտներէն ոմանք, Եւրոպա ուսած, այդ երկրորդ շարքի գործերուն հեղինակներն են: Զեմ կարծեր: Այդ աշակերտներուն գերը հաւանական է որ զլուաւրապէս մասնակցում մը պէտք է եղած ըլլայ գործագրութեանը մէջ զարդանկարներուն որոնց ընդհանուր սասամբ<sup>(\*)</sup> և բոլոր մոլիխները վարպետը ինքն իսկ էր յղացած և զծած: Առոնք թերեւս այն հին նկարներէն են, ինչպէս կ'ըսէ Դիւանագիրը, զորոնք Յովնաթան վերանորոգեց, և կամ Յովնաթանէն յետոյ՝ Եւրոպայէն բերուած, կամ Եւրոպական ուսումն սասացած հայ ուրիշ նկարիչներու ձեռքով մասամբ ինքնատպօրէն և մասամբ ընդօրինակուած գործեր են:

Այս մասին լոյսի նշոյլ մը կը բերէ Շահիսաթունեանի հետեւեալ շատուածին վերջին պարբերութիւնը.

« Գտանին յայսմ փառացի տաճարիս քաջարուեստ պատկերը տէրունականը եւ ականաւոր սրբոց, որպիսի են քաջանձուան նկարը՝ պատկերն աւետման:

(\*) Այս շարքին նետ կապ ունի եւ արծարեայ նանանչաւոր ուղանակով Աստուածածնայ իւղաներկ նկարը, բայց աւելի հին կը բուի համ Յօվնաթանի ուղան:

(2) Աւետարեր նիւթակին եւ Աւետնկալ Մարտիամին նկարներուն ներեւ մանրանկարուած շոր աննաւորութեանց ձեռքի Երդերուն վրայ հայերէն վերառութիւններ կան:

շրջանակաւ ամրացեալ ի բարձրութեան անդ արեւմտակողման երկուց սեանցն արևելքան , հրեշտակին ի սիւն հիւսիսային , Կուսին սրբոյ ի հարաւայինն , եւ պատկերըն երկոսասան առաքելոց յօրում է շօշափումն Թովմայի , զասաւորեալք ի կիսաշրջանակի անդ կամարայարկին արեւմտեան մեծի զրանն ի ներքին կողմանէ եւ պատկերըն երկորին՝ աղօթելոյն Տեան ի պարտիզին որ կայ եղեալ ի ներգուսատ ի հարաւային կողմանէ սեղանոյ սրբուհոյ օրհնաբանեալ Կուսին . եւ յարութեան Դազարո որ եղեալ է յօրմն հիւսիսային մերձ ի սեղան սրբոյն որոտման : Եւ այլ պատկերք աէրունականք առ պատշգամբաւ մեծի կաթողիկէին , եւ զանազան սրբոց հայրապետաց եւ վարդապետաց ի սիւնո եւ յօրմուն Տաճարիս այսորիկ : Ի կիսաշրջանակի կամարայարկին սեղանոյ սրբոյն Ստեփանոսով , Նկարեալ կան հայրապետական զգեստուք ի կանգուն պատկերը սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսուորչի , որպոց եւ թուունց նորա : Նոյնպէս ի կամարայարկին սեղանոյ Յովհանոս Կարապետի՝ պատկերըն սրբոց առաքելոց Պետրոսի եւ Պօղոսի եւ այլ սրբոց հայրապետաց . ի սոսա քաջարուեատ են պատկերք երկուց առաքելոց :

« Յ-Շ-Հ-Ե-Յ-Բ- է ---- +--Չ-Չ-Ե- Ք-Չ- Հ-Ե- Ա-Հ- Ե-Յ- Վ-Չ-Չ-Չ-Չ-Ե-Յ-Բ-  
Ս-Շ-Ե-Շ-Ն-Ն-Ն- է Ե-Ն-Ն-Ե-Ե- և քաջ նկարչին հօր Յովիսաթանու : »

Այս հատուածին մէջ , Յովիսաթանի հետ յիշուած կը տեսնենք ուրիշ վարպետ հայ նկարիչ մը , Ստեփանոս վարդապետ լեհացի , որ՝ ըստ Շահիսաթունեանի՝ հեղինակ է Խջմիածնայ նկարներէն ոմանց : Զեմ գիտեր թէ կա՞ն կենսագրական տեղեկութիւններ այդ Ստեփանոսին մասին : Մին պէտք է եղած ըլլայ լեհահայ գաղթականութեան այն նշանաւոր գործիչներէն , որ , ինչպէս առաջին սորերգութիւնը գրող Ալեքսիանոսը կամ աստուածաբանական գործերու թարգմանիչ ու հեղինակ և առաջին հայրատին բառարանը յօրինող Ստեփանոս Առշքեանը , աղգային-գրական-գեղարուսական փայլուն ու գդրադդաբար վաղանցուկ գործունէութիւն ժունեցան Լեհաստանի մէջ : Եւրոպայի մէջ ծնած և ուսած , եւրոպական արուեստն ու ճաշակը կատարելապէս իւրացուցած նկարիչ մը եղած ըլլալու է այդ Ստեփանոսը . և Խջմիածնայ մէջ այժմ մնացած նկարներէն անսնը որ իտալական ոճ ու յղիեալ կանոնաւոր արուեստ ի յայտ կը բերեն , մասնաւորապէս՝ Աւետարեկ հրեշտակին ու աւետընկալ Աստուածածինը , Գարրիէլ և Միքայէլ հրեշտակապետները . և տասներկու առաքեալներու դիմանկարները . — հաւանականօրէն իր գործն են (1) :

(1) Այս Ստեփանոսը արդիօք այն նոյն « Ստեփանոս Անացի » ն է , որ Ամբերէկ ծնած՝ եւ լենական վարժարանի մէջ լիակատար ուսում ուսացած , Երիտասարդ հասակին մէջ՝





॥क्षमप्र लक्ष्मी  
(लक्ष्मी)

Այս հարցերուն լուծումը՝ գէթ մօտաւոր՝ պիտի ստացուի, երբ մասնագէտներ՝ մանրակրկիտ ու երկայն թէկոնիքական քննութեան մը ենթարկեն այդ բոլոր գործերը, և երբ Էջմիածնայ Գիւանատան բարոր հին գրութիւնները խուզարկուելով՝ թէրեւս նոր ծանօթութիւններ երեւան դան :

Ես փափաքեցայ միայն՝ երեւան հանել այդ գործը ուր հայ տաղանդի մը լոյսը կը շողայ :

\* \* \*

Հայ զրականութեան պատմութեան մէջ, որ գեռ այնքան պակասաւոր ու կիսկատար է գրուած, և հայ գեղարուեստի պատմութեան մէջ, որ գեռ բնաւ չէ գրուած, առաջա Յովնաթան բանաստեղծը և Յովնաթան Յովնաթանեան նկարիչը իրենց յատուկ զլուխը պիտի ունենան : Աւ այս յայտնութիւնը զոր կը կատարեմ, պիտի մէկ թէրեւս ուրիշներ Հայաստանի այլ և այլ տաճարներուն, վանքերուն մէջ, ինչպէս և ձեռագիրներու խորը՝ անծանօթ մնացած հայ վարպետներ երթալ վնտուելու, մնացութենէ զուրս հանելու և մեզի՝ ինչպէս օտարին՝ ձանչցնելու :

Փարիզ, Հոկտեմբեր 1909

ԱՐԵՎԱՆ 20ՊԱԿԵՏԱՆ



Գևոց Էջմիածին, հայերէն ուսաւ նոն, արտադրեց բազմաքի նեղինակութիւններ ու բարգ մանուքիններ եւ մեռաւ այնեկ 1681ին : Հ. Գ. Զարգաննեան, որ, իր «Պատմութիւն Հայերէն Պարուրեան» գործին Բ. հատորին մէջ, այս ևղեկուքիւնները կուտայ Սեփաննու Անացիի մասին, անոր նկարչական ծիրեւը ալ ունենալու մասին ո եւ է խօսք չըսէ :







Յարութիւն Քրիստոսի  
(Ակար)

ՆԱԴԱՅ ՅՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐԸ



Ա.

Տ Ա Ղ Ս Ի Ր Ո Յ

Եմ եարըն նըստել դամով,  
Լեզուն քանց շաբար համով,  
Ինձ կու սիրէ իւր կամով.  
Զալում, ուրախ եմ, աճա՞ն, աճա՞ն:

Երեսը վարդի թեր է.  
Խօսքը սիրտը կու երէ.  
Ո՞վ 1) ինձ խարար կու բերէ.  
Զալում, կարօտ եմ, աճա՞ն, աճա՞ն:

Աչքերիդ բանդիւան եմ,  
Կ'ուղեմ որ հոգիս հանեմ,  
Հեքիմէս զանգատ կ'անեմ.  
Զալում, զարթլու եմ, աճա՞ն, աճա՞ն:

---

1) Զեռագիր. Ով:

Սեւ 1) խաղեր , ձամեր դաստայ :  
 Պէնի սալուրատոր խաստայ 2) .  
 Իմ եարըն ինձ մէկ թառ տայ .  
 Զա՛լում , ծարա՛ւ եմ , ամա՛ն , ամա՛ն :

Մաղկած պաղչի նըման ես ,  
 Ե՞նչ կ'ենի ըռահմ անես ,  
 Նըմիրըն ծոցէդ հանես .  
 Զա՛լում , հաճրուրիմ , ամա՛ն , ամա՛ն :

Գըլիփիդ ձըգել ես մանտիլ ,  
 Գօղարըն եանար զանդիլ 3) .  
 Խոցւած սիրտըն մի՛ քանդիլ .  
 Զա՛լում , զարի՛պ եմ , ամա՛ն , ամա՛ն :

Պաղչուձըն ծաղիկ քաղես ,  
 Մածուկ դէպ ինձ ծիծաղես ,  
 Կըրակով սի՛րտըն զաղես .  
 Զա՛լում , երգիլ եմ , ամա՛ն , ամա՛ն :

Գիր ես զըրել առշխարով ,  
 Մէջըն լըցել շաբարով ,  
 Յովնաթանին շատ բարով .  
 Զա՛լում , կարդացի , ամա՛ն , ամա՛ն :

¶

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Նոր տեսայ մէկ նոր սիրելի ,  
 Աչքերըն որպէս հայելի ,  
 Մամերն նըման սոկէ թելի .  
 Խիստ գովելի .  
 Բանաշայ սըմբուլ , զըմբըզի գուլ , քաղցըր բըմբուլ :

1) Զեռ. Աէզ: 2) Թ. Զիս Շիւանդ ըրահն է: 3) Թ. Աչքերով գառ կանթեզ:





Ա. Հովհաննիս  
(Նկար)

Պօյըղ է կանանց ծառ սալիի ,  
Լեզուղ զիր բերանիս հարվի ,  
Մամերդ երեսիս վրայ ծալիի ,  
Աչքերս ճայլի .  
Բանաւշայ սըմբուլ , զըրմըղի գուլ , քաղցըր բըլբուլ :

Նոր ես զուրալ) եկել համամի ,  
Մոցըղ նըման է շամամի ,  
Միրտըս մէկ համբուրել կամի ,  
Մէրն թամամի .  
Բանաւշայ սըմբուլ , զըրմըղի գուլ , քաղցըր բըլբուլ :

Գընաց աշուն և ամառըն ,  
Ցամաքեաց ծաղկունիք և ծառըն .  
Մւր է քո արած իղրարըն ,  
Էհտիպարըն .  
Բանաւշայ սըմբուլ , զըրմըղի գուլ , քաղցըր բըլբուլ :

Եատ վախա է որ չես երեւում ,  
Մէկ խապար ու զիր չես բերում ,  
Վառ կըրակով սիրս ես երում .  
Բանաւշայ սըմբուլ , զըրմըղի գուլ , քաղցըր բըլբուլ :

Միրոյ կըրակի մէջ ձընաս ,  
Երիխո որ դա՛րդըս իմանաս ,  
Երը իմանաս , կու հովանաս ,  
Մոցըղ բանաս .  
Բանաւշայ սըմբուլ , զըրմըղի գուլ , քաղցըր բըլբուլ :

Քո սիրոյդ ես հիւանդացայ ,  
Աշխարհըս 2) ամեն մսուացայ ,  
Ափսո՛ս որ քեզմէ հեռացայ ,  
Նըւաղեցայ .  
Բանաւշայ սըմբուլ , զըրմըղի գուլ , քաղցըր բըլբուլ :

Երեսըդ տեսնեմ զարմանամ ,  
Զայնըդ կու լըսեմ՝ խեւանամ ,  
Մէկ խօսէ՛ որ ուրախանամ ,  
Սիրտըս բանամ .  
Բանաւշայ սըմբուլ , զըրճըգի դուլ , քաղցըր բըլբուլ :

Վեր հազիր 1) դիպա զարբաֆըն ,  
Նըստեմբը խըմեմբը ձեր սարդաֆըն ,  
Ինձ արա 2) ծուրվէթ ինսաֆըն ,  
Որ տանք կեաֆըն 3) .  
Բանաւշայ սըմբուլ , զըրճըգի դուլ , քաղցըր բըլբուլ :

Դու իմ պարո՞ն ես , իմ աղա ,  
Կանանչ արեւիդ սաղալայ ,  
Ես տաղ կանչեմ , դու էլ խաղա՛ ,  
Կիտաք բաղայ 4) .  
Բանաւշայ սըմբուլ , զըրճըգի դուլ , քաղցըր բըլբուլ :

Գուրջըստան զարիպ ճընացի ,  
Քո կարօսութեամբ շատ լացի ,  
Քեզ որ տեսայ , աչքըս բացի ,  
Խիստ խընդացի .  
Բանաւշայ սըմբուլ , զըրճըգի դուլ , քաղցըր բըլբուլ :

Մեր մէջն չէր պիտիլ թշնամի ,  
Ամեն օր լեզուդ ծամի .  
Ես նաւարար 4) , դուն մէկ կեամի ,  
Ա՛խ , լա՛ւ քամի .  
Դաստուր տայը խանըն , նըստեմբը ձիանըն , դէալ մեր վաթանըն :  
Բանաւշայ սըմբուլ , զըրճըգի դուլ , քաղցըր բըլբուլ :

Մոցըր նոր կանանչ բռստան է ,  
Տէր չունիս՝ աէրութիւն անէ .

1) Վասյէդ հազիր . 2եռ. Հազիր ; 2) Զեռ. Առաւ ; 3) Կեափ , քէփ՝ հաւանականարար (քէփ ընելք) ; 4) Արեւիդ մատաղ բԱմմժ : 5) թ. Այզին երթանք : 6) Զեռ. Նազարար :





Ս. Անդրեաս  
(Նկար)

Քո պաղվան Նախաշ Յովստիան է .

Մոցդ հանեւ , մէկըն շուշան է , մէկըն հոտով ըռահան է .

Բանաւչայ սըմբուլ , պըրմըզի զուլ , քաղցըր բըմբուլ :

9.

Տ Ա Ղ Ս Ի Ր Ո Յ

Նըման ևս կարմիր փարդի ,

Վասամները շար մարդարտի .

Միրտ երել ևս շատ մարդի .

Բոլոր սուրաթ , ինձ արիր 1) մաթ , այ բէծուրվաթ :

Ել ըռւանդ թուղթ զիր կու զրկես ,

Կասեն՝ բարով որդիդ կարգես ,

Զինի ինձ մոռանաս թարկես .

Քիզ ո՞նց թողեն , ո՞նց հեռանամ , ո՞նց մոռանամ :

Ղեղաջ 2) աչքով մըտիկ անես ,

Միծաղելով հողոց հանես ,

Ռւներովը ինձ կը սպանես .

Ճիկարս արիր փարայ փարայ , սիրսս է եարայ :

Ելսօր ամշն տարտես բանամ .

Կացի՛ր բարով , ևս կու զընամ .

Վախեն մեռնիմ կարս մընամ .

Քեզ զուրպաշն եմ , խիստ տըխտ' ւր եմ , եկ համբուրեն :

Շամամներիդ համար դառն եմ ,

Թող որ ձեռըս մէջըն խառնեմ ,

Ինձ ծալխեմ էդ պախչեզ առնեմ .

Զալում , թող ևս եմիշ քաղեմ , մէկ ծիծաղեմ :

1) 2եռ. Յըսրիր . 2եռ. 647 Յըրիր :

2) 2եռ. 647 , Շ.ղեղաջ . Թ.երեւու՝ Շ.ղեղաջ (Հեղամհայեաց) ? :

Է՞ր ես կարմիր երեսդ ծածկում ,  
Զարշաւըն վերադ հաւաքում ,  
Նաղաշին սիրտըն տապակում .  
Ես բէշարէ , կանչեմ հարայ , ըռահմ արա :

Դ.

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Այսօր ծագեցաւ նոր արեւ ,  
Իմ սիրելին ես ինձ բարեւ ,  
Մըտիս բուսաւ կանանչ տերեւ .  
Նաղանի՛ , ման զարիբ ամ , թօքմա դա՞նըմ , աղա՞մ , սուլթանըմ !):

Որ այդպէս սէր ունիս վարար ,  
Ապա Է՞ր ինձ չարիր խապար ,  
Նոր իմ սիրտըս ընկաւ զարար 2) .  
Նաղանի՛ , ման զարիբ ամ , ևն .

Դու որ եկիր իմ սալամըն ,  
Առի քաղցըր խօսքիդ համըն ,  
Չեռնէս վէր ընկաւ զալամըն .  
Նաղանի՛ , ման զարիբ ամ , ևն :

Զարդարվել ես զառ զառքափով 3) ,  
Դու ինձ քանի՞ պահես խաբով ,  
Շաճամներըդ ձեռնիս չափով .  
Նաղանի՛ , ևն :

Գընանք բանանք պախչի դուռըն ,  
Դէպ ի ծոցըդ մեկնեմ կուռըն 4) ,  
Դու ծաղիկ քաղէ՛ , ես նուռըն ,  
Նաղանի՛ , ևն .

1) Կաղելիս , ես պանգուխատ եմ , զիս մի՛ ծէծեր , խա՞նս ,  
առէ՛րս . սուլթանս : 2) 2 եռ . 647 . Կուբար (փոխանակ զարարի) :

3) 2 եռ . Զառըրֆով . 2 եռ . 647 Զառբափով 4) Թեւս երկնցնեմ :

Պաղչի մեջըն մեկնենք խալի ,  
Սեղաններ՝ զինուոյ սիւրահի .  
Պազ 1) տուր , որդիկ Աստուած պահի ,  
Նաղանի՛ , ևն .

Վարդըն ձըգեցիր մէջ զոգիս ,  
Զի լինի ձեռս ծոցէդ չոկիս ,  
Թող հուալ տամ , մի՛ առնես հողիս .  
Նաղանի՛ , ևն :

Կորէն հետ ծաղիկ ձըգեցիր ,  
Թասըն զէպ ինձ ծօտ 2) խըցեցիր ,  
Յովաթան սիրով այրեցիր .  
Նաղանի՛ , ևն .

iv

Տ Ա Դ Ս Ի Ւ Ո Յ Յ

Նոր ծաղկեցաւ այգին , եկել է պարոն .  
Է՛լ իմ սիրուս կ'անես եարալու արին .  
Դու ես իմ սիրելի աղա և պարոն .  
Ես եղէ քեզ հէյրան , զու ճարալ չէյրան :

Պախչի դուռըն բաց է , այս է լաւ վախտըն ,  
Զա՛լում , ծոցը էլ բաց , ծանեմ զըրախտըն ,  
Թող ես շամամ քաղեմ , զու նըստիր թախթըն .  
Ես եղէ հէյրան , զու ճարալ չէյրան :

Գիտեմ որ զու քանց զիս սիրոյ թաման ես .  
Նըռներդ հող կու զառնայ , է՛ր պինդ կու պահես 3) .  
Թող համբուրեմ օրհնեմ , հոգով զարդարվես .  
Ես եղէ հէյրան , զու ճարալ չէյրան :

1) Չես . Պար : 2) Չես . Ինձ ի մօտ . Չես . 647 Ինձ մօտ :

3) Չես . Կու շահես :

Զինչ 1) ձռւկըն ջըրէն 2) զուբու ևս կուղամ տապակ ,

Դու էլ իմ սիրովըն ծարաւ ես պապակ ,

Ըստ է՞ր կու մընաձք մեք միմեանց փափաք .

Ես եղէ հէյրան , զու մարալ չէյրան :

Էլ չունիմ սիրելի քանց քեզ պատուական ,

Ինձ կարօտ մի՛ թողուլ , նազու սիրական .

Կու մեռնիմ , կու մընաս զու ինձ պարտական .

Ես եղէ հէյրան , զու մարալ չէյրան :

Երեսըդ նըման է կարճրափայլ վարդին .

Թող քո հայրըն մեռնի , ապրի իւր որդին .

Բայլի ըռահնձ անես զարխակ ճաճբորդին 3) .

Ես եղէ հէյրան , զու մարալ չէյրան :

Մարմինըդ զառբափուլ նոր զարդարեցիր ,

Ծոցըդ նըշանց տրւիր , այլի ծածկեցիր ,

Իմ սիրալս երելով կարօտ պահեցիր .

Ես եղէ հէյրան , զու մարալ չէյրան :

Բարձին վրայ բազմիս ի մէջ զարպասին .

Մայիլ իմ աչքերին , հազիր 4) ալլասին .

Թող Յովաթան 5) մէկ տաղ ասէ քո թոսին .

Ես եղէ հէյրան , զու մարալ չէյրան :

2

**ՏԱՂ ՍԻՐՈՅ**

Նոր զարուն է , հընչեաց հարաւ .

Իմ սիրելոյն 6) խիստ իմ ծարաւ ,

Ելուր տեսայ՝ խելքըս տարաւ .

Աչքըս ելաց 7) , խելքըս զընաց .

Խիստ իմ կարօտ , ինսա՛ֆ արա , երեսըդ բա՛ց :

1) 2եռ. Մինչ 2եռ. 647 Զինչ 2) Քրեղէն 3) 2եռ. Քամբորդ-  
գին : 4) 2եռ. Հայքիր : 5) 2եռ. Յովեսոյան :  
6) 2եռ. Խմ սիրոյն : 7) Աչքըս լոցոււ :



Թբազմակիր Ս. Աստուածածին  
(Նկար)



Աչքերը է շամսի դամար ,  
Կապել ես ծուրասայ քեամար .  
Քանի՛ մէկ պատ 1) տարոյ համար՝  
Ինձ պահես եսս , քարեքար տաս .  
Այս զիշեր գուռըն բաց թողեմ՝ մեր տունըն դաս .

Դալամ ունիքերըդ կու խաղայ ,  
Կու տեսնեմ 2) սիրալս կու դողայ .  
Կարմիր երեսդ կու շողշողայ .  
Բանդիւա՞ն եմ , ի՞նչպէս անեմ ,  
Հոգի՛զ սիրես , ինձ մէկ պա՛զ տուր , քեզ դուրբա՞ն 3) եմ :

Առաւօտուց վարդ կու քաղես ,  
Ինձ լաց կ'անես՝ զու ծիծաղես .  
Թէ մեր տեսն զաս՝ ինձ զօնաղ ես .  
Հագա՛ր բարի , ինձ ճօտ արի՛ .  
Բարեւ չես տալ , խաղար չեմ թէ քեզ ի՞նչ արի :

Եամամեներըզ նոր է հասել ,  
Մամերդ եկել վըրայ դասել ։ .  
Եցոր տեսայ՝ խելքս պակասել .  
Կանչեմ հարա՛ , ըռահմ արա՛ .  
Քեղնէ խնդրեմ որ մի՛ անիլ ինձ աւարայ :

Նոր վըռված վարդի նըման ես ,  
Եփա՛ս որ խմատ շաս նազ կ'անես .  
Գընաց դովրան՝ կու փոշմանես ,  
Հոգւոց հանես , իմ սուլթա՞ն ես ,  
Թողեմ կ'երթած , ով որ տեսնաս՝ կու հարցանես :

Է՛ իմ սիրամարդ , ոսկեհաւ ,  
Քաղցրախօս և նախշո՛ն կաբաւ ,  
Մարդոյ սըռ չասն վատ և լաւ .

1) Զեռ . Պատք : 2) Զեռ . կու տեսնիմ . Զեռ . 647 , կու տեսնեմ ;  
3) Զեռ . Պուրան . Զեռ . 647 , Պուրան : 4) Պարսուել (զիզուեր) :

Երես անդուլ չէյտայ բըլլո՞ւլ .  
Թող ես կանչեմ որ զուն բանվաս 1) , զըրծըզի զո՞ւլ :

Աղէկ խալվաթ է օթալըն 2) ,  
Տօշամայ է արած թաղտըն 3) ,  
Քեզ զրկելոյ 4) էս է վախտըն .  
Գինի պիտի , ոչ խըմում ես , ոչ լերում 5) ես :

Սուս քընած ես , զու արթուն ես ,  
Գիտեմ , սապր ու զարար չունես .  
Խապար եմ քեզ էլ միոր ունես .  
Է՛ր նազ կ'անես՝ հոգոց հանես ,  
Եմ զըրած տաղըն կու կարդաս ու սազ 6) կ'անեւ 7) :

Արի միմեանց զիր ուզարկինք 8) ,  
Թօհմաթ թահը անելըն թարկինք 9) ,  
Ցուրս է՛ արի՛ մէկտեղ պառկինք ,  
Որ տաքանանք զինովանանք ,  
Սերկեւիլ 10) ճազայ պէտք կուզայ՝ ծո՛ցըզ բանանք 11) :

Ցաւոտ սիրոյդ ես հիւանդ եմ ,  
Ես քան ըզեկ տարափանատ եմ .  
Նազըն , ես սի՛րտըս ո՞նց քանդեմ .  
Միրական ես , պատուական ես .  
Մաթ կու ճընած թէ է՛ր նահախ ինձ կու սովանես :

Ես ճայիլ եմ ծով աչքերիդ ,  
Սուսածքար կայ մէջ վարսերիդ .  
Կու նայիմ խալ խալ պատկերիդ .  
Ապուշ ճընած , ճեռաց զընած ,  
Միծծաղելով աչօք կ'անես՝ կու զարձանամ :

- 1) Բացուիս :  
2) Աենեակին մէջ առանձին ենք : 3) Բազմոցը զարդարուն է :  
4) 2եռ. կրկելոյ : 5) 2եռ. բրմէ : 6) 2եռ. Ազ : 7) Աազ կը զարնեա  
8) 2եռ. Ադարկինք : 9) Յանցանք իրարու վրայ ձգելը մէկդի  
զնենք : 10) 2եռ. Օրկեւիլ : 11) 2եռ. Բանամք :



Անցկածայ  
(Նկար)

Երացը աղբիւր է՝ երկու լուլայ,   
Վըրացու բոլոր գինու կուլայ 1),   
Խմ աչքերըն արտասուօք կուլայ.   
Երարաւ կու կանչեմ հարայ՝, զալում,   
Խնձ ըռահճ արա՛, զալում :

Սըրափի խառնէ սածուր եախլուդ,   
Ռսկի մարջան ընկած օրթալուխ 2),   
Նարինչի ատլազ կարճ արխալուդ.   
Դու զըրմըզի զուլ, զալում,   
Խս շէյտայ բըլբուլ, զալում :

Խաթայի զօտիք 3), շապիկը 4) ճակ,   
Քաղցըր ծիծավիս որպէս կաբաւ.   
Խնձ շատ մի՛ աներ աչքաւ ունքաւ.   
Հոգիս կորցըրիր, զալում,   
Խնձ փըչացըրիր 5), զալում 6) :

Մատնումը կայ զըմբութ ճառնի,   
Պօյլդ նըման ոսկէ շածուանի,   
Թու փարսի զըրուն նա միտանի 7),   
Եր բուսայ բըթէ 8), զալում,   
Խիստ լաւ խըրաս է, զալում :

Խս սիրոյ բանի չէի խապար.   
Մէկ օր ինձ տըւիր վարդի նուբար.   
Միրսո վարեցիր քեզի բարերար 9),   
Միտըս եմ բերում, զալում,   
Խս խիստ եմ երվում, զալում :

Զեր կըտերըն 10) Ճաղիկ ես վարել,   
Խնձորի մէջըն մեխակ շարել,

1) Վըրացուց կլոր զինիի շիշ: 2) Ինչ որ օսկի ու բուսատ ունիս՝  
զուրս հանէ: 3) Զեռ. Կոտիք, Զեռ. 647 Գոտիկ: 4) Զեռ. Շապիք:  
5) Զեռ. Փոշացըրիր. Զեռ. 647 Փչացըրիր: 6) Զեռագրին մէջ կը  
պակսի զայտւմ: 7) պ. „Զըրբունը (բառկանակ) շեն զիտեր: 8) պ.  
Համբոյյը մը տուր: 9) Ակրսու քեզ շետ տարիիր: 10) Տանիքին վրաս:

Ուղարկել ինձ շատ բարեւ արել .

Դու Աէյլի ջընուն , զա՛լում ,

Ես եղեւ Մէջնուն 1) , զա՛լում :

Ինձ հանեցիր իմ զործ ու բանեն ,

Թամաշա կ'անեմ մեր այլանեն ,

Զես թողուլ հեռանամ իմ աանեն .

Քանի ես սալ եմ , զա՛լում ,

Քեզի զութսաղ եմ 2) , զա՛լում :

Քո ձեռօքըն մէկ զիր ես զըրել ,

Մեխակ 3) և շաբար մէջըն լըցել 4) ,

Ես հիւանդ էի՝ մէյլիր զըրել 5) ,

Աղջացայ , զա՛լում , զա՛լում , 6)

Հեշտացայ , զա՛լում , զա՛լում :

Ասել ես թէ նա որ նաղաշ է ,

Գիտէ որ ունիքերս զարալաշ է ,

Ըսէ սուրաթիս նըման քաշէ .

Քաշել եմ , զա՛լում , զա՛լում 7) ,

Մաշվել եմ , զա՛լում , զա՛լում :

Ասել ես՝ Տես նաղաշըն տա՞ն տ ,

Գիր ուղարկի՝ սիրաց հովանայ ,

Մաճուկ ուղարկի , ճարդ չիմանայ .

Գըրած եմ , զա՛լում , զա՛լում 8) ,

Մըհրած եմ , զա՛լում , զա՛լում :

Գիր էի զըրում 9) քու անուանըն ,

Միար ի անում 10) քո սիրոյ բանըն ,

Ետնէս 11) ուղարկես Վախտանգ իսանըն .

Քեզ ո՞նց ճոռանամ , զա՛լում ,

Ես ո՞նց հեռանամ , զա՛լում :

1) 2 եռ. Մէջուն . 2 եռ. 647 Մէջնուն : 2) Օձիքէդ բռնած եմ :  
3) 2 եռ. Մէխաք : 4) 2 եռ. զրել : 2 եռ. 647 լցել . 5) Հաճեցար զրել :  
6) 2 եռ. Աղջացայ , զալում : 7) 2 եռ. Քաշել եմ , զալում : 8) 2 եռ.  
Գրած եմ , զալում : 9) 2 եռ. Գիր զրած . 2 եռ. 647 Գիր էի զրում :  
10) Կը յիշէի : 11) 2 եռ. Ետնէս : Ետնէս :

Ասել ես՝ Տիտրեր զըրե՛ առաջով ,  
Մաղկէ՛ լաջմարդ սոկի վարադով .  
Գըրել եմ կապել բարթայ բազով 1) ,  
Կուզարկեմ , զա՛լում , զա՛լում ,  
Փափա՛ք եմ , զա՛լում , զա՛լում :

Խարար ես զրկել քո բերանէն ,  
« Ասէք՝ շատ մի՛ հեռանալ տանէն ,  
Մէկ օր զալոյ 2) եմ քո քերխանէն 3) . »  
Մէլով եմ 4) , զա՛լում , զա՛լում .  
Սիրոյդ զինով եմ , զա՛լում :

Եարաթ օր եկիր իմ սալամըն ,  
Զեռըդ առիր տիւիթ դալամըն 5) ,  
Ընոնըս զըրեցիր էնրամըն 6) .  
Ինձ խեւացըրիր , զա՛լում ,  
Մոլորացըրիր , զա՛լում :

Դու եկիր , ես իմ բանըն նըստայ ,  
Ասացիր՝ Այն է աըրուստ ռաստայ 7) ,  
Որ իմ ճատնումըն ծաղիկ զաստայ 8) .  
Կազմեցի , զա՛լում , զա՛լում ,  
Մայլեցի , զալո՛ւմ , զա՛լում :

Զա՛լում , էղ ի՞նչպէս զատաստան է 9) ,  
Կամ զիւան արա 10) կամ ըսպանէ՛ .  
Կ'ասեմ՝ Հէքիմ ես , ցաւըս հանէ՛ .  
Հոգիս կու հանես , զա՛լում .  
Խելքըս կու տանես 11) , զա՛լում :

Խօսքըն ինձ հասաւ քո բերանին ,  
Եատ բարեւ հասցէ Յովսաթանին .

1) 2եռ. 647 Պաֆթայ պազով բանուած կապով ; 2) 2եռ. 477  
Գալոյ եմ ; 3) Գործառեղի , գրասնեակ . 2եռ. 647 Քարիսանէն ;  
4) Կը փափաքիմ ; 5) Կազամոր զրիչ ; 6) Ընորհքով , վայելքապէս ;  
7) Այն է շիտակը , ուղիղն այն է . 2եռ. Ուաստայ ; 8) 2եռ.  
Դուստայ ; 9) 2եռ. Գատատան է . 2եռ. 647 Գատատան է . 10)  
Գատէ ; 11) 2եռ. Կու տանիս . 2եռ. 647 Կու տանես :



Աւետինեալ Ս. Մարիամ  
(Նկար)



Առէց՝ խօսչըդ վըրայ իմ շանին .  
Կարդացի , զա՛լում , զա՛լում ,  
Խնդացի , զա՛լում , զա՛լում :

Է

Տ Ա Դ Ս Ի Ր Ո Յ

Գարուն եղեւ , քաղցըր խօսի բըմուլըն ,  
Զեր պաղչի մէջըն բացիկ ա սըմբուլըն ,  
Սօհրաթումըդ 1) պակաս չէ բանդապուլըն 2) .  
Ես զարիպ եմ , զիաչի մի՛ երած սըստիս .  
Միծաղելով , ե՛կ առնեմ վըրայ կըրծըիս 3) :

Աչքերըդ ծով՝ ֆըւանգի դուրսանդ գեամի , 4)  
Անցերդ եաղի՝ արինահեղ հարամի ,  
Սուրըն ձեռաց՝ ինձի ըսպաննել կամի .  
Ես զարիպ եմ , ևն .

Պաղչի մէջըն ամեն օր վարդ կու քաղես ,  
Ինձ կու տեսնուա՛ աչքով կ'անես ծիծաղես ,  
Վառ կըրակով սըստիս մէջըն կու դաղես ,  
Ես զարիպ եմ , ևն .

Մոցիդ մէջըն բոլոր շամամ ես վարել ,  
Երկու կողմանց ոսկի կոճակ ես շարել ,  
Դու իմ ուշըն , խելքու ու միտքըս ես տարել .  
Ես զարիպ եմ , ևն .

Ես կունահքար մելօք զերի նաղաշ եմ ,  
Քո շաս միբայդ հալվեր եմ և կու մաշեմ .  
Ինձ ճօտ նըստիր , պատկերիդ 5) նըման քաշեմ .  
Ես զարիպ եմ , ևն .

1) Խօսակցութեանդ մէջ + 2) Ես՝ զերիս . 3) Զես . Կրգիս :  
4) Ֆրէնկ ծովաչէններու նաւ . 5) Զես . Պատկրիդ . Զես . 647 պատ-  
կրիդ :

Թ.

### ՏԱՂ ՍԻՐՈՅ

Եկ զընաճք պաղչէն նըստեծք չորս բոլորն շարած վարդի ,  
Ըմա՞ն , ամա՞ն , քո սիրոյդ եղեր եմ տալու տիվանայ .  
Ծոցիդ եմիշներն ինձնէ զատ նըշանց 1) չտաս ուրիշ ճարդի .  
Ըմա՞ն , ամա՞ն , քո սիրոյդ եղեր եմ տալու տիվանայ :

Առաջաւուց կարմիր ցողմն կարմիր վարդին վրայ ճաղած ,  
Եմ սիրելին ինձ համար տես քանի՛ ցեղ վարդ է քաղած .  
Նորա սիրոյ կըրակովն իմ սըրախն մէջն է դաղած :  
Ըմա՞ն , ամա՞ն , ևն :

Խալերը պայծառ աստղունք , երեսդ է բոլոր լուսին 2) .  
Այիս ծամելը ընկած քոյ թիկունքին և ուսին 3) .  
Քո դարդին ես կու մեսնիմ , ի՞նչ լայեղ է քո նամուսին 4) .  
Ըմա՞ն , ամա՞ն , ևն :

Անքերը կապած կամար թըրի նըման կու չողշողայ .  
Եշքերը եաղի 5) ջալաղ , որ տեսնեմ սիրալս կու դողայ .  
Երանի տաճ այն ճարդին որ քո ծոցումըդ կու լողայ .  
Ըմա՞ն , ամա՞ն , ևն :

Լեզուդ քաղցրախօս բլուլ , ատամիները ճարգարտաշար ,  
Ծոցը քաղչայ կանանչ քօստան՝ շամամ ինձոր շարէշար ,  
Ընկայ քո մեղաց ծովն , էլ չի մընաց հոգոյ պաշար :  
Ըմա՞ն , ամա՞ն , ևն :

Աստուած սիրէք , զինացէք տեսէք թէ իմ եարըն տա՞ն այ 6) .  
Երթամ աղաչիմ , բալքի ըռաճմ մնի դուռըն բանայ ,  
Մէկ բերան ինձ խօսի որ երած սիրալս հովանայ .  
Ըմա՞ն , ամա՞ն , ևն :

Սիրամարդի նըման ես , զառ ու դառբափով դարդարած .  
Մէկ համբուրելոյ համար ես ճընացել եմ պաշարած .

1) Ցցց չտաս : 2) Զեռ . Լուսին . Զեռ . 647 Լուսին : 3) Զեռ .  
Թիկունքին ուսին . 4) Վայել է միթէ քու պատոյդ :  
5) Զեռ . Եաշի . Զեռ . 647 Եաղի : 6) Տունն է :





Ա. Աստուծանին  
(Մարմարի վրայ նկառուած, Աւագ օվզանի նակար)

Նախաշըն է՞ր կը ազանես , աեսնեմ թէ քեզ ի՞նչ եմ արած ,  
Եմա՞ն , ամա՞ն , բո՞ս սիրոյդ եղեք եմ տալու տիվանայ :

Ժ.

**ՏԱՂ ՍԻՐՈՅ**

Յայտնեցաւ գարուն , հարաւ հնչեաց ,  
Մառըն կանանչացեալ ծաղկեաց .  
Քո սիրոյդ եղէ եանա եանա 1) ,  
Տոլանայիմ նէ՞ջա փարզանա 2) :

Անիմ շատ խորհուրդ , ուխտաւոր եմ ,  
Բնէր ծոցիոյ մէջը համբուրեմ ,  
Քո նոր ըռախտն շնորհաւորեմ .  
Եշխմնաւէն օլուում եանա եանա 3) .

Գրկելոյ 1) խիստ եմ եանս ,  
Բլուլ ամ տուշմիշ ֆիդանս 2) :

Թաճաշայ կ'անես զու իմ բանին ,  
Ես ճայիլ խօսքիդ բերանին .  
Ինձ լըսիս՝ թէ չէ կ'ասեմ խանին .  
Լեզուիդ կարօտ եմ եանս եանս ,  
Մարա վեր քի իչտում սանս 3) :

Բաիր՝ Տաղ զըրէ , ինձ հաճբուրէ՛ .  
Գըրած եմ , քո իզրարըն ուր է .  
Գուրպան եմ , սիրտըս խիստ տըմուր է ,  
Գու ինձ մի՛ թողիլ եանս եանս ,  
Բիր ռահճ էյլէ սէն ճանս 4) :

Նըման է ծոցըդ նոր չարպաղի ,  
Թող Յովսաթան ճէկ եմիշ բաղի .  
Կըրակով սիրտըս կու դաղի .  
Խուշկ եմ ճընացել եանս եանս ,  
Պալլումի տօնտարտըն դանս 5) :

Ճ.Օ.

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Նազելի ճաղիկ , տամ քեզի բարեւ ,  
Ետ բաց երևիդ վըրայ չարշաւըն .  
Աչքերգ ինձ այրեց զինչ ամուսն արեւ ,  
Ինձ բաթմիշ արեց 6) քո սիրոյ նաւըն :

Աչքերըդ լարած նետ ու աղեղըն ,  
Քըրփանդ եարաղով նըստել ես տեղըն 7) .

1) Զեռ. Գրգելոյ . 2) Զեռ. 647. Գրկելոյ : 2) թ. Սոխուկ եմ՝ ողբարու մասնուած : 2) Զեռ. Գրգանս : 3) թ. Աէղէ՛ տուր որ կենացդ խմեմ : 4) թ. Աէկ մը զթա : զուն ինձի : 5) թ. Կուրծքս արիւնլուայ ըրիր : 6) Զիս ընկդմեց : 7) Զեռ. Տղն. Զեռ. 647 , Տղն :





Ա. Թաղես Առաքեալ  
(Նկար)

Ինձ վայր կու ձրդէ զինչ վայրի եղբն 1),  
Ունցերը կախած չախմախ ու զավըն :

Ինձ զութսաղ արիր կու պահես ջափով,  
Թէ . . . . 2) կ'անհս , արա՛ ինսափով .  
Դու զարդարվել ես զառ ու զառքափով,  
Նաշխուն քաղցրախօս քան բզկաբաւըն :

Կախէ տարախու զառերըդ բուռըն ,  
Եկ նըստեմբ մէջնիս , տամբ կուռըն կուռըն .  
Դու ծոցէդ հանէ սերկեւիլ նուռըն .  
Ես բերեմ զինի տապակած հաւըն :

Գանդատիս ձայնըն լըցաւ սար և ձոր ,  
Եսատ բարեւ դրսկիմ քեզ կարմիր ինձոր .  
Բեր ծըծեմ լեզուդ ինչպէս մեղր ի ծոր ,  
Քանի ինչ ընկած ես նախաշին թավըն :

ԺԲ

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Գովելիի ծաղիկ ես դու ի մէջ ծաղկանցըն՝ վարդ թաջիսար .

Արտիզ սէրըն աչքովլող ինձ յայտնեցիր՝ մաթլապիդ հասար .

Երիւն անելոյ մի՛տք ունիս , հազել ես կարմիր սարասար 3) ,

Դու աչացըս լո՛յս հաւասար :

Թեւերըդ թափած մոմեր , պօյըդ կանանչ սալիփ ու չընար ,

Երիսըդ բուրու լուսին , աչքերըդ վառ կանթեղ ու ֆէնար .

Երթունքըդ շիրուպէ) շարբաթ , նըստան պըսոււդ՝ կարմիր գուլինար ,

Քեզ ըռահն չունիս 5) :

1) Զեռ. 8եղն , Զեռ. 647 , 8դն : 2) Բառ պակաս :

3) Զեռ. Մարտոր . Զեռ. 647 , Մարտոր : 4) Զեռ. Շիրոււ : 5) Ար

տողը պակասաւոր է . թերեւս քեզ ըռահն չունիս ինձ համար :

Մամերը կանանց պաղչայ, ճաղիկ և վարել սոկէ թերով .  
Ես սեփիլ պաղիանի նրման խու մեռայ 1) քեզ աղաչելով .  
Իմ սիրալո . . . 2) արիր, դու կ'ենիս շուռ զաս ծիծաղելով,  
Բէճուրվա՛թ, սիրալս դաղելով :

Եռւրջ կուգաս վարդի նըման, դու զարդարած կարմիր ատլասով .  
Դու քան ինձ եղեր ես եանուղ էշխի ձեռաց խիստ հաւասով .  
Քեզ անուշ լինի զինին որ կու խըմս 3) արծաթէ թասով ,  
Մատանիդ սոկի ալմասով :

Առաւօտուց կ'ենիս սիրամարդի նըման շողշողալով ,  
Խելբըս ցըրովի կու մնայ դալամըն ձեռացըս դողդողալով .  
Ճերի՛ք է, ինսաֆ արա, քանի՛ պահես 4) Նաղաշըն 5) լալով .  
Բէինսա՛ֆ, դու կացի՛ր բարով :

Ժ.Կ.

**ՏԱՂ ՍԻՐՈՅ**

Այսօր ինձ խիստ պատուական է .  
Սիրալս ուրախութիւն կ'անէ ,  
Զէրա իմ սիրելոյնանէ 6)  
Շատ բարեւ ու զիր են բերած :

Մոցըրդ նըման է զըրախտին ,  
Մաղկած ձառոց ծաղկաղարդին ,  
Ես երանի տած էն մարդին ,  
Քո ծոցին եմիշն է կերած :

Աչքերը ծով անդընդական ,  
Կորուսանէ հոգիս մարդկան .

1) Խօ՛ մեռայ (ինչպէս սուսահայք կ'ըսեն): 2) Ալստեղ՝ բառ  
մը պակաս: 3) Զեռ խըմեմ 4) Զեռ. Պահես ի: 5) Զեռ. Նախաշըն  
ձեռագիրներուն մէջ մերթ կը գտնենք հաւաղաշ՝ և մերթ՝ աւելի  
յաճախ՝ հաւախաչ. Ճենք ընարեցինք հաւաղաշ՝ ձեւը:  
6) Իմ սիրելին:

Աղեկոծ գութունայի նման՝  
Շա'տ ձարդոյ տուն է; աւերած :

Երեսըդ ալ՝ սիահ խալ խալ,  
Ռնկերըդ է բաշած փարզալ 1),  
Ինչպէս երկաթիէ սուր չանդալ,  
Իմ ոսկերքըն շատ է քերած :

Բերանըդ դանդ, լիզուդ նաբաթ,  
Մոցըդ սակոյ սանդուդ 2) սաբաթ 3),  
Քեզ տեսնողին կու ճընած ճաթ՝  
Թէ՛ նա ի՞նչպէս է համբերած :

Ճակատ և ծոցըդ զարդարած,  
Սիահ ծամեր վլուայ շարած,  
Գիտեմ ով որ ճափիէ և արած՝  
Նորա հողին շուտ է ճեռած :

Ինձ քո սիրոյն զանակովըն  
Բապանել ես ձըզել ծովըն.  
Քո տեսութեան կըրակովըն  
Նաղաշին սիրոքն ես այրած :

Ժ. Կ.

Տ Ա Ղ Ս Ի Ր Ո Յ

Ածէ՛ն առաւօտ կուզաս ճաղկներով ,  
Երեսօքըդ նըման չէմաի զամարայ 4) .  
Մով աչքերըդ լրցած անդին քարերով ,  
Ռնկերըդ վրայ կապած՝ հրեղէն կամար այ :

Լուսինըն ամէն օր երկող կու նորի .

1) Կարկինով զծուած : 2) Թ. սանտըք , սնտուկ : 3) Թ. կողով :  
4) Արեւ ու լուսին նման երեսովդ :

Քեզ տեսնողին իսկըցմ ի՞նչուէս բոլորի .  
Քո ծոցըն պաղչայ նըռան խընծորի ,  
Պինդ կու պահաս , աջաք էզ ո՞ւմ համար այ :

Երթունքըդ բարակ է , կարմիր և փայլուն ,  
Տեսնողըն խեւ կ'ելի և սիրտըն արիւն .  
Երբոր բարով հասնիմք շնորհազարդ գարուն ,  
Ես էլ չեմ համբերել՝ կ'ելինմ աւարայ 1) :

Ճանապարհող կու նայիմ՝ տեսնեմ ե թի կուզաս ,  
Մածուկ ծիծաղելով ինձ բարեւ կուտաս .  
Հայի՛ որ թշնամոյն շուտ կու հաւատաս .  
Ես կուլամ , դու ուրախ նըռափր դամ արա :

Դու չես վախել 2) Շահէն , Առվթան ու Խանէն ,  
Մէկ խաթայ չես ուզարկել քո բերանէն .  
Ա՛յ զալում , ի՞նչ կ'ուզես նազաշին ջանէն ,  
Քարսափրս , բէինսա՛ֆ , ինձ ըուահմ արա :

ԺԵ

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Մանուշակ բանաւշայ սըմբուլ ,  
Քաղցըր զարնան ունի՛ս խաբար .  
Ես եղել եմ շէլտայ բըլբուլ ,  
Կարմիր վարդէն տուր ինձ խաբար :

Քաղցրախօս զուզի ու զումբըս ,  
Հա բա՛ս փուչացըրիր ումբըս ,  
Շատ կարօտ մընաց սրտումըս ,  
Նոր ես եղեր դարտիս խաբար :

Գովիլի ես և պատուական ,  
Խօսքերը է անմահական .

2) Զեռ . Ա՛րայ . 3) Զեռ . չես վախել ի Շահէն : 4) Ախալ չես  
հաներ . բերնէզ :

Զունիմ քան ըզբեղ սիրական .  
Ումելից որ կ'ուզես ա՛ռ խաբար :

Դու ինձ թաջիսար 1) , իմ պարոն ,  
Մօմեցել այ կանանչ գարուն ,  
Աչերըս զարձել ա արին ,  
Թէ ինձ ո՞վ կու բերէ խաբար :

Ազլազ արխալուզ ֆըռանդի ,  
Երեսդ է վարդի ըռանդի .  
Ես եղել եմ խեւ ու բանկի ,  
Հարզիզ իմ զարդին չես խաբար :

Աչերս զետի նըման վարար ,  
Հարկիոդ չունիմ սասլը ու զարար ,  
Նազաշ արարին 2) խելքըն տարար ,  
Եսկի ոչ ոք չարար խաբար :

---

Ճ-2.

Տ Ա Ղ Ս Ի Բ Ո Յ

Գեղեցիկ պատկեր , և զու իմ պատշեի ,  
Ես զիւանայ ջընուն եղէ քեզ համար .  
Աչերըդ վառ կանթեզ՝ ճաքուր հայելի ,  
Ես զիւանա ջընուն եղէ քեզ համար ,  
Եսարա ճաջլուն 3) եղէ քեզ համար :

Եռաւօսուց ծոցիդ վարզըն կու փըռվի ,  
Ես թաճաշայ կ'անեմ խելքըս կու ցրովի .  
Թող քո վեսմ ու հալըն թղթի մէջ գրվի .  
Ես զիւանայ , կն. :

---

1) Զեռ . Թարձիսար : 2) Նազաշ բառւած արարածին :

3) Հաւանականարար՝ Աէջնուն , պարսիկ բանաստեղծութեան  
հանրածանօթ սիրահարի տիպարը :

Ո՞չ զարդըս զիտես ո՞չ հալըս կ'իմանաս ,  
Ո՞չ ինսափ կ'անես ո՞չ երեսըդ բանաս ,  
Ե՞ց զալում , զու ի՞նչպէս ինձ կու մռանաս .  
Ես զիւանայ , ևն .:

Դու ինձ հետ զըրուցէ՛ , հալըդ իմանամ ,  
Մէկ խարար ուղարկէ՛ 1) որ ուրախանամ ,  
Ե՞կ իմ զարթու սրախ եարէքըն 2) բանամ .  
Ես զիւանայ , ևն .:

Երբոր կու աեսնեմ երեսիդ խալըն ,  
Մուշկուու վարիշան կ'ենի իմ հալըն .  
Դու նաղաշին ապրանքն ու մալըն .  
Ես զիւանայ , ևն .:

—————

ԺԷ :

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Այսօր եղեւ պայծառ արեւ ,  
Իմ նաղելի՛ , նո՞ր սիրելի .  
Ինձ ուղարկել ես շատ բարեւ ,  
Իմ նաղելի՛ , նո՞ր սիրելի :

Աչքերը բաշել ես սուրճայ ,  
Լարբդ շաբար , լեզուդ խուրճայ ,  
Կարմիր ծատներ՝ ոսկի պուռճայ ,  
Իմ նաղելի՛ , նո՞ր սիրելի :

Զըգել ես զօտկիդ բարերար՝  
Ոսկի , մարջան ու բահրուբար .  
Դու ինձ համար թաղայ նուրբար ,  
Իմ նաղելի՛ , նո՞ր սիրելի :

1) Զես . Աղարկէ : 2) Վէրպերը :

Ե՞նչ կ'ելնի ինձ ձեր տուն տանես 1) ,  
Բոլոր նըռներ ծոցէղ հանես ,  
Գինի խըմեմք՝ անուշ անես ,  
Իմ նազելի՛, նո՞ր սիրելի՛ :

Ասեմք է՛ս էլ մէկ դուլբանդ 2) այ ,  
Քանի՛ պահես փարէքանդայ ,  
Ես կուամ , դու տաս գուլանայ 3) ,  
Իմ նազելի՛, նո՞ր սիրելի՛ :

Քեամիր ջալլատի նըման ես ,  
Կամքըդ էն այ ինձ ըսպանես ,  
Դիւակ ունիմ աղատ անես ,  
Իմ նազելի՛, նո՞ր սիրելի՛ :

Ախան է քո զալամ դաշըն 4) ,  
Դու ես իմ համդամ ուրոտաշըն 5) ,  
ՄՇկ խըմել՛, մէկ տո՛ւր նազաշըն ,  
Իմ նազելի՛, նո՞ր սիրելի՛ :

ԺԷՆ

Տ Ա Ղ Ս Ւ Ի Ր Ո Յ

Ուստի կուգաս , քա՛ղցըր բըմբուլ 6) ,  
Քեղի բարո՛վ , ես քեզ եմ դուլ 7) .  
Լեզուղ շարբաթ , սաշըդ սըմբո՛ւլ 8) ,  
Քաղցըր լեզուովդ ջուր տուր ինձի 9) :

Վասմըդ կ'ասեն խիստ 10) աննըման ,

1) Զեռ. 8անիս . Զեռ. 647, 8անէս : 2) Զեռ. Զուլբանդ . —  
Հղթայակաս գերի : 3) Զինաբան , — սումբ (կը սմբակոծես զիս) .  
4) Ղալամովդ գծուած յօնքդ : 5) Մաերիմ ընկեր :  
6) Հայ Աշուղներ , թիւլիւլ : 7) Հ. Ա. Ես քեզի դուլ :  
8) Հ. Ա. Լեզուղ շարբար , սաշըդ սումբուլ : 9) Զեռ. Ինձ . Հ. Ա.  
Ինձի : 10) Հ. Ա. Շատ :

Քեզնէ զատ էլ չունիմ կուման .

Ես ի՞նչ անհմ հազար թուման ,

Երբ զու եար կու լինիս ինձի :

Նաշխուն երես , բոլոր սուրաթ ,

Մընացել աճ 1) հեյրան ու ճաթ .

Բռահմ արա՛ , հէ՛յ բէ՛մուրպաթ ,

Քանի՛ բարեքար տառ ինձի :

Առաւօտուց բացւել վարդըն ,

Գու ևս գօղալներուն զարդըն .

Քու կըակի մէջ ընկնող ճարդըն 2)

ԵԱ ճեղաղիր չեղնիլ 3) ինձի :

Թուխ ճաճ ունես , զալամդաշ ես ,

Ինչ որ հազնիս բարով ճաշես 4) .

Մով աչքերով զամզայ քաշես 5)

Սուր զանակով կուտաս ինձի :

Աստմիները սաստափ ինջի ,

Մոցը պաղչայ է թուրինջի ,

Ես եղայ սէֆիլ զարմնջի ,

Էլ ի՞նչ խելք կու ճընայ ինձի :

Նազաշ կ'ասեն խխառ բէ՛չարայ ,

Ել ինձ մի՛ աներ աւարայ .

Այսափ բաներս բեղ համար այ ,

ԵԱ զու երբ կու խղճաս ինձի :

-----

1) Հ. Ա. Ե. Ե. 2) Հ. Ա. Կըակիկ մէջ ընկող մարդըն : 3) Հ. Ա. Հ. Եղնիր : 4) Ա. Յ. Մոցը որ ձեռապը մէջ կը պակսի , կը գանուի Հ. Ա. Եղնիր : 5) Հ. Ա. Զամալապաշես :



Կոչիսված Ա. Ալեքսանդրակի  
(Կերտ)



Ժ. Ժ.

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Քանի՞ կանչեմ ամա՞ն ամա՞ն , ևս չունիմ դարար ,  
Քո սիրուղ հալեալ 1) ճաշեցայ , դու էլ չես խարար .  
Դալամ ունիքերըդ կապել է հըրեղէն կամար .  
Ես դիւանայ ջընաւն եղեւ , զալում , ցեղ համար :

Աչքերըդ ծանըր շուռ կ'ածես , հոգիս կու հանես ,  
Պայծառագոյն արեգական լուսնի նըման ես .  
Իմ քաղցրախօս կաբաւ բլբուլ , խելքըս կու տանես .  
Զարւած եար , ինչի՞ նազ կ'անես :

Լաշակիդ զըրազըն բարակ զառ դուլաբըթուն ,  
Ել չըկայ բան ըզբեկ սիրուն , նազանի խաթուն .  
Ճակատիդ շարել ես սովի , աշրափի ալթուն 2) ,  
Զալում եար , կարմի՛ր զըւարթուն :

Վիզըդ ձըգել ես զանջիլով հէյքալ համայիլ 3) ,  
Քաղցըր խօսքով կու ծիծառիս՝ կու ծընած ճայիլ .  
Կարմիր երեսդ կու չողշողայ՝ չեմ կարիլ հայիլ .  
Զալում եար , կամ խելքըս պահիլ :

Մով աչքերիդ ծըտիկ կ'անեմ ձեռաց կու գընամ ,  
Աչաբ դու էլ ինձ խղճա՞ս թէ այսպէս կու ծընամ .  
Թիէ որ դու էլ ինձ կու սիրես՝ ասէ՛ իմանամ ,  
Զալում եար , շատ ուրախանամ :

Ես որ պինդ հոգւոց կ'անեմ է՞ր չես իմանալ .  
Մողիդ ծածուկ ծըտիկ կ'անեմ է՞ր չես իմանալ 4) .  
Միրուըս կըրակով երում ես՝ էլ չի հովանալ .  
Զալում եար , չեմ դիմանալ :

1) Զեռ . Հուշեալ : 2) Զեռ . 647 . Հալեալ : 3) Պարսկական աւետակ  
մը փոքր սոկեդքասմ՝ էշըէֆի անունով : 4) Զեռ . Հուլմ՛ : 4) Զեռ .  
Ցիմանալ : 2) Զեռ . 647 . Բմանալ :

Մոցիդ շամամեներն զլւարթ նըռան բազայ է .  
Զորս բոլորն ոսկի կոճակ վարդի թափաչայ 1) է ,  
Թող էդ պաղչէն ձեկ վարդ կտրեծ , էւ զու պինդ պահէ՛ ,  
Զալում եար , իմ խաթրըն շահէ՛ :

Մոցումը կրկոյ ջըրած ծաղկաման ,  
Անուշանս վարդ , զարանժիլ , եսասաման ,  
Չեն կարիլ զալամով բաշիլ պատկերիդ նըման ,  
Զալում եար , խիստ ես աննըման :

Իմ սիրելեաց մէջըն չըկաց բան ըզբեկ աղիկ ,  
Նէնց ես կարմիր վարդ փըթըթած զամբայի ծաղիկ .  
Դու քանի՛ սէփիլ նապաշին սրափիկըն դապիկ 2) ,  
Զալում եար , և շոնչըն բաղիկ :

¶

**Տ Ա Ղ Ս Ի Ր Ա Յ**

Գարուն որ եղեւ աճսոյն սպիրիլի ,  
Յանկարծ բեղ տեսայ , իմ նո՞ր սիրելի .  
Աչքերը կանթել , երեսդ հայելի ,  
Ունքերը կապած կամար գովիկի 3) :

Մոցըդ լլցել ես ունան մեխուկով ,  
Իմ սըրտիս կուտասս սըրտած դանակով ,  
Զիկարս այրեցիր անշէց կըրտկով .  
Նըստիր բեղ ասեմ դարդերը կարգով :

Խալերը սիահ , վարսերը ոլոր ,  
Երեսդ լսափիտակ , կարմիր եւ բոլոր .  
Դու ինձ արել ես իմ խելքէն ձոլոր ,  
Դարդերը եղեւ շատ թագայ ու նոր :

1) Թարթէ՛ (աղ.) գիտենչ : 2) Քանի՛ խեղճ նապաշին սիրտը գաղես :  
3) Զեռ . գովիկ . գովիկ :



Առաջնակ մը  
(Ելքուր)



Խնձ հետ մի՛ կենար զի՞նչպէս դանաղան 1),  
Քեզ շատ կու սիրեմ , խիստ ես արձադան .  
Մոցը ծէջլիս է՛ զարդարած սեղան ,  
Ճերժակ շամամներ ծէջլն կու խաղան :

Պօյը սիւրանի , ճածիրդ պատուական ,  
Խիստ ես քաղցրախօս , նազլու՛ սիրական .  
Դու էլ կու մեռնիս , չես անմահական .  
Խնձ էր կու պահես տըսուր տըրտմական :

Մոցը կայ 2) երկու բաղար դառնիշան ,  
Մէկն Ըսպահան է և ծէկլն Քեաշան ,  
Ես որ կու տեսնեմ ճընամ փարիշան ,  
Բայ 3) թող հաճբուրեմ հաշտութեան նըշան 4) :

ԽԱ.

Տ Ա Ղ Ս Ի Ր Ո Յ

Լուսնի նրման պայծառ երես բոլորած ,  
Ես ճընացի կարօտ հաճբուրից համար .  
Վարսերդ ոսկի թելի նընան ողորած ,  
Ես ճընացի կարօտ ես տալոյ համար :

Անքերը կապել է կամար կըրակով ,  
Աչքերը վառել է պայծառ ճըրագով ,  
Ափսո՞ս 5) որ ծածկել ես բարակ լուչակով ,  
Ես ճընացի կարօտ տեսնելոյ համար :

Մոցիդ շամամներն խիստ է նորահաս ,  
Վախսմ թէ թառամի , շատ մի՛ կենար պաս .  
Թէ ինձ նըշանց ըստա՞ լնինես պատուհաս .  
Ես ճընացի կարօտ ձեռք տալոյ համար :

1) Զանազան : 2) Զեռ . Կա : 3) Զեռ . Բայց : 4) Զեռ .  
Հաշտութեան նշան՝ կրկնուած :  
5) Զեռ . Ափսոս :

Մէջքըղ նազլու բարակ՝ աղէկ լու պատան ,  
վախեմ թէ զիրկ 1) ածէ նաշի ճարդ նազան ,  
Քեսամար էլ ևս 2) կապեկ՝ առնըղ ա վարան 3) ,  
ևս ճընացի կարօտ զրկելոյ համար :

Բերանդ կարմիր զինի , լեզուկ համեղ նուշ ,  
Գու մինակ կու խըմես ու կ'անես անուշ ,  
Նազաշըն թողել ևս ծարաւ ու բեռշ .  
ևս ճընացի կարօտ խօսելոյ համար :

•••

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Քաղաք ևս Խութայի Մոսքով ,  
Խելքըս տարար անուշ խօսքով ,  
Ճակատը լըցի ևս սակւով ,  
Ռնբերիդ հետ խիստ է խառըն :

Կ'ելթաս նըստիս ամարաթըն ,  
Կու չողշողայ 4) քո սուրաթըն ,  
Քաղէանուն մէջի շօհաթըն ,  
Գու ևս նարինջին ծառըն :

Եկ միատեղ նըստեմբ սեղան ,  
Մոցիդ հմիշներն կու խաղան ,  
Քեզանէ նըռներ արմազան ,  
Ես բերեմ զինի և զառըն :

Մով աչքերիդ ճըռագ 5) վառ ,  
Ռնբերի կապած զալած զառ .  
Երիսդ կարմիր և պայծառ ,  
Խնչպէս մոճեր վառած ճառըն 6) :

1) 2եռ . Գիրգ : 2) 2եռ . Ալ էլ ևս : 3) Տունդ Հայրենիքս է :  
4) 2եռ . Էլ կու չողշողայ : 5) 2եռ . Զրագ : 6) Ճառ (lustre) :





Հայի Շահնշապէ (թօս այլոց՝ Ա. Մինոս)  
(Որմնանկար, Թանգարանին մէջ պահուած)

Ինձնէ վարդ ես առել տարել,  
Թուի վարսերիդ մէջըն շարել.  
Շատ վախա է աչքով չես արել,  
Խաբար չեմ ի՞նչ է պատճառըն :

Աչքերըդ լուսատու Փինար,  
Մոցըդ բաղչայ սալիլ չընար,  
Ես բաղեմ կարմիր գուլինար,  
Երբոր բարով զայ ամառըն :

Ես խիստ շատ եմ աղաղակում,  
Դու էր ես Նաղաջն անարգում,  
Խաբար ու զիր չես ուղարկում,  
Նըրա հածար խիստ եմ դաւըն :

ԱՊ.

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Առաւօտուց մէկ մի տեսայ զարդարած,  
Դու իմ խելքըն տարար , ես չունիմ զարար .  
Ուսկի շատ էր կապել՝ մարգարիտ շարած .  
Դու իմ խելքըն տարար , ես չունիմ զարար :

Լայն և սիպտակ ձակատ , երեսդ վարդի թեր .  
Շամալ կուռըդ մեկնէ ձայիկ դէպ ինձ բեր .  
Քեզ զանդ ու շաբար տամ իմ մեռօքըն կեր ,  
Դու իմ խելքըն տարար , ես չունիմ զարար :

Աչքերդ այնախանա 1), ոսկեղէն սուր այ 2) ,  
Սիահ արտեւանունքդ կապած է թուրայ ,  
Քո սէրըն կըրակ է , իմ սիրալն՝ բուրայ .  
Դու իմ խելքըն տարար , ես չունիմ զարար :

1) Հայելատուն, թերեւս՝ հայելանման իմաստով: 2) Ոսկի սուր է:

Ունքերըդ է հիլալ, վարսերըդ լողայ,  
ես բո սիրուդ կու կանչեմ նալայ :  
Մեր մշջի թշնամին անկանի 1) բարայ .  
Դու իմ խելքըն տարար, ես չունիմ դարար :

Լեզուդ քաղցրախօս հագարան բլբուն,  
Մէկ ձեռնիդ գինուոյ թաս, մշկ ձեռնիդ սըմբուն .  
Երեսիդ խալերըն կապած սիահ գուն 2) .  
Դու իմ խելքըն տարար, ես չունիմ դարար :

Մառի տակըն նըստեմբ քաղեմբ թագայ նուշ .  
Ծոցիդ եմիշներըն ես անեմ անուշ .  
Երեսիդ կու հայիմ կու ձընած բէուշ .  
Դու իմ խելքըն տարար, ես չունիմ դարար :

Մամերըդ ոսկեթել, բօյըդ է սալիի ,  
Թող ծամերըդ բո ծոցին վրայ ծալիի .  
Շատ մի՛ թողիլ նաղաշն որ ծաշիլ հարիլ .  
Դու իմ խելքըն տարար, ես չունիմ դարար :

■ ■ ■

**ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆՈՑ**

Եյսօր ցնծամբ պարելով ,  
Խընճէմք 3) զինի խնդալով ,  
Աստուծոյ փառըս տալով .  
Եյսօր ուրախութեան օր է ,  
Թասերըն 4) կարգաւ բոլորէ :

- 1) Զեռ. Անգալնի, Զեռ. 647, Անգանի (պորձանքի մէջ իշնայ)  
2) Զեռ. Գուլ:  
3) Եղմ. Ճեռ. թ. 604. Խճնդք: 4) Զեռ. 537, Թասըն. Զեռ.  
514, Թասերըն:

Սեղանըս լի է բարեաւ .  
Յեղ և ցեղ անուշ զինեաւ ,  
Գառըն , հաւեր և փըլաւ 1) .  
Այսօր ուրախութեան օր է ,  
Թասերըն կարգաւ բոլորէ՛ :

Սեղանըս է բէպուշար 2) ,  
Եղբարբ նստած 3) շարեշար ,  
Որպէս թագ ճարգարտաշար .  
Այսօր ուրախութեան օր է ,  
Թասերըն կարգաւ բոլորէ՛ :

Սեղանըս է բարելի 4) ,  
Պարոնայըըն 5) պատուելի ,  
Մէկ քան ըզմէկ 6) սիրելի .  
Այսօր ուրախութեան օր է ,  
Թասերըն կարգաւ բոլորէ՛ :

Այսօր նըման է վարդի 7) .  
Եւ ծառոց ծաղկաղարդի 8).  
Միրտ կու բացվի շատ ճարդի 9).  
Այսօր ուրախութեան օր է ,  
Թասերըն կարգաւ բոլորէ՛ :

Դուք որպէս աստղ պայծառ էք 10)-  
Վարդ և կնքըռուկ 11) հոտ առէք ,  
Քաղցըր ձայնիւ բարբառէք 12),  
Այսօր ուրախութեան օր է ,  
Թասերըն կարգաւ բոլորէ՛ :

1) Զեռ. 537 , Փլով . Զեռ. 412 , Փլաւ : 2) Այս և յանորդ  
տունը , օր կը պակսին 537 ձեռագրին մէջ , կը քաղենք թ . 412էն .  
Բէպուշար . կչմիածնայ ձեռագրին մէջ « Սեղանըս լի է բարեաւ . 3:  
3) Էջմ . ձեռ . թ . 604 , Եղբայրք նստեալ . 4) Էջմ . ձեռագրին մէջ  
այս տունը կը գանուի առաջին տունէն անմիջապէս , յետոյ : 5) Էջմ .  
ձեռ . Պարոնայք էք : 6) Զեռ . Քան ըզմէկ . Էջմ . Զեռ . Մէկ քան  
ըզմէկ : 7) Էջմ . ձեռ . Վարդին . 8) Էջմ . ձեռ . Եւ ծագկոց ծաղ-  
կաղարդին : 9) Էջմ . ձեռ . Շատ վարդին : 10) Այս տունը կը պակսի  
կչմիածնայ ձեռագրին մէջ : 11) Զեռ . 412 , Կնքըռուկի . 12) Զեռ .  
412 , Բարբառեցէք :

Տապակէք կարաւ և լոր,  
Դուք մեկ կարաս բացէք նոր,  
Տօլու խըմէք՝ տանձ խնձոր 1) .  
Այսօր ուրախութեան օր է ,  
Թասերըն կարգաւ բոլորէ :

Տէ՛ր ողորմեա՛, աէ՛ր , յիշեա՛ 2) )  
Կա՛րմիր զինի , սպիտակ շիշայ 3) ,  
Ուրախ կենացը 4) համիշայ .  
Այսօր ուրախութեան օր է ,  
Թասերըն կարգաւ բոլորէ :

Սեղանըն լի է ծաղէկ 5) .  
Վայոր քանց վաղըն աղէկ 6) ,  
Գինի խըմէք ծիծաղէ՛ք 7) .  
Այսօր ուրախութեան օր է ,  
Թասերըն կարգաւ բոլորէ :

Զիճան լինի կանանչ խոտ ,  
Մանուշակ սըմպուլի հոտ  
Մէկ խըմէք նաղաշի 8) մօտ 9) .  
Այս քանի սաղ է , ածէք՝ խըմի .  
Որ ճեռանի , տուք զողորմի 10) :

- 
- 
- 1) Զեռ. 437 , և իջմ. ձեռ. Դօլու խմէք տանձ խնձոր . 2) Զեռ.  
412 . Տօլու խմելք , տուէք խնձոր : 2) Զեռազրին մէջ՝ Ողորմեայ ,  
յիշեայ : 3) Զեռ. 537 , Շուշայ . Զեռ. 647 , Շիշայ : 4) Զեռ. 412 .  
Կերէք : 5) իջմ. ձեռ. Մաղիկ : 6) իջմ. ձեռազիր Աղիկ : 7) Զեռ.  
Եփաղեկ . իջմ. ձեռ. Եփաղիք : 8) Զեռ. Նաղաշն : 9) Այս վերջին  
երեք տողերուն տեղ 514 թ. ձեռազիրն ունի  
Գինի ամենք մէկ մէկու մօտ .  
Այսօր ուրախութեան օր է ,  
Թասերըն ևն .  
10) Թիւ 412 ձեռ. Երբ մեռանի՝ տուք զողորմի :





Ալյոստիւն Գրիգորի  
(Յլար)

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Կանչեմ թիվան ահուզարով 1),  
Դու ինձ 2) էր չես տալ բարով .  
Չեմ ձոռանալ հազար տարով ,  
Հալ ու ահվալ , եա՛ր , ամա՞ն 3) :

Դիտես որ ես սիրոյ տէր եմ ,  
Միրովը սիրովս կու երեմ .  
Քանի 4) քեզ միտօս կու բերեմ ,  
Խելք չի ճընար , եա՛ր , ամա՞ն :

Նոր ես եղեր թազայ ջիւան ,  
Ոչ ձար ունիս ոչ տիւան 5) ,  
Ինձ հետ ունիս ահտ ու փէրվան .  
Իմանակ գեալ 6) , եա՛ր , ամա՞ն :

Ի՞նչ կ'ելնի 7) տուշմանն անարդես ,  
Քո հասխաթըն թարկես 8) .  
Թէ ինձ մէշէկ խապար ուղարկես 9)  
Ես էլ չեմ լալ , եա՛ր , ամա՞ն :

Դանդ ու շաբար դու մի խորի 10) .  
Քանի՛ ծախիս ախմուրի .  
Հազել ես 11) կանանչ ծախմուրի .  
Երեսը ալ 12) , եա՛ր , ամա՞ն :

- 1) Թիւ 156 ձեռագրի օրինակին մէջ՝ իւրաքանչիւր տան առաջին ու երրորդ տողէն յետոյ աւելցուած կոյ ուրիշն ընակերպը ; 2) Զեռ . 537 , Ինձ . Զեռ . 156 , Ինձի ; 3) Զեռ . 156 , Հալ ու ահվալ , հէյ եայը ըման , Զեռ . 537 , Հալ ու ափալ , եա՛ր ամա՞ն ; 4) Զեռ . 156 , Քանի որ . Զեռ . 537 , Քանի ; 5) Բաել կ'ուզէ՛ ոչ գութ ունիս ոչ արդարութիւն ; 6) Հաւատրի եկուր (խիզճ ըրէ) ; 7) Ի՞նչ կ'ըլլայ ; 8) Բնաւորութիւնդ փոխես ; 9) Զեռ . Աղարկես ; 10) Կ'ուտես ; 11) Զեռ . 537 , Է , 156 , Ես ; 12) Կարմիր :

Ընկերիդ հետ վարդ կու բարեք ,  
Մէկըդ բանց մէկըդ աղեկ .  
Մէկ ձեռնիդ վարդ , մէկըն ծաղեկ .  
Ճակատիդ խալ 1), եա՛ր , աճա՛ն :

Ոնքերըդ է կապել կամար ,  
Եշերըդ շամսի զամար .  
Դու սէֆիլ Նաղաշին 2) համար՝  
Աղրանիք ու ճալ , եա՛ր , աճա՛ն ,

¤¤

**ՏԱՂ ԲՈՒԽ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ**

Եկա՛յը այսօր , որդի՛ք ճարդկան ,  
Ծնձացուք ճայնիւ միաբան ,  
Զի եկեալ է բարեկենդան .  
Ըծէ՛ք խըճէ՛ք կարմիր կթիսան 3) ,  
Գընա՛ լի՛ց բե՛ր զինու շուշան 4) :

Ժամանակ է թաղայ դառան ,  
Անուշ հոս կուպայ ամառան ,  
Նըստէք , բարեկամք և եարան 5) .  
Ըծէ՛ք խըճէ՛ք կարմիր կթիսան ,  
Գընա՛ լի՛ց բե՛ր զինու շուշան :

Սեղան զարդարէք աճանով ,  
Քուժիման պիպարով 6) չաճանով ,  
Ուրախացէ՛ք տեղով տանով ,  
Ըծէ՛ք խըճէ՛ք կարմիր կթիսան ,  
Գընա՛ լի՛ց բե՛ր զինու շուշան :

1) Եթն , signe de beauté : 2) Զեռ . Սէյֆիլ Նախաշին :  
2եռ . 166. Նախաշ Յօգանէսին :  
3) Զեռ . Կթղայն . Զեռ . 369 . Կթիսան : 4) Զեռ . Շուշայն . Զեռ .  
493 . Շուշան : 5) Եարեք , սիրականներ : 6) 493 . Քիւժիմէն պիպեռով :

Մէջիսըն ձըգեցէք տուզան 1),  
Կարմիր զինովլ լըցէք բուզան 2),  
Կանչէք աճէք կարասուզան 3).  
Ածէք խըճէք կարմիր կթիսան,  
Գընա՛ լի՛ց բե՛ր զինու շուշան:

Պինդ լըցէք տօլու ի թասըն,  
Զընի ճարդոյ տաք վընասըն.  
Քանի եկած չէ ճեծ պասըն,  
Ածէ՛ք խըճէ՛ք կարմիր կթիսան,  
Գընա՛ լի՛ց բե՛ր զինու շուշան:

Շաբաթը զարտկեցէք ճառան,  
Մեծ պասըն ճեղ ապաշխարան,  
Շուտ արէք, ուտիսըն տարան.  
Ածէք խըճէք կարմիր կթիսան,  
Գընա՛ լի՛ց բե՛ր զինու շուշան:

Բերէք տաղարան շարական,  
Թողէք ճանկունք ճայնիւ կարդան,  
Թիշեցէք նաղաշ Յովնաթան.  
Ածէք խըճէք կարմիր կթիսան,  
Գընա՛ լի՛ց բե՛ր զինու շուշան:

ԲԵ

Տ Ա Ղ Ս Ի Բ Ո Յ

Ելեալ հս այվանն ,  
Դու կ'անես սէյրան ,  
Մարալ չէյրան , չալապուծ 4), հս բեղ հմ հէյրան :

1) Զեռ. Դուզայն . Ճեռ. 369 , Տիւզէն : 2) Զեռ. Բուզայն .  
2եռ. 514 , Բիզան (բաժակներ): 3) Զեռ. Դարադուզայն . Զեռ. 493 ,  
Կարասուզան : 4) Զելեպիս , աէրս :

Սամերըդ 1) ոլոր ,  
Աչերըդ բոլոր ,  
Միրելի նոր , չալապում , ինձ արիր ճոլոր 2) .

Դըրձըզի չուխայ ,  
Կ'ասեմ խիստ չուխ այ 3)  
Խօսքըն քաղցըր , չալապում , ունքերըն թուխ այ :

Արիշդ է գուման ,  
Աըրմայի նման ,  
Մեռա՛յ , ամա՞ն , չալապում , սմբուլ եասաման :

Վարդը որ բացվաւ ,  
Վահըըս շատացաւ ,  
Քեզնէ ի զատ , չալապում , ոչ ով չիմացաւ :

Թէ ունիս . . . 4) ,  
Խնձ աչըով արա ,  
Ուրախանամ , չալապում , խիստ եծ բէշարայ :

Դու զըրձըզի դուկ ,  
Ես չէյտայ բըլլուկ ,  
Խիստ եծ ճաղբուլ , չալապում 5), Նաղաշն քեզի դուկ :

### ԱՅ

## ՏԱՂ ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐՆ

Յանձարմնոց վերօրհնեալ ,  
Մարիամ , կոյս զովեալ ,  
Ես եծ մեղօք մեռեալ ,  
Յարո՛ 6) զիս և ընկալ :

1) Զեռ . Զամերդ : 2) Զեռ . Մոլար : 3) Զեռ . Զուխայ : 4) Բառ  
Ժը պակաս . Ճեռագրին Ժէջ աեղը բաց ձգուած : 5) Զեռագրին Ժէջ  
կը պակսի՝ Զալապում : 6) Զեռ . Յարոյ :

Ոսովսն այն սըրտմըսեալ,  
Մախանօք գուն գործեալ,  
Ծանցիւ զիս ըմբռնեալ,  
Օդնեա' ինձ, կո՛յս օրհնեալ:

Վիպասան ես լացից  
Եւ դոշեալ թաքուցից  
Պարտուց իմոց ըզգիծ.  
Զնչեա', ո՞վ կոյս անբիծ:

Նըւագեմ պաղատանս,  
Որս և անօդնականս,  
Ո՞վ դու աստղ լուսափալ,  
Պարզեւեա' ինձ փրկանս:

Անազօտ վառ պահեալ  
Զիմ հոգուց ըզգապտեր,  
Միշտ հայցեա' Որդոյ քո 1)

Թեւօք թունաւորին  
Թձրեցայ ես խորին.  
Զիս արթնացն՝ և մո՛յծ  
Ի տուն երկնաւորին:

Արար զմեղս իմ պատճէշ  
Թշնամին չար և դէշ.  
Զայն ցրուեա' իսկապէս,  
Մա՛ռ կենաց բարձրապէս 2):

Նըմանեցայ խոզից՝  
Զանդիսող ճարգարտից,  
Կամ իբրեւ անառակն  
Որ վատնողն էր ընչից:

1) Այս տառն չորրորդ տողը կը պակսի ձեռագրին մէջ:  
2) Թերեւո՛ բարձրատես:

Եին ճա՞յր սրբութեան ,  
Ազաշեա' առ Հօր Բան՝  
Սիրով գալ ընդ առաջ ,  
Տալ ողջոյն հաշտութեան :

Խօն

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ԱՅՎԱԶԻՆ ԶՐԱՊԱՑԻՆ

Յամենայն ժամ տացուց փառս տեսան Աստուծոյ ապենիտալին 1) ,  
Քանզի ևս կարօղութին մեզ հարազատ եղբայր Այլազին :  
Ծնծութեածք և խնդութեածք խմէ՛ք սիրով միաբանական ,  
Եղբայրը պատուական :

Որ և հատեալ յապառած տեղիս վայրի և խոտան ,  
Եւ կանզնեաց ի նոյն տեղուջն ջրաղաց խիստ վայելական ,  
Ծնծութեածք և խնդութեածք , ևն:

Ահաօրէից նմանեալ շուրջանակի պարիսաղ բարձրացեալ ,  
Նորասունկ կանանչ այզի ծաղկունք և ծառ սլողով սիրացեալ .  
Ծնծութեածք և խնդութեածք , ևն:

Կորափոր զնայց առուց փրփնջագոչ պաղպաջոնակ 2) ,  
Նոյն ջրովն ի գործ ածեն ջրաղացն որ է պատուական .  
Ծնծութեածք և խնդութեածք , ևն:

Այլ և ցուրտ աղբիւր բղիսեալ քաղցր և անուշ խիստ զովելի ,  
Աւազն ջրով լցեալ պարզ և մաքուր որպէս հայելի .  
Ծնծութեածք և խնդութեածք , ևն:

Թունկ և կուժ զինով լցեալ ի մեջ ջրոյն սաստիկ ցրտացեալ ,  
Զըրոյն երեսն միրգ և ծաղկունք , վարդ , ըռեհան , խնծոր կարմրացեալ .  
Ծնծութեածք և խնդութեածք , ևն

1) Զեռ. Յապենիազին : 2) Զեռ. Պաղտաջունակ :

Աղաջիմ , յորժած տաղս եղանակէք՝ կեանըս խնդրեցէք ,  
Այլազն տօլուն խըմք ի մի բերան բարին յիշեցէք .  
Ծնծութեամբ և խնդրութեամբ , ևն:

Կա և պարտիք հանապազ սեղան բաղմիլ աստ ուրախանալ ,  
Նարազրօղ սակաւ բանիս նուաստ նախաշըն մի՛ ճռռանալ .  
Ծնծութեամբ և խնդրութեամբ , ևն:

1.

**ԽՐԱՏ ՊԻՏԱՆԻ ՎԱՅՆ ՀՈԳԻՈՅ**

Փառք և գոհութիւն տամբ մեր ըԱտեղծողին ,  
Որ մեղ համար տնկեաց ջաննաթի 1) բաղըն .  
Կերակուր հաց զինի մեղ պարզեռողին ,  
Ելնենք հող և ճոխիք ծառայ ճատաղըն :

Մէջլիս պիտի նըստիլ աղամիանայ ,  
Հաղիղաթի 2) խօսքերն ամէն իմանայ ,  
Եւր հոգւոյ բաղչացին դըռներըն բանայ ,  
Որ էն 3) կեանբըն քաղէ ծաղիկ զանբաղըն 4) :

Սողոմոն թագւոր և Աղեքսանդրը ,  
Հիմէ ուր է մեծ ճարդ բանց նորա ճանտըր ,  
Չըտարան յաշխարհէս մէկ հիլալ սահտըր .  
Զանը արա՛ ժառանդէ՛ երկնից չարպաղըն :

Դունեա , թէ զու ի՞նչ խարեբայ զունեա ես ,  
Սուտ երազ անցաւոր , խիսո բէրափա ես ,

1) Զեռ . Զաննաթէ : 2) Զեռ . Հողիղաթ . Հաւկառը (արդարութիւն) բառն ըլլալու է : 3) Զեռ . էր : 4) Զեռ . Զամրզն : Այս չորս տողերը կը թուին սա իմաստն ունենալ . « Մարդ պէտք է ընկերութեան մէջ բարուս ուս վարուի , արդարութեան խօսքերուն հետևող ըլլոյ , իր հոգւոյն պարտէզին գաները բանայ , որպէս զի հան-ըերձեալ կեանքին մէջ քաղէ շուշան ծաղիկը :

Նաստ աշխ քեզ համար՝ ջավոր ու ջափայ ես ,  
էնտիպար չըտեսայ էս օրէն վաղլն :

Նաստ մարդիկ աւելի աշխատին գանձեն ,  
Նոր շինութեան համար միտք ածեն տանջեն ,  
Էս գիշեր հոգիդ ի բաց 1) պահանջեն ,  
Ետոյ չեկաւ Պարոսի ծիծաղլն 2) :

Ո՞վ ճարդ , որ հարուստ ես գառքաֆով փողով ,  
Գու մի՛ լինիր հըպարտ ճակատով կողով ,  
Վաղլն մերկ մարմինը կը ծածկեն հողով ,  
Վերայ գերեզմանիդ ղընեն դադաղլն :

Կապեր ես ոսկեղէն դուրշախ քեամարըն 3) ,  
Ո՞նց ես անց կենալոյ հրեղէն կամարըն .  
Տալոյ ես քո մեղաց թիւ և համարըն ,  
Քո հան ո՞նց լինի , եարա՛ք , էն չաղլն :

Դու շխտակ հողագործ մարդոյ նըման ես ,  
Էն կու հընձեն 4) ինչ որ ձեռօքդ սերմանես .  
Սըրտումըդ սէր տընկես , նախանձըն հանես 5) ,  
Նուտով կ'երթաս դըրախտի այգէբաղլն :

Դու պատուէ՛ վարդապետըն ու քահանէն ,  
Հոգւոյ իշխանէն՝ Քրիստոփ հրամանէն՝ .  
Օրհութիւն անողակաս արա՛ քո տանէն ,  
Նոքա են մեր հոգւոյ կերակրին աղլն :

Աղքատըն տա՛ր տունըդ կըշտացո՛ւր փորըն ,  
Մերկութիւնըն ծածկէ՛ , հաղըցո՛ւր շորըն ,  
Հին շորին փոխարէն յետ կ'առնուս նորըն ,  
Հողիդ կու մըտանէ՛ լուսոյ օթաղլն 6) :

1) Զեռ. Ի բայց : 2) Թերեւո՞ Պաղարօսի : 3) Քուշաբ քէմէր ,  
գօտի : 4) Զեռ. Հնձեն : 5) Զեռ. Հայնես :



Միմայէլ Հրեսակոսէս  
(նկար)



Մարդոյ աշխատանք մի՛ ճռռանար հարդիկ .  
Քո ծընօղըն պահէ՛ զինչ վարդ ու նարդիկ .  
Կ'ուզես զընա կին , Խսպահան , Թարդիկ .  
Քո դրկիցն 1) է քեզ պէտք ու քո օյժաղըն :

Պաս կու պահես ու սէր չունիս՝ էն ասէ՛ .  
Խ'նչ օգուտ սատանայէն՝ ամէն օր պաս է ,  
Որ անդեղջ նախանձուտ չար ու վասվաս 2) է .  
Անշէջ կըրակըն է նորա եաթաղըն :

Երբ քո ընկիր եղբարց կու փորես չարըն ,  
Քո սոտըն կու ընկնի թալակին տակըն .  
Դըրուտտ է Աստուծոյ մեզանն ու քարըն .  
Գու քո սըրտէն հանէ՛ ծուռ բայդաղըն :

Դու մի՛ սիրեր սուտըն բուֆր ու բօհտանըն ,  
Դըրուտտ արա՛ աղքատի դատաստանէնն ,  
Մեղայ տուր աղօթէ՛ Աստուծոյ տանըն ,  
Կու լըսես հրեշտակաց սաղերն ու տաղըն :

Նաղա՛շ Յովլաթան , մեղքերը շատ է .  
Եկ զԱստուտած շատ սիրէ՛ , աշխարհըս ատէ՛ .  
Հինգ կազ կտաւ պահէ՛ մարմինդ պատպատէ՛ ,  
Մէկ "հայր մեղա՛յ" ասէք խօսքերըն սաղըն :

### ՏԱՐ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Յաւուրս գարնան ժամանակին՝  
Փթթեալ ծաղկեցաւ այգին .  
Հընչէ՛ քաղցըր ձայն տատրակին .  
Ելէ՛ք , եղբա՛րը իմ , ցընծալով ,  
Ուրախութեամբ և պարելով ,  
Մափլս ծափի հարկանելով :

1) Զեռ. Գրկից : 2) Վասվաս , կասկածուտ ?

Ես կատու եմ, ոտքըս արագ,  
Մըկանց ես խիստ եմ հակառակ,  
Ահա ամենըըդ հասարակ,  
Զձեղ առնելոց եմ խայտառակ 1) :

Ես կատու եմ, ճըկանց եաղի.  
Սըրտուծըս զըրել եմ դաղի.  
Զարուիս շինեմ Ղարաբաղի<sup>2)</sup> 2)  
Ով որ եկել է 3) ինձ թաղի :

Ես արջ 4) կատու եմ դազըման 5),  
Զձեղ քըշեմ չուր ի Մարզըւան.  
Հիմա կ'անեմ ախըր դաման,  
Փորըս շինեմ ձեղ գերեզման :

Բերած են ալիւր և եղ հին 6),  
Որ հոգոյս համար հաց թըսին .  
Հիմա կոխեմ ձեղ մէջ ցըսին,  
Ամէտն սեւ անեմ ձեր զլիսին :

-----

1) Այս առւնը կը պակսի Ք. Հի օրինակին մէջ: 2) Զեռ.  
Ղարաբաղի: Ք. Հ. Ղարաբաղի: 3) Զեռ. Օվ որ եկեալ է: Ք. Հ.  
Ով որ եկել է: 4) Զեռ. Առջ. Ք. Արջ: 5) Զեռ. Տըզման.  
Ք. Հ. Դազըման: 6) Ք. Հ. Բեր ածեր այիւր, եղ և խին:



Ա. Առուածածին  
(Նկար, սրբագրէ համանչաւոր ուղարքակի մէջ)



Ա. Պ.

ՏԱՊ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ \*

Կատինձ 1) ի մեջիս, հարք և եղբարք և մեծ պարոնայք,  
Գոհանամածք զՏեառնէ, ունիմք սեղան 2), դուք միշտ շէն կենայք,  
Խնդրեմք 3) որ այսօր քան զամէն օր շատ ուրախանայք.  
Թասերըն չինի, կարմիր վինի, ձեզ անուշ լինի,  
Աղալա՛ր, ձեզ անուշ լինի :

Ա՛յ տակառապետ, տաճարապետին գընա՛ իմացո՛ւ 4),  
Կարապան բա՛ց, ե՛կ խապար բե՛ր, զմեղ ուրախացո՛ւ .  
Սուրահեցըն տա՛ր 5), շուշացըն բե՛ր, թաս մի խըմացո՛ւ .  
Թասերըն չինի, կարմիր վինի, ձեզ անուշ լինի,  
Աղալա՛ր, ձեզ անուշ լինի :

Ղալապալուկ է, բէֆըն հասել այսօր խիստ աղէկ,  
Մեղանըս լրցեալ միրգ և ձաղէկ, չինի վեր բաղէք .  
Իշտահով կերէ՛ք, սրտով խըմե՛ք, ուրախ ծիծաղէ՛ք .  
Թասերըն չինի, կարմիր վինի, ձեզ անուշ լինի,  
Աղալա՛ր, ձեզ անուշ լինի :

Ապա ում սրտի քէն ունի՛ հանի, հաշտութեամք 6) ճընայ,  
Լաւ մարդն այն է՛ ոնց 7) որ եկեալ այլ այնպէս զընայ .  
Աստուած կու սիրէք, մինչեւ օրհնելըն մարդ չի վեր կենայ .

\* ) Այս տաղին համար հետեւած ենք Կոստանեանի օրինակին  
(Միութենաւութեան բառութեան մեջ ուրիշ օրինակներու նախ-  
ընտրելի տարբարութիւններէն : 1) Կոստ. օր. Նատէք . ձեռ. թ. 730  
Ա. Ղազարու, Նստիմք : 2) Կոստ. օր. Գոհանամք ի տեառնէ որ ու-  
նեմք սեղան . Ա. Ղազարու. թ. 730 ձեռ. Գոհանամք զտեառնէ,  
ունիմք զսեղան : 3) Կոստ. օր. Խնդրեմք. Վիեննայի Միութեարեանց  
647 ձեռ. խնդրեմք : 4) Կոստ. օր. Խմացո, ուրախացո, խմեցո,  
Վիեն. Միութ. ձեռ. 412, Խմացու, ևն : 5) Կոստ. օր. Տալ, Վիեն.  
Միութ. թ. 647 ձեռւագիր, Տար : 6) Կոստ. օր. Հաշտութեան, Վիեն.  
Միութ. թ. 647 ձեռ. Հաշտութեամք : 7) Կոստ. օր. Հոնց :

Թասերըն չինի , կարմիր զինի , ձեղ անուշ լինի ,  
Աղալա՛ր , ձեղ անուշ լինի :

**Չօռ.** մէզէն համեղ , զինին զօրեղ , դուք անուշ արէ՛ք .  
Մինակ մի՛ ուտէք , բաժանեցէ՛ք , հաւասար շարէ՛ք .  
Սազերըն ածէ՛ք , տաղերն կանչեցէ՛ք , ծափ տուք և պարէ՛ք ,  
Թասերըն չինի , կարմիր զինի , ձեղ անուշ լինի ,  
Աղալա՛ր , ձեղ անուշ լինի :

Է՞ր չէք խնդալիս որ այսօր ունիմք լաւ զինի սառըն ,  
Դապլը և խորով , հաւ քեապապներ , խաշլամայ զառըն .  
Եյս մէջիստմըս տըխուգ և դառըն ճարդըն չէ խառըն .  
Ցիշէ՛ք Յովսաբան , Խըմէ՛ք զինի , ձեղ անուշ լինի ,  
Աղալա՛ր , ձեղ անուշ լինի ,

Լ. Կ.

ԱՂՈԹՔ ԵՒ ՏԱՐ ԳՈՎԱՍԱՆՈՒԹԵԱՆ ԱՌ Ա. ԱՍՏՈՒԱՉԱԶԻՆՆ

Ամենօրհնեալ Աստուածածին ,  
Տաճար և ճայր անճառ Բանին ,  
Բարեխօսեա՛ 1) առ քո Որդին՝  
Մեղ ողորմիլ զըթով քոյին :

Գաբրիէլեան ձայնըն լլուար ,  
Աւետեաց ողջոյնն ընկալար ,  
Դու ի Հոգւոյն սրբոյ յղացար  
Եւ դիմանն Աստուած մարմնով ծընար 2) :

Երանե՛ալդ 3) ի հրեշտակաց ,  
Միշտ բարեխօս զբեղ տօնողաց ,  
Ջօրեղ բըժիշկ դու հիւանդաց ,  
Ըզմեղ փըրիեա՛ ի փորձանաց :

1) Զեռ. Բարեխօսեայ : 2) Զեռագրին մէջ այս տողը նախորդ  
տողէն առաջ դրուած է սխալմամբ : 3) Զեռ. Երանեալք :

Էակցին հօր սուրբ քնակարան,  
Դասեալ ի լուսեղէն խորան,  
Ըզբեղ գովին աղինք մարդկան,  
Եւ գունդը 1) ղիւաց սարսեալ ղողան :

Թագ և պլսակ սուրբ կուսանաց,  
Պարծանք քրիստոնէից աղզաց,  
Ժառանդ եկեր մեծ աւետեաց,  
Ընդունակ եօթնարփեան շնորհաց :

Ի քէն հայցենք բաղկատարած 2),  
Լըսէ՛ ձայնի մեր մաղթանաց,  
Եկր բարեխօս միշտ անճռռաց  
Առ քո որդին Քրիստոս զըթած 3) :

Խաւար հոգւոց մերոց՝ մերծել,  
Աչըս ճըտաց լուսաւորել,  
Մանըր մեղաց ըզմեղ փըրկել,  
Իւր 4) տեսութեան արժան առնել :

Վենդանի սուրբ տապանակ,  
Որ յարգանդի քում օրինակ,  
Հրեղէն կամար, լոյս աշտանակ,  
Լուսաւորեա՛ զմեղ նոյնգունակ :

Ջայն տատրակիդ խորհրդաւոր,  
Երեր 5) գարուն հոգեւոր.  
Ղածքարափայլ 6) ջահ լուսաւոր,  
Զմեղ հրաւիրող զդասս երկնաւոր :

Ճրագ լուսատու հոգւոց մարդկան,  
Եւ աստղ պայծառ առաւօտեան,  
Մարիամ, մա՛յլ ողորմութեան,  
Դու մեղ օգնեա՛ ի ժամ մահուան :

1) Զեռ. Կունդը : 2) Զեռ. Բագկատարաց : 3) Զեռ. զՔրիստոս  
գթաց : 4) Զեռ. Զիւր : 5) Զեռ. Եգեր : 6) Ղամբարափայ :

Յուսով սիրով անեզրական  
Ցանկամ տեսոյդ , վա՛րդ կարմրերփեան ,  
Նարդոս ծաղի՛կ և պալասան ,  
Հզմեղ պահեա՛ միշտ անսասան :

Նընորհազարդ անթառամ ծա՛ռ ,  
Քան գարեզակն պարզ և պայծառ ,  
Ոսկի անոշահոտ բուրգվա՛ռ ,  
Մեր փրկութեան եղեր պատճառ ,

Ջընաղագոյն գանձըդ բացեր ,  
Ալըն անզին մեղ չնորհեցեր ,  
Պարտիս զնախամօրըն լուծեր ,  
Զձեղ մահուանէ ազատեցեր :

Ջո՛ւր անմահ մեղ արբուցեր ,  
Եւ հաց կենաց պարզեւեցեր ,  
Ջա՛հ լուսոյ մեղ ծանուցեր ,  
Եղեծ զրախալին դուռըն բացեր :

Սըրբուհի՛ անարատ կոյս ,  
Մեղաւորաց ապաւէն յո՛յս ,  
Վասն իմ մաղթեա՛ առ տէր Յիսուս ,  
Լե՛ր ազատիչ անկեալ զերոյս 1) :

Տո՛ւնկ պտղաբեր անմահական ,  
Գեղեցկափայլ արփիանման ,  
Բամեալ լուսի՛ն բոլոր լըրման ,  
Զձեղ սուրբ տեսոյդ արա՛ արժան :

Յօղաբեր ա՛մպ և սի՛ւն լուսոյ ,  
Պանձալի թագուհի՛ արգոյ 2) ,  
Իիւսեալ պլսա՛կ եկեղեցւոյ ,  
Զձեղօք մեռեալս կենդանացո՛ :

1) Զեռ. Անգեալ կերոյս : 2) Զեռ. Արգոյ :





Ս. Վարդան Մովսեսյան  
(Նկար)

Փութացի՛ր, կո՞յս անապական,  
Քո ծառայիցս լե՛ր օգնական .  
Քեզ երգելով զերզս օրհնութեան,  
Տացու՛ք փառք սուրբ Նըրորդութեան :

Լ.Ե

**ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆՈՅ**

Յարաժամ ճատուսցուք տեառն Շատուծոյ գոհութիւն,  
Որ պարզեւեաց մեզ սեղանս այսքան բարութիւն .  
Խնդրեմք որ հոգւոց մերոց տացէ երկնից արբայութիւն,  
Սիրով խըմեք, խալաղութեամբ ուրախ լիցուք :

Ուրախութեան օրն այս է, չեղնի կենայք դառն .  
Տես քանի՛ ցեղ եփեալ և խորովեալ դառն .  
Գառնափլաւ խորովին հետ կարմիր զինին խիստ է խառն .  
Սիրով խըմեք, ևն .:

Վարդ ըռեհան և դարանֆիլ ծաղկունք խորհրդաւոր,  
Եռչէք լըցեալ կարմիր զինի բաղցրահամ դօրաւոր,  
Գեղնագոյն տանձ, սերկեւիլ 1), կանանչ խիար, կարմիր խընծոր,  
Սիրով խըմենք, ևն .:

Նարգիզ, զամպաղ և սուսամպար, եասաման և սընպուլ .  
Մանկունքն երգեն տաղ շարական քաղցր որպէս բլբուլ .  
Մարմանաւոր ուրախացէք, հոգեւորին մի՛ կենայք ծոյլ .  
Սիրով խըմեք, ևն .:

Աստուած սիրէք՝ ում սըրտում նախանձ կայ հանի,  
Զերայ մեռաննելոյն յետն 2) մարդ շատ կու փոշիմանի .  
Սուս աշխարհըն 3) անցաւոր է, մութն երազ կու նըմանի .  
Սիրով խըմեք, ևն .:

1) Զեռ. Տանց սըրկեւլ : 2) Զեռ. Հետն : 3) Զեռ. Յաշխարհէս :

Թթոյլ միք տալ որ եղբայրութեան սէրըն հովանայ 1),  
Զէրս յաշխարհն օր քան զօր չարըն կու շատանայ .  
Թասըն զինի լից տուր խըմեծք, ում որ իշտէն չունի՛ բանայ .  
Միրով խըմեց, ևն .:

Այլ և ճաղայ չարազ առէց, դամով ուրախացէց,  
Միմեանց ծօս տօլու խըմեց, մէկ լաւ կարսս բացէց .  
Վարդէջուր անուշ կընդուռ հոս առէց և զուարձացէց .  
Միրով խըմեց, ևն .:

Նաղաշն օր այս գառըն կեանքըս մէկ օրէն հիւր է,  
Վաղըն մեռնիմ կ'ասին "Նաղաշ Յովսաթան ուր է".  
Մեղ ողորմի տուողի հոգւոյն անմահութեան հոտըն բուրէ .  
Միրով խըմեց, ևն .

1.2

ՏԱԴ ՍԻՐՈՑ

Առաւօտուց գա՛մ քո տեսուն, նա՛զանի .  
Ըռահն արա, զալ՛ւմ քեափիր, ամա՛ն, ամա՛ն .  
Փալէ քո կարմիր երեսըն, նա՛զանի ,  
Ինսափ արա, զալ՛ւմ քեափիր, ամա՛ն, ամա՛ն :

Էլ նոր պայծառ ըռախոտ հազար 2),  
Ինձ կ'անես դարթլու գունահքար,  
Զալ՛ւմ եար, էշ, մէկ պազ 3) տալոյ համար կուտաս ինձ բարեցար .  
Ըռահն արա, ամա՛ն, ամա՛ն :

Վարսերըդ քամի կու տանի ,  
Խակերըդ նըման ռեհանի ,  
Զալ՛ւմ եար, էշ, խօսքերդ հոգիս կու հանի .  
Նազլո՛ւ եար, ինսափ արա, ամա՛ն, ամա՛ն :

1) 2եռ. կու հովանայ : 2) Զեռ. Հաքար : 3) Զեռ. Պաք :

Աչքդ ունցելով լարած աղեղն,  
կու խոցէ արդար անմեղն .  
Զալո՛ւմ եա՛ր , է՛յ , դարթլու սըրախս արա՛ դեղն .  
Նազլո՛ւ եար , ըռահճ արա , ամա՛ն , ամա՛ն :

Քո ծոցըն ծաղկանց բուրաստան ,  
Եւն քաղաք է Ֆըռանզըրատան ,  
Զալո՛ւմ եար , է՛յ , ի՛նչ անեմ , չունիս դատաստան .  
Նազլո՛ւ եար , ինսափ արա , ամա՛ն , ամա՛ն :

Դու դաս անց կենաս մեր դուռըն ,  
Զառ զառքափով տըված փուռըն .  
Թերեծ դուրս գինի և նուռըն .  
Նազլո՛ւ եար , է՛յ , ըռահճ արա , ամա՛ն , ամա՛ն :

Քոյ ծոցըն բեռըն բարխանայ ,  
Նոր է եկած Հաշթարիսանայ 1) ,  
Զալո՛ւմ եար , է՛յ , թող նաղաշն իւր ձեռօրն բանայ ,  
Նազլո՛ւ եար , ինսափ արա , ամա՛ն , ամա՛ն :

## Լ. Ե.

### ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ Ի ՎԵՐԱՅ ՍԵՂԱՆՈՑ

Ցորժամ որ ճարդասէրն Աստուած պարգևեաց մեզ զայս բարիս ,  
Եյսօր բազմիլ ի սեղանիս լըցուցանել ըզկարիս ,  
Պարտինք ընտրել ըզպարութիւնս , մերժել ի մէնջ ըզչարիս ,  
ԱՃԵ՛ք խըմե՛ք կարմիր գինի , խըմողն ուրախ լինի :

Ուրակս որ ճարդարէն Դաւիթ ասէ բան վըկայական ,  
Գինի ուրախ առնէ , իւղ՝ զուարթ , հաց հաստատէ զսիրս ճարդկան ,  
Նոյնակս և մեր ճաշակեսցուք իւղ և ըզհաց ճարմնական ,  
Այլ և խըմե՛ք անուշ գինին բաժակէ անապական 2) :

1) 26n. Հայ Ձարիխանայ : 2) 26n. 412, Աճէք Խմելք կարմիր  
գինին :

Ա արդըն որ փըթթեալ բացուի և այլ ծաղկունք զանազան,  
նառոց պլտուղ անուշանամ, հոս կընդըրկի պատուական,  
Մէջմիսըն զարդարեալ ցընծայ զինչ զըրախսն եղեծական.  
Աձէք խըմէք կարմիր զինի, խըմողըն ուրախ լինի:

Կ ողուլ փարվարդայ և շաբար, նուշ ու ֆըսդուղըն բաված.  
Թազայ զառըն, համեղ ձուկըն, հաւ և կարաւ խորոված,  
Հիլ դարչընով զապի փըրա. 1) խորովան վըրայ դըրած,  
Գոհանանամք զԱստուծոյ որ զայս ամէն 2) նա է պարգիւած.

Ա նմանութեան հոտըն բուրէ աստուաճազարդ սեղանէս,  
Խընամըն և շնորհքըն Քրիստոսի անպակաս լիցի տանէս.  
Բարեխօս ունիմք Տիրամայըն և Մըկըրտիչն Յոհաննէս.  
Աձէք խըմէք կարմիր զինի, խըմողըն ուրախ լինի:

Ո մէ ձեզըն խըռով մարդ կայ՝ ելէք սիրով հաշտեցէք,  
Վասըն արեանըն Քրիստոսի և դուք միմեանց շնորհեցէք.  
Յայնժամ կարէք լըսել զձանըն թէ զրախտըն մառանզեցէք.  
Մարմետի խըմէք ուրախացէք, հոգով մեղաց զըղջացէք :

Ա սացեալ է թէ ամէն մարդ լաւ զինին յառաջ պաշտէ,  
Ո՞վ տանստատէք, լաւ զինի բեր՝ թէ սիրաըդ մեղ հետ հաշտ է.  
Հիմայ էլ պահես ո՞ւմ համար, ծողովուրդըդ երաշտ է.  
Աձէք խըմէք կարմիր զինի, խըմողըն ուրախ լինի :

Ե որ թասեր արծաթ կամ չինի բերէք տօլու խըմեցէք,  
Կինզանեաց և ննջեցելոց ողորմութիւն խնդըցէք.  
Ո՞վ մանկունք սուրբ եկեղեցւոյ, քաղցըր ձայնիւ երգեցէք.  
Մեղ կերակուր պարզեւողին փառըս տուք և օրհնեցէք :

Է մոխիր նաղաս Յամաթման, զործով զազիր անմաքուր,  
Պարարտացար մարմինդ արիր ամեցուն որդանց կերակուր,  
Երթ աղաջեա՛ առ տէք Քրիստոս, զոհանալով փառըս տուր.  
Յորժամ զայցէ ի զատաստան, զմեզ փրկեսցէ յայնմ աւուր 3):

1) 2եռ. Փլով. թ. 412, Փլուաւ. 2) 2եռ. Ամենայն, թ. 412,  
Ամէն: 3) թ. 412ի օրինակին մէջ այս տունը կը պակախ:

ԱՅ

ՏԱՂ ՍԻՐՈՅ<sup>\*)</sup>

Ասել ես թէ զարնան վախտը,  
Սիրակա՞ն, աճա՞ն 1)  
Որ բացուի ծեր պաղչին վարդը,  
Քեզ ցոյց կուտամ ծոցիս զարդը.  
Սիրակա՞ն,  
Աճա՞ն, եկ պաղչէն, այս է լաւ վախտը,  
Բացուել է վարդը:

Վարդ դըրկեմ քեզ կոկոն թագալ,  
Սիրակա՞ն, աճա՞ն.  
Գըրեմ թըրթով 2) սիրոյ արդը,  
Եկ պաղչէն, բեր ըրախ մազա.  
Սիրակա՞ն,  
Աճա՞ն, եկ պաղչէն, այս է լաւ վախտը,  
Բացուել է վարդը.

Վարդագոյն երեսդ է փայլուն 3),  
Սիրակա՞ն, աճա՞ն,  
Խճ գեղեցիկ նազու խաթուն,  
Ահա եղեւ օրհնեալ զարուն.  
Սիրակա՞ն, աճա՞ն,  
Աճա՞ն, եկ պաղչէն, այս է լաւ վախտը,  
Բացուել է վարդը:

Վարդագոյն երեսդ է փայլման,  
Սիրակա՞ն, աճա՞ն,  
Դու վարդ ես, պիւլպիւլի նըման՝  
Քանի՛ խընդրեմ, աճա՞ն, աճա՞ն.

<sup>\*)</sup> Այս տապը, զոր օրինակած ենք Ախենայի Միսիժարեանց  
թիւ 156 ձեռագրէն, թիւ 537ի օրինակին մէջ կը պակսի:  
1) Զեռ. Ըման, 2) Զեռ. Թիթով: 3) Զեռ. Փայլոյն:

Ամա՞ն, Եկ պաղէէն, այս է լաւ վախտը,  
Բացուել է վարդը :

Վարդով գըլուխըդ զարդարէ՛,  
Սիրակա՞ն, ամա՞ն .  
Եկ իմ խընդիրըըս կատարէ՛,  
Ինձ այս դարտէս ազատ արէ՛.  
Սիրակա՞ն, ամա՞ն ,  
Ամա՞ն, Եկ պաղէէն, այս է լաւ վախտը .  
Բացուել է վարդը :

---

Լ.Թ.

ՏԱՐ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆՈՅ

Եկայք այսօր ժողովեցէք, ընկերք միաբան ,  
Պարկեշտութեամբ բազմիլ սեղան, եղբայրք պատուական 1),  
Զուարձանալով արացուց սէր և բարեկենդան 2),  
Ռւրախութեամբ և խնդալով խընծեմք զինի ցընծալով 3) :

Փա՛ռք Քրիստոսի որ սեղանոյս զմեզ արար արժան ,  
Թընկեր թասերըն շարեշար զինի զանազան .  
Մէկըզմէկի ծօս խընդեցէք՝ հոս առէք ճաղան 4).  
Ռւրախութեամբ և խընդալով խընծեմք զինի ցընծալով :

Մեր առջեւըն կանանչ պաղէա 5) ճաղկունք և չիման ,  
Շատուածաղարդ սեղան եղեալ աչաց 6) յանդիման .  
Ենցեալ օրին օր չի հասնիլ՝ կ'եղնիք փոշիման .  
Ռւրախութեամբ և խընդալով խընծեմք զինի ցընծալով :

---

1) 2եռ. Պատվական : 2) 2եռ. Պարեկենդան : 3) Այսպէս՝ թ.  
412 ձեռագրի օրինակին մէջ. թ. 537 ունի՝ Ռւրախութեամբ ու  
խնդութեամբ խընծեք, եղբայրք, խնդալով: 4) 647, Մազան. 2եռ.  
537 Մազայն: 5) 647, այսպէս, թ. 537, 2եր յառջեւն կանանչ  
պահանջ: 6) 2եռ. 412, Աչաց, 2եռ. 537, Յաչաց:

Պարտիճք աշխատողացն ողորմի տալ մէկ բերան ,  
Տաղեր կանչել կարաս բանալ և կախել բիրեան 1) ,  
Աշխարհիս 2) մալլն կու ծընայ աշխարհիս վերան .  
Ուրախութեամբ և խնդալով խըմեճք զինի ցընծալով :

Զձեզ աղաչէ հող և ճոխիր նաղաշ Յովնաթան ,  
Թասըն խըմէք մէկ ողորմի ասացէք իւրեան 3) ,  
Տէրըն Քրիստոս ճեզ օգնեացէ 4) յաւուր յայտնութեան .  
Ուրախութեամբ և խնդալով խըմէք զինի ցընծալով :

Խ

ՏԱՂ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻՆ

Այսօր խիստ օր է ուրախութեան ,  
Շնորհաւոր ճեծ բարեկենդան .  
Պարտ է որ ամենեքեան խընդան ,  
Վաղըն գան թէ՛ ուտիսըն տարա՞ն ,  
Կու տըխրին և կու փոշմանին :

Այսօր սեղաններ բերէք բացէք ,  
Կերէք խըմէք ուրախացէք ,  
Պարելով ծափ տուք և խաղացէք ,  
Պասին եկեղեցի դնացէք ,  
Գըլուխ բացէք նըստէք լացէք :

Այսօր է խընդալով ճուճան ,  
Ժողովեցէք դէսպ ի կալլն 5) ,  
Բսկեսուր , հարս , տագր և տալլն ,  
Պասին գայ "Տէք ամենակալ" ըն ,  
Լուանայք ձեր սուֆրա շալլն :

1) Թ. 412, Կախել պիրյան: 2) թ. 537, Յաշխարհիս, թ. 412, Աշխարհիս: 3) թ. 537, Այսպէս. թ. 412, Թասըն խըմէք մէկ էլ լրցէք և ուրէք իւրեան: 4) թիւ 537, Յօգնեացէ, թ. 412 և 647 Օգնեացէ: 5) 2բո. Գալլն:

Այսօր հագէք 1) դումաշ աղլազըն ,  
Զարդարէք օթաղ և դարպասըն ,  
Դուրս բերէք չինի արծաթ թասըն ,  
Հիմի ածէք չօնփուր 2) շաւասըն ,  
Պասին չոր բոխի բարպասըն :

Այսօր ամէն մէկտեղ հաւաքէք ,  
Կարաւ և հաւեր տապակէք ,  
Կարասներն ամէն դարտակէք ,  
Մեծ պասին զբոներն պինդ փակէք 3) ,  
Մարաւ զըլիսները թակէք :

Այսօր նըման է գարնան հաւէն 4) ,  
Բերէք իւղ ձուկըն և թաւէն 5) ,  
Այշ եղբայրը , կըպէք զինոյ գաւէն 6) ,  
Ասէք՝ Այշ շուրջու . իւրաքանչ 7) ,  
Ենչափ խըմեծը որ լուսանայ :

Այսօր ընկերներ և հարեւան  
Ամենքըն միմեանց տուն զընան .  
Զեռացներն կուժ ձաշի աման ,  
Մեծ պասին մընան աղբատ անձար ,  
Գընան քաղեն 8) ուտեն բանձար :

Այսօր հոտ առէք նոր մանուշակ ,  
Զենէք թազայ զառն ու շիշակ .  
Եփէք 9) եղաձու և հարուշակ 10) ,  
Պասին կու դարտակիլի ձեր ձեռըն .  
Կու թըրջէք բակլայ սիսեռըն ,

Բարեկենդան է շատ խընդացէք .  
Ինչ կարասներ ունիք՝ բացէք ,

1) Զեռ. Հագէք : 2) Զեռ. Զօգուր : 3) Զեռ. Փագէք : 4) Հավա (թ.) օդ , եղանակ : 5) Թազա (թ.) տապակ : 6) Զեռ. Կաւէն . ձեռ . 647 , Գաւէն : 7) թ. Ո՞վ եղբայր , կենացդ կը խմեմ : 8) Զեռ . Քաշէն : 9) Զեռ. Երէք , Զեռ. 647 , Եփէք : 10) Հարիսայ ?



Ս. Փիլիպոս  
(Մարմարի վրայ նկարուած, Աւագ Աւդանին նակատ)



Թասըն ձեկմէկի ճօտ խմեցէք .  
Եզուց 1) ուտիս չկայ քեղ համար ,  
Գըլուխըդ ցաւ , սիրուղդ խումար :

Այսօր լաւ ուրախութիւն արէք ,  
Թընկեր շուշէք լըցէք շարէք .  
Պասին պազիրկան ընկեր ճարէք ,  
Ով գնալու է 2) սարով քարով ,  
Լալով կ'ասէք՝ կացէ՛ք բարով :  
  
Տանտէրն խօսում չի , միտք արէք ,  
Թալանեցէք տօլաս տարէք ,  
Մէկ էլ մեծարէք ձեր տուն տարէք ,  
"Հա՛յր , մեղա՛յ" ասէք , դաստոր առէք ,  
Մաշի զըրէք ֆանար վառէք :

Բերէք քուֆթայ սիշտնով 3) չորթանըն ,  
Թասըն լից տուր Յովնաթանըն ,  
Աստուած յաջողեցէ ձեր բանըն .  
Խիստ տըխուր կ'ենեմ մեծ պափն ,  
Մէկ տաղ էլ ասէք իմ թասին :

ԽՍ.

ՏԱՐԻ Ի ՎԵՐԱՅ ՄԱՁՈՒՆԻ  
ԶՈՐ ԸՆՁԱՅ ԲԵՐԻՆ ՆԱՂԱՅ ՅՈՎՆԱԹԱՆԻՆ

Տանկարծ լրւայ աւետեաց ձայն ,  
Թէ՛ Ուրախ լեր դու , Յովնաթա՞ն ,  
Զի եկեալ է մածուն ու թան ,  
Ահաւասիկ զնորին քիսայն :

1) Զեռ. Իբուց , Զեռ. 647 , կբուց : 2)] Զեռ. Ով գնալով է .  
Զեռ. 647 , Ով գնալու է : 3) Զեռ. Քուլթայ սիշտնով . Զեռ. 647 ,  
Քուլթայ սիշտինով :

Որպէս զլոյս արեգական ,  
Եր ըսպիտակ գոյն սըմբական ,  
Անուշ համեղ և սլիրական  
Որպէս խորտիկ արքայական .

Վասն այն լրցի նա ըզբհասայն ,  
Մէջըն փըշրեալ խողով զաթայն .  
Ի ձեռս առեալ բըրիչըն այն ,  
Զերդ ըզբիւռոս բրել զերեզման :

Դաեւ ասէին ընդ ճանկան ,  
Քէ՛ Բրեցէք , որդեա՛կ սիրական ,  
Բըրածըն լիցի խորան ,  
Զոր նա կատարեաց զայս հրաման :

Այլ և սա է ձին աննընան :  
Սուրբ անարատ և ճարդրական ,  
Մայր և ծընօղ է խակական  
Կասկարային աղնըւական :

Թող սա զի պարտ է և արժան  
Նաղաշն պահել որպէս քիրշան ,  
Կազմել ճարմեադեղ զանազան ,  
Զոր հազիւ զայ Յերանզըստան :

Ելսու պալատը սպիտականան ,  
Եւ սա ճահլամ բըժըշկական ,  
Զի ցածաք սիրտը ճեր զովացան .  
Լուսաւորակ նիւթըն այն 1) :

Նախկին 2) սիրով քո բնական  
Կերակրեցեր ըղթողնաթան .  
Ո՞վ երջանիկ , լիցիս արժան  
Ճաշակելոյ անմահ սեղան :

1) Թերեւս՝ լուսաւոր ակ(ն) է նիւթըն այն : 2) Զեռ. Նախկին :

ԽԱՅ

ԳՈՎԱՍՏԱՌԻԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԱՅ ՔԱՂԱՁԻՆ

Կամիք զովել զուք Երեւան ,  
Մարդիքն զալում կ'երեւան ,  
Թուրքերն կու քաշեն բերան ,  
Մարդոյ զըմի կոտրեն զերան :

Հաւէն վլճաս որպէս ըգհուր .  
Զերմ և կանանչ աղտեղի ջուր ,  
Գորի 1) ք . . . է և փիս փըրփուր ,  
Որպէս ծառի ժանդ և թըրթուր :

Եռաւօտոց կ'երթաս բազար ,  
Բոլ կու ծախեն բողկ և զազար ,  
Թըրու մաճուն չանախ նազար ,  
Խըմոր հացըն կուտայ նազար :

Սափոր և կուժ ամենըն ծակ ,  
Քանի ջուր կ'աճես թէ դարտակ ,  
Աչ աղբիւր կայ և ոչ վըստակ ,  
Թուրքի յահէ դըռներըն փակ :

Զարուն 2) չուխէն պօրկչոց շալակ ,  
Գըստակ կարեն ձըգեն թալակ ,  
Մայրըն երկայն որպէս սալակ ,  
Մէջըն պատի հաստ քօչալակ :

Թէ մէյտանըն անես օրօն ,  
Շատ կայ տըտիպ շըպեղ տօրօն ,  
Շերսփ զըղալ խիստ խըտօրօն ,  
Ամէնն աճես մէկ վառ թօրօն :

1) Թերեւո՞ Գորտի : 2) Զեռ. Բաբուն, Զեռ. 647, Զաբուն:

Զունի ձէկ գովելոյ պատճառ ,  
Բազաստանըն փընթի մուռտառ ,  
Կու ծախեն խիստ խաշար աստառ ,  
Թօրփա քէչա աթառ փաթառ :

Զեռացներըն նետ և թուանկ ,  
Դաւաս կաքաւ նախշուն ըռանկ ,  
Փողով հաց չընկնիլ ճարդոյ ճանկ ,  
Աշխարհա էժան , Երեւան՝ թանկ :

Հաւուղի փող տաս ձէկ բուռըն ,  
Ճարկիլ ձէկն չառնիլ ձեռըն ,  
Աչքըն կոխես 1) շամբուրի կեռըն ,  
Խըմացընես էշի շ . . . ն :

Ես էլ Երեւան շատ կացայ ,  
Նոյս հասիաթն իմացայ .  
Հազար բան սպասպարես 2) նոյս ,  
Կ'ասես՝ Ուր է , թէ՝ Մոռացայ :

Կ'ուղեն ելնեն ամենըն քօչ ,  
Էի է մոծակ , մըմիկ 3) բըզօչ ,  
Ալիշվերիշըն է իմաս փօչ ,  
Տալոյ նամարգ , առնելոյ դօչ :

Նաղաշն Երեւան շատ կացաւ ,  
Ջիկարն այրեց հիւանդացաւ ,  
Սպիտակ սառուցին զարմացաւ ,  
Խըմեց՝ սըրտիկըն դովացաւ :

---

1) Զեռ. Գոխես : 2) Զեռ. Պատարես , Զեռ. 647 , Պատարես  
(սպասպարել : 3) Զեռ. Մշհկ :





Պարիկի Հրեսուկոսի  
(Ոլոր)

ԽԵՐ

ՎԱՐՁ ՀԱԻԱՍՏԻ ՄՈՆԹԵՐԻՆ \*)

Գրէ 1) եկին էշի քարվան  
Մեր ճռնթերի վըրայ փալան :  
Գըլմէն արած գարի դարձան ,  
Զըռզըռալով բերան բանան .  
Ճարված դնդում 2) է քեարանայ  
Հէնց զիտես արան տարան այ .  
Ով ճռնթ կ'ուզես եանայ եանայ ,  
Հիմայ գայ լըսի զարձանայ :  
Ելած են փեշակ զանեաթէ ,  
Կըպած բանձարի զաւաթ է .  
Դեռ չէ կարուծ կանչել հաղի ,  
Շուտով դէսկ ի բեճն վաղի .  
Չեն ճանաչել զիրք և ճաշոց ,  
Պատարագին ածեն քըշոց .  
Խնչպէս որ լոկ աշխարհական ,  
Ոչ զիտեն Սաղմոս շարական .  
Մէկ “Հայր մեղայ” զիտեն , մէկ բան ,  
Մէկ “Եւ եւըս խաղաղութեան” ,  
“Ժողովելոցն ի վերնատան ,  
Առաքելոցն երկոտասան” :  
Կըծու 3) են քանց սըխտոր սոխըն ,  
Հինգ հոգուով կ'ասեն մէկ փոխըն .  
Թէ մէկ թաղի 4) ձըզես փորըն .  
Զի զըտնել մէկ եշն ու եւըն 5) ,  
Հըպարտանան , քըցին կողին ,

\*

\*) Այս շահեկան կտորին՝ ինչպէս և նախորդին մէջ՝ որ զրուած են գաւառաբարբառով , կարգ մը բառեր կան որ անհասկանալի կը մնան մեզ . նաև՝ հաւանականաբար՝ սիսալ ընդօրինակութեամբ քանի մը աղաւաղութեր , որոնց մէկ մասն ուղեցինք : 1) Գրէ ? թերեւս՝ Հըէ (ահա) ; 2) Դդում? 3) Զեռ . Գծու : 4) Թաղը (թ.) բարակ , որսի շուն : 5) Զեռ . Եզ ուն եւըն .

Ուշ չեն ունել ժամ ասողին .  
Զայնըն կըսրած , բըռնած գուլըն .  
Եղավ սանտրում է քաքուլըն :  
Կարդալիս են չարան փարան ,  
Կարատում են զիրք Աւետարան :  
Տասըն 1) սըրին պատէ պարան ,  
Կարդացողաց համըն տարան :  
Հենց էն նավ սառած հալիմ ,  
Վարպետէ չեն 2) առած թալիմ :  
Ոչ ի յԱստուծոյ երկընչին ,  
Եւ ոչ ի մարդկանէ ամաչին :  
Աչքեր հանեն , երես չանչին ,  
Կուռըն կոտրեն , հարայ կանչին ,  
Մըտնեն խորան դուռըն փակին ,  
Արինթաթախ զըլուխ ծակին :  
Նըման են կըսված որձակին 3)  
Որ հաւըն կու զընի տակին ,  
Քացի 4) կուտան անմեղ երեխին ,  
Կանթեղի ձէթն ածեն զիլին .  
Դասումն ասեղով իրար ծակին ,  
Մինչև որ ժամըն արձակին .  
Դուրս զան՝ իրար տեղըն տաշեն ,  
Հողի , հաւատ , մեռեալ քաջեն :  
Անուններըն է աարկաւագ ,  
Մէջքըններըն էշի դաւակ :  
Հացով 5) ուտեն մեղք ու կարագ ,  
Էն վախթըն կուզան պատարագ .  
Հըպարտ շապիկ հագնում ուռչում ,  
Անխոստովանք բեմըն բռչում 6).  
Գիրըն կարդան սըխալ 7) հազար ,  
Ինչպէս որ կիսատենց Ղազար .

1) Զեռ. Դասն. Զ. 647, Տասն: 2) Զեռ. Զեմ. Զ. 647, Զեռ:  
3) Որձակ , աքլոր . Զեռ. Որձակին: 4) Զեռ. Քաղցի: 5) Զեռ. Հայ-  
ցով . Զ. 647, Հացով: 6) Թռչում? 7) Զեռ. Սղալ:

Զայն ածեն զինչ անհամ դազար 1),  
Զէնիլ սօհպաթ լոթի բազար 2),  
Կ'ասեն՝ երբ կուզայ ձեծ պասըն,  
Եղեկոծում գըցենք դասըն,  
Պինդ պինդ կանչեմք „զի ի տուընջեան”,  
Կ'ուզի քահանայք տըրտընջան :  
Մոց ու ճութըն լըցած է ջան 3),  
Կ'ասէ՛ ինձ տուք չորս աստիճան .  
Միմեանց շապիկ են հազցընում,  
Պատարապին կանդնացընում ,  
Տասըն 4) ծընծղայք շախախցընում ,  
Հէնց էն որ գայլ խաղացընում .  
Զանդակ ածելով ծիծաղում ,  
Ուրբերըն ալ վեր վեր քաղում:  
Կանդնած երէց և քաղլսուդէք 5),  
Մէկըն չասէ՛ “Թարկըն տըւէք” 6):  
Կըպչին մոմեր վառած ջառէն ,  
Խունկըն գողմնան բուրլառէն .  
Մէկ տուն Սաղմոս չի թամամէն ,  
Շապիկ հագած ծամտաբ ծամեն .  
Նըշխարբ տալիս անեն արին ,  
Վեր զըցեն կոտրեն լանկարին 7) .  
Ձեն խոնարիլ որ տան թասըն ,  
Ձեն զիտել թէ զինչ է մասըն :  
Կ'ասեն 8) “Արէք ինթիմասըն ,  
Որ 9) ինձ տանեն վերի դասըն” 10):  
Զկարեն 11) զընել զըրքակալըն ,  
Կ'ասեն՝ Բաշխէ՛ք զըլիսիս մալլին .  
Ծուտով մալէ 12) խարձէ փախչին ,

1) Ստեղղին : 2) Տգէտ անշնորհք մարդոց պէս կը խօսակցին :  
3) Վէգ (osselets) : 4) Զեռ. Դասըն . Զ. 647, Տասն : 5) Զեռ. Քատ .  
Խուտէդ . Զ. 647, Քաղխուտէք : 6) Զեռ. Տըվէք : 7) Լենկեր (թ.)  
Հական : 8) Զեռ. Հասեն . Զ. 647, Կ'ասեն : 9) Զեռ. Կոր . Զ. 647 ,  
Որ : 10) Զեռ. Թասըն : 11) Զեռ. Զգարեն . 647, Զգարեն : 12) Զեռ.  
Մալու , 647, Մալէ :

Գանձանակին փողը չանչին 1) .  
Դուն որ թաճբոց է խաղալիս  
Փիլանի տեղակ է տալիս .  
Նախքարած 2) է, էշըն քըշում ,  
Գըլիսի գօտիկ 3) է աբրիշում 4) .  
Նոր է տախտակ մէջքըն հարում .  
Խոստովանորդի է ճարում .  
Չեն կարել ճակել շուրջառըն ,  
Կանանց տան կլնզրուկ 5) բուրգառըն .  
Զայներըն բաշ դունչըն 6) ցըցած ,  
Ասեանըն շապկաւոր լըցած .  
Բաքանումէտն ամէն հասաւ ,  
Դարաշաճրէն 7) բերէք կարաւ .  
Փիլոնացու յունատ կու ճարէք ,  
Եազմուրլուկներ կըսրէք կարէք .  
Շուրջառացու չըկայ , լացէք .  
Եափունջի բեռներ բացէք .  
Ե՛լ չի ճարվիլ զլիի գօտիկ 8) ,  
Աստապատու ալաճէն մօտիկ ,  
Որ նորօրհնիք զարդարիվուիք ,  
Կարճ իրիցներ խօշ խորուիկ .  
Լժան 9) են քանց չամիչ փլշատ ,  
Տիրացուն քանց մողովուրդն շատ .  
Չեն ճանաչիլ զըրած զիրըն ,  
Հէնց էն որ 10) Քանու նախիրըն 11) .  
Եղբատ մեռելէն խըռովին ,  
Հարըստին վըրայ մողովին .  
Դաթար ընկնեն 12) մէկ մէկի հետ ,  
Կանչեն բըմիշկ ճարտարապետ .

---

1) Կը ճանկին : 2) Զեռ . Նահարարած : 3) Զեռ . Կոտիկ : 4)  
Զեռ . Բարիշում : 5) Զեռ . Բնդրուկ . Զեռ . 647 . Կնդրուկ : 6) Զեռ .  
Դունչըն : 7) Զեռ . Դարաշումքէն . Դարաշամբ՝ գիւղ : 8) Զեռ . Կո-  
տիկ : 9) Զեռ . Խժան . Զեռ . 647 . Լժան : 10) Զեռ . Հէնց որ . Զեռ .  
647 . Հէնց էն որ : 11) Զեռ . Նահիրըն , Քանի , գիւղ : 12) Կէճի  
մանել , կոռոիլ :





Առամբնակ մի  
(Ալպար)

Փող բաժանողն ասէ՝ զինչ լած,  
Կոտորվածքիս ո՞ր ձեկին տած.  
Հէնց ծռնթ որ գայ դող դարբեղար,  
Մեծ սարկաւագաց բարեբար .  
Ինչ դապան ունէք զուրս հանէք ,  
Դաղեկի 1) կտրէք բաժանէք .  
Թէ որ էնսով շանիլ հերիք 2),  
Ելլ փող ժողովիք բերիք :  
Էղ ծռնթերդ է էշի թըրիք .  
Վախեմ թէ կըրակ տաք էրիք :  
Մռնթերն է զըզիկ 3) աղջիկ ,  
Վախեմ ամէն թողիք փախչիք 4).  
Վախեմ սապակ նոցա դալըն ,  
Իրիցներըն զըցին ճալըն :  
Անգօտի 5) հացն տան բըռուզ 6),  
Էշ քուռակի պէս տան 7) խընդուռզ 8),  
Միմեանց համար սարին թալակ 9) ,  
Վակին թըրչին միմեանց շալակ .  
Մարիֆաթէն խիստ են հեռի ,  
Հէնց են թեփոած քառափեռի 10) .  
Դասումն իրար կուտան տօղի ,  
Ճընճըլան ձագերըն 11) խողի 12).  
Հէնց են 13) անսպատի՝ միզին ,  
Սեղան նըստին աման լիզին ,  
Կու նըմանին զըզիկ թաթի ,  
Սըրըկնամեռ անտես սաթի .  
Սկածիդ ասլանի ասած ,  
Շիտակ էն օրըն են հասած :

- 
- 1) Փիլաւի տակի կտրծը մասը : 2) Թէ որ ատ ալ չի բաւեր :  
3) Զեռ. Զդիկ . (բոզ աղջիկ): 4) Զեռ. Փաղջիկ: 5) Զեռ. Հանգստի:  
6) Բոռւզ , տեսակ մը տափակ հաց : 7) Զեռ. Դան . Զեռ. 647 , Գան:  
8) Աքացի կուտան: 9) Թերեւու դարսն կը լարեն: 10) Թեփուած՝  
փետրաթափ . քառափեռի , հաւանականաբար՝ թռչունի անուն: 11)  
Զեռ. 647 , Զագերուն: 12) Հաւանականաբար՝ հողի: 13) Զեռ. Էն.  
Զեռ. 647 , Են:

Մինըն հելլար, մինըն չօմար,  
Արևալ խառնափղնդոր տօմար .  
Մինըն շատ են ուսին տանում,  
Ենձ հաչէն վախտ 1) է անում .  
Եշի նըման կահչեն զրունչ,  
Քաշ և բարձըր խառնիճաղանճ .  
Առշաբդալութ բոր ու ոժել .  
Շիլքն լորոյ որշն ոժել 2)  
Հէնց էն որ Դանեացի ընցոր 3),  
Սիսիացի բուրանոց բուրվոր 4).  
Առանց ծեծարը 5) վազում արներ,  
Դասապիսանի լոթի շըներ,  
Թափ տըւած 6) կու լափեն 7) անտէր,  
Դըղբերէթ կըծուտող ճանճեր:  
Գոն ծըտնեն գողանան ջաթու,  
Հէնց էն ձուակեր զող կատու .  
Կուչ են եկած ինչպէս հուրայ,  
Դունչ տալոյ վախտ՝ լեզուն սուրայ .  
Տէլլութէ հունչ ուն-  
Դուրիւթ ուստան ինլու գուլոյ 8) :

Այս օրերս է բարեկենդան ,  
Պիսի 9) ամենեցեան խնդան .  
Քանի ձեզ չեմ ձըզած ճազաթ,  
Ենձ արարէը փոքր ինչ ազատ 10).  
Թէ որ իմ ասածըն կ'անէք ,  
Թէ չէ յետոյ կու փոշճանէք :  
Հաստատ լինիք Աստուծոյ տան ,  
Անփորձ մինչ ճինչ յախեան ,  
Դուք յիշեցէք ի մի բերան  
Հանգուցեալ նալաշ Յովնաթան :

1) Զեռ. Վախտ . 2) Զեռ. 647 , Վախտ : 2) Երկու տող թըբերէն ,  
իմաստը ? 3) Հնձուոր ? 4) Բուրվառ : 5) Առանց հրաւիրուելու : 6)  
Զեռ. Ծափ տըւած . 2. 647 , Թափ : 7) Զեռ. Կու լոփեն : 8) Թըբ-  
երուն թէ ինչպէս կ'ըլլոյ որ դոյլերը շուներուն ծառայ դառ-  
նուն : 9) Զեռ. Դիսի . 2. 647 , Պիսի : 10) Զեռ. Ազաթ :

Խաղ

**ՏԱՂԻ Ի ՎԵՐԱՅ ԶԱՏԿԻՆ ՀԱՅՈՑ**

Յորժած գայ պայծառ Զատիկլըն Հայոց ,  
 Մեծ աւետիս տաճք ծերոց և տղայոց ,  
 Սսեմք՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց ,  
 Կեա՞նք նընջեցելոց 1) ,  
 Փըրկութիւն հոգւոց է Զատիկլն Հայոց .  
 Գովե՛ճք Զատիկլըն Հայոց :

Ուրախանան մարդիկը , մանկունք և տըղաբք ,  
 Զարդարեալ ցընծան և պարեն կանայք .  
 Խաչապաշտը խընդան , եւս առաւել Հայք .  
 Որք են քրիստոնեայք .  
 Աւետեաց օր է Զատիկլն Հայոց ,  
 Գովեմք Զատիկլն Հայոց :

Վերանայ ձըմեռն և դայ ամառըն ,  
 Հասանի զինին և թաղայ զառըն ,  
 Կանանչի խոռըն և ծաղկի ծառըն ,  
 Տերեւախառըն .  
 Քաղցր և անուշ է Զատիկլն Հայոց ,  
 Գովե՛ճք Զատիկլն Հայոց :

Նորոգին հոգիք սուրբ յաւագանէն 2) ,  
 Լոյս պայծառ բըղիւէ սուրբ գերեզմանէն .  
 Նա մեղ կու փրկէ ի չար զադանէն 3) ,  
 Նորին բերանէն .

Ազատարար է Զատիկլն Հայոց ,  
 Գովե՛ճք Զատիկլն Հայոց :

1) Զեռ. Կեանքըն մեռելոց փրկութիւն հոգւոց է Զատիկլն Հայոց . թ. 412 , կեանք ննջեցելոց , աւետեաց օր է Զատիկլն Հայոց : 2) Զեռ. Սուրբ յաւագէն . թ. 412 , Սրբոյ յաւագանէն : 3) Զեռ. Գաւաղանէն . թ. 412 , Գաղանէն :

Առեալ քահանայք խաչ Աւետարան ,  
Օրհնեն գերեզման , տուն և անդաստան ,  
Ամեն ձարդ շրջի ծաղկանց բուրաստան ,  
Երկիր Հայաստան .  
Եղոն' ըստ աշխարհի՝ Զատիկլըն Հայոց ,  
Գովե՛ճը Զատիկլըն Հայոց :

Թըռչունքըն խայտան , խօսի բըլբուլըն ,  
Փայլի մանուշակ , բացւի սընթուլըն ,  
Մերձանիք ցանեն , աշխատի ցուլըն ,  
Բոլոր աւուրըն .  
Առատ գարուն է Զատիկլըն Հայոց ,  
Գովե՛ճը Զատիկլըն Հայոց :

Աղբերբ յորդորին և հալի սառըն ,  
Քրիստոս զենանի Աստուծոյ գառըն ,  
Քահանայք երգեն երկնից բարբառըն ,  
Հրեշտակախոռըն .  
Դրախտի նըման է Զատիկլըն Հայոց ,  
Գովե՛ճը Զատիկլըն Հայոց :

Նըստէք , հա՛յրք և եղբայրք , ի մէջ չիմանի ,  
Եւ խըմէք գինի վերայ սեղանի .  
Նաղաշն արարէք յիշման արժանի ,  
Քաղցրութեան բանի .  
Քանդի նա գովեաց Զատիկլըն Հայոց ,  
Գովե՛ճը Զատիկլըն Հայոց :

Էին սուրբ ծընող Մարիամ միշտ կոյս ,  
Մագեաց ծընընդեամբ քո մեղ փառք և լոյս .  
Լե՛ր բարեխօս առ յարուցեալն Յիսուս ,  
Պարզեւել մեղ յոյս ,  
Մաքրութեամբ տօնել Զատիկլըն Հայոց .  
Գովե՛ճը Զատիկլըն Հայոց :

---

ՏԱՂԻ Ի ՎԵՐԱՅ ԳՈՒՐՁԸՍԱՆԱՅ ԳՈԶԱԼՆԵՐԻՆ

Գովիճ սըրտիւ ուրախական  
Թիֆլիդ քաղաքըն պատուական .  
Յոյժ զեղեցիկ են սիրական  
Գուրջստանայ գօղալներըն 1) :

Ենքնագոյ չերմեռանդ համամ ,  
Միջի խաթուններըն թամամ .  
Միպտակ բօղազ , բողոր շամամ ,  
Վըրացտանայ արմաղաններըն :

Կարմիր երես նըման վարդի ,  
Ենչպէս ծաղիկ ծաղկագարդի .  
Ուշ ու խելք կու տանին ծարդի ,  
Գուրջստանայ գօղալներըն :

Կալամ ունքեր կապած կամար ,  
Աչքերըն վառ շամսի դամար ,  
Կապեր են 2) մուրասայ քեամար ,  
Վըրացտանայ արմաղաններըն :

Կարսերըն դաստայ ոլորամ ,  
Երեսըն լուսին է 3) բոլորամ :

---

1) Ա. Ղաղարու թ. 730 ձեռագրին մէջ կայ ոյս տաղէն օրինակ մը , պակասաւոր , սխալաշատ . ահա առաջին տունը , որ բաւական տարբեր է .

Գովիճ սրտիւս ուրախական  
Թիֆլիդ քաղաք խիստ գանագան ,  
Յոյժ պատվական է սիրական ,  
Վըրացտանա գուղալներ ,  
Վըրացտանա գուղալներ , շէն թիֆլիդու խաթուններ :  
2) 2եռ . ես : 3) 2եռ . լուսին . Ա. Ղաղ . ձեռ . լուսին է :

Նաստ մարդ է տեսած մոլորած ,  
Գուրջբստանայ արմաղաններըն :

Տեսօք են ամէն հասարակ ,  
Պօյն ու ջամալն է մուբարակ ,  
Բատանըն լայն , մշջըն բարակ ,  
Վըրացտանայ արմաղաններըն :

Զօրեղ ազգին 1) սկարթեւական  
Զարձ և ժառանգ արբայական .  
Արժանի թաղաւորական ,  
Գուրջբստանայ գօղակներըն :

Մէջլիս նըստեր սաղով դամով ,  
Լեզուն քաղցըր , խօսըն համով ,  
Գինի խըմին ոսկէ ջամով ,  
Վըրացտանայ արմաղաններըն :

Աիրամարդի նըման քայլին ,  
Տեսողըն զարմանան ճայլին .  
Աստղանըման դոնով փայլին 2)  
Գուրջբստանայ գօղակներըն :

Հագել են զումաշ ու խարայ 3),  
Ունեն շատ զարաւաշ ծառայ ,  
Խիստ են կանանչ թագայ թառայ ,  
Վըրացտանայ արմաղաններըն :

Ասլազ են հագել հաւասար ,  
Սամուր զալափուշ սարէսար ,  
Եմէն պարոն են աղասար ,  
Գուրջբստանայ գօղակներըն :

1) Զեռ. Աղգ է . Ա. Ղաղարու ձեռ. Ազգին : 2) Ա. Ղաղարու օրինակին մէջ այս և նախորդ տողերը տեղափոխուած են : 3) Զեռ. Խր. Զեռ. 647, Խարայ :

Ես Նաղաշ եմ, մեղաց ծով եօն,  
Նոցա սիրովըն զինով եօն,  
Խաղար չեօն թէ ի՞նչպէս զովեմ  
Վըբացտանայ արձաղաններըն 1):

ԽԶ

**ՏԱՂԻ ԿԵՐԱՅ ԳԱՐՆԱՆ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ 2)**

Յորժամ եղեւ զարուն, արեւ ծագեցաւ,  
Հարաւ հողմըն հնչեաց, սառըն հալեցաւ,  
Երկիր կանանչացեալ՝ ծառըն ծաղկեցաւ.  
Խըմե՞նք, եղբարք, զինի, մեզ անուշ լինի.  
Ածէք, խըմենք զինի, բանն Աստուած շինի 3):

Ո՞վ եղբարք, նըստեալ էք 4) ծաղկեալ ծառի տակ,  
Չեռներիդ է զինի 5) կարմիր ու լըստակ 6),  
Գինոյ մշջն 7) անկանի ծաղկի ըսպիտակ.  
Խըմե՞նք, եղբարք, զինի, մեզ անուշ լինի.  
Ածէք, խըմենք զինի, բանն Աստուած շինի :

- 1) Ա. Ղաղարու օրինակին մէջ հինգ տուն կը պահսի, ու կայ  
հան աւելորդ հետեւեալ տունը, որ ոչ մէկ կազ ունի տաղին հետ.  
Մէկ գաւ զինի, մէկ չինի թաս,  
Մէկ գու խրմես մէկ ինծի տաս,  
Դատաստանին ջուապըս տաս,  
Վրաստանայ, ևն..

- 2) Զեռ. թ. 412, Տաղ Յովեաթանէ ի վերայ, ևն. Զեռ. թ.  
369, Տաղ ուրախութեան սեղանոյ ի նախաշ Յովեաթանէ ասացեալ:  
3) Զեռ. թ. 412, Այս երկու տողերուն տեղ զար կը գտնենք “Քնար  
Հայկական” օրինակին մէջ, կայ միակ տող մը. Խմեմք զինի, բանէ  
նա Աստուած շինէ. Զեռ. 369 և 647, Խմելք զինի, բան է նա Ած  
շինի: 4) Զեռ. թ. 412, Որ եղբայրքըն նըստին. Ճեռ. թ. 369, Է՛ր  
Եղբայր նատին. Ճեռ. 647, Եղբարքն նատին. “Քնար Հայկական”,  
Ո՞վ եղբարք, ևն. 5) Զեռ. թ. 412, Զեռացներքն զինի. Ճեռ. 361,  
Զեռացներուն. “Քնար Հայկական” Զեռներիդ է զինին: 6) “Քնար  
Հայկական” և Ճեռ. 412, Ցըստակ, Ճեռ. 369 և 647, Ցիստակ:  
7) Զեռ. 412, Ք. Հ., Թասի մէջն. Ճեռ. 369 և 647, Գինոյ մէջն:

Վաղիւըն ոչ զիտեմք 1) թէ զինչ ծընանի ,  
Մարդուս կեանըն վայրի ծաղկի նըմանի ,  
Որ այսօր բացուել 2) է՝ վաղիւն անցանի .  
Խըմենք , եղբարք , զինի , մեղ անուշ լինի .  
Ածէք , խըմենք զինի , բանըն Աստուած շինի :

Եոր գարուն , նոր արև , Զատիկ 3) շնորհազարդ ,  
Սյունեաւ բացի մանուշակ ու վարդ .  
Զայն պուլպուլին տատրակին լլսէ ամէն մարդ 4),  
Խըմենք , եղբարք , զինի , մեղ անուշ լինի .  
Ածէք , խըմենք զինի , բանն Աստուած շինի :

Առէք 5) կարմիր զինի և լլցէք շուշով 6) ,  
Բերէք թագայ զառըն սինի սարփուշով 7).  
Դապի փըլաւ 8) ձզէք մեխակով 9) նըշով .  
Խըմենք , եղբարք , զինի , մեղ անուշ լինի .  
Ածէք , խըմենք զինի , բանն Աստուած շինի :

Թող չիման տեղ նըստիմք 10) ջուր լինի և խոս ,  
Կարմիր զինի խըմենք 11) մէկըզմէկի մօտ ,

1) Զեռ. թ. 412 , Գիտես , Ք. Հ. Գիտեմք : 2) Զեռ. թ. 412 ,  
Բացուեալ է . Ք. Հ. Բացուել է : 3) Զեռ. 412 , Զատիկ , Ք. Հ. Զ.  
Մաղիկ : 4) Զեռ. թ. 412 , Զայն մուշոց և բլուուի լոէ ամէն մարդ .  
Զեռ. 369 և Ք. Հ. Զայն բուլբուլի տատրակի լոէ ամէն մարդ ,  
(Ք. Հ. բիւլբիւլի , թ. 368 , պուլպուլի .):

5) "Քնար Հայկական"ի օրինակին մէջ տուները տեղափոխուած  
են սապէս . — 1. Յորժամ . 2. Ա՛զ եղբարք . 3. Առէք 4. Թող չիման .  
5. Վաղիւըն . 6. Նոր գարուն . 7. Այլ և . 8. Գնա լաց : 6) Զեռ. 369  
և Ք. Հ. Գինին . Ք. Հ. Շուտառվ : 7) Զեռ. 412 , Սարփօշով , ձեռ .  
369 և 647 , Սարփօշով : 8) Զեռ. 412 , Դարլի փլաւ . ձեռ. 369 ,  
Զապու փլափ , ձեռ. 647 , Զարլի փլով , Ք. Հ. Դարլու փլաւ :  
9) Զեռ. 647 , Միակով , ձեռ. 369 , Մելիքով : 10) Զեռ. 412 նըստէք  
Ք. Հ. Եըստիմք : 11) Զեռ. 412 , Իմէք . Ք. Հ. Իմէնք :



Որմնագարդերու նատակութեան  
(Թանգարանին մէջ պահուած)



Միմեանց նըւիրեմբ վարդ անուշահոտ 1) .  
Խըմենք , եղբարք , զինի , մեղ անուշ լինի .  
Ածէք , խըմենք զինի , բանըն Աստուած շինի :

Այլ և խաղաղութեամբ 2) խըմեն է հալալ ,  
Ոչ հարբիլ ոչ կըռուիլ և ոչ բարկանալ 3) .  
Պարկեշտութեամբ 4) ըմպել , սիրով գուարճանալ .  
Խըմենք , եղբարք , զինի , մեղ անուշ լինի .  
Ածէք , խըմենք զինի , բանըն Աստուած շինի :

Նիստ քո մեղեբըլ 5) լաց , նաղաշ Յովնաթան ,  
Աշխարհս անցաւոր է , չէ մընացական .  
Դուք կերէք խըմեցէք(6) , եղբա՛յրք պատուական 7) ,  
Եւ օրհնեցէ՛ք զԱստուած այժմ և յաւիտեան 8) :

—————

- 1) Զեռ. 442, Միմեանց արւէք ծաղիկ վարդ անուշահոտ , Ք.  
Հ. Միմեանց նըւիրեմբ զվարդ անուշահոտ :  
2) Զեռ. 412 , Պարկեշտութեամբ , Ք. Հ. Խաղաղութեամբ :  
3) Զեռ. 369 և 647 , Ոչ կըռուիլ ոչ հարբիլ և ոչ բարկանալ . Ք. Հ.  
Ոչ հարբել , գոռալ և ոչ բարկանալ : 4) Զեռ. 412 և Ք. Հ. Ուրա-  
խութեամբ , Զեռ. 369 և 647 , Պարկեշտութեամբ : 5) Զեռ. 412 ,  
Նիստ քո մեղեբըն . Զեռ. 369 , Մեղեբը . Ք. Հ Գնա Լաց քո  
մեղեբըն Նախաշով Ագամ (սխալ ընթերցում՝ փոխանակ Նաղաշ Յով-  
նաթանի) 6) Ք. Հ. Դուք կերեցէք խըմեցէք : 7) Զեռ. 647 , Եղբայրք  
սիրական : 8) Զեռ. 369 , Միշտ յաւիտեանս ամէն . Ք. Հ. Այժմ և  
յաւիտեան . Զեռ. 412 , Միշտ և յաւիտեան :





Ս. Քարողիստոս Առամբնակ  
(Նկար)



Թղրեւզուրին յաղագս մահուան զեղեցկարուես 1) վարպետ եւ  
Նաղաւ 2) Յովնարանին, որ 3) ի ՌէմԱՅ. բլոց ամսեանն հոկտեմ-  
բերի ԻԲ. վերացաւ 4) առ Տէր ի յիւրում զաւառի, ասացեալ  
յորդոյն իւրոյ Յակորայ:

Ողբած արտասուօք կոճով տընրութեան,  
Հառաջմածք ձայնիւ, սրտիւ դառնութեան,  
Այսօր անկայ ես մեղաց մէջ ձըթան,  
Քանդի վախճանեաց հայրն իմ Յովնաթան:

Գործովլն նաղաշ և զիտուն բանի,  
Եյլ քաղցրատեսիլ և յոյժ պիտանի,  
Քո ձահ լըսովլն լայ հոգոց հանի,  
Կ'ասեն վա՛յ աւա՛ղ, վարպետ Յովնաթան :

Ո՞ւր է շնորհալից վարպետն իմաստուն,  
Որ միշտ զարդարէր բազում սրբոց տուն5),  
Մէջ Հայաստանեաց ծաղիկ ոսկի սին,  
Եյլ ոչ երեւիս, նաղա՛շ Յովնաթան :

Ենորհալից ձեռլն նըկարող սրբոց,  
Խաղխայթեալ եղեւ աւերակ և խոց.  
Քարտուղար 6) տառից հընոց և նորոց,  
Բանաստեղծ վարպետ նաղաշ Յովնաթան :

1) Զառ. Գեղեցկայարւեսու: 2) Զեռագիրներուն մէջ մերժ  
նաղաշ, մերժ նախաշ, աւելի յաձախ նախաշ: 3) Զոր: 4) Զեռ.  
Վա. ցու. 5) Զեռ. Տօւն: 6) Զեռ. Քարդուշար:

Զանազան շընորհք վարպետաց ուսիալ,  
Ալլն պատուական ոսկի թագ հիւսեալ,  
Գարուն1) էր երանգ երանգ ծաղիկ բուսեալ,  
Անուշահոս վարդ՝ վարպետ Յովնաթան :

Լըցեալ շընորհիւ՝ աղբիւր գիտութեան,  
Հրճուտ ընթերցմանց քերականութեան,  
Եղեր արժանի բազում գովութեան,  
Հանճարեղ վարպետ՝ Նաղաշ Յովնաթան :

Բազում վանորայք և շատ միաբան,  
Գիտուն կարդացողք և ասուածաբան,  
Դիմելն առ քեզ, հարցանէին բան,  
Տայիր2) պատոսսանի, վարպետ Յովնաթան :

Ունէիր հրաման առնել3) բուրվառըն,  
Վարուելն պարկեցտ, գովելի բառըն,  
Խոնարհատեսիլ զինչ անմեղ զառըն,  
Խոհեմ սարկաւագ՝ Նաղաշ Յովնաթան :

Կանգնէիր դիմաց աչօք լալագին,  
Ի ժամ սոսկալի սուրբ պատարագին.  
Սուրբ վերաբերումն, խորհուրդ ահագին,  
Դու մերձենայիր, վարպետ Յովնաթան :

Վաթսուն և մէկ4) ամի յորժամ վլճարեաց,  
Եկըն Գարբիէլ հոգին հրաւիրեաց.  
Պապանձեաց լեզոն և գոյնըն շըրջեաց.  
Պակասեաց ի մէնչ վարպետ Յովնաթան :

Բերան քաղցրախօս համել զինչ ռետին5),  
Ո՞նց պատանեցին գերեզման եղին,

1) Զեռ. Թրւ. թերեւու՝ քրիստու այսինքն գրովը, գեղագրութեամբ? 2) Զեռ. Դայիր; 3) Զեռ. Առնէլ; 4) Զեռ. ա: 5) Զեռ. Ռէտին:

Ես միշտ արտասուեմ նման գարնան գետին,  
Վասըն քո մահուանն , նազա՛շ Յովնաթան :

Երկիր շատ շըջեաց տար յաշխարհ օտար ,  
Ամէն սիրելեաց օգնական սատար .  
Դու ո՞րպէս մեռար գերեզման ճշտար ,  
Բազմաց սիրելի նաղա՛շ Յովնաթան :

Կարօտ ճընացաք չնորհացդ և բանիդ 1) ,  
Ես և Յարտաթիմ փոքրիկ պատանիդ ,  
Մենք միշտ լալով գամբ վերայ 2) տապանիդ ,  
Ասեմբ՝ Ռուր ես , հա՛յր , վարպե՛տ Յովնաթան :

Մանօթ էիր համայն մեծաց իշխանաց :  
Քարի հաւատով փոխեալ ի կենաց .  
Ինքըն պակասեալ՝ անունըն ճընաց ,  
Եյր երեւելի նաղաշ Յովնաթան :

Ունիս շատ ծանօթ եղբարբ պատուական ,  
Քո մահըն լըւան և խելաց անկան .  
Նատ հեռաստանէ փափաքին ցանկան  
Քոյին տեսութեան , վարպե՛տ Յովնաթան :

Անուամբ 3) հըռչակեալ , նաեւ բանիբուն ,  
Յոյժ ուսումնասէր , աննինջ և անքուն ,  
Դու արժան լիցիս ընտրելոց դասոն ,  
Իձ բազմաշխատ հա՛յր , նաղաշ Յովնաթան :

Կատարեաց այսօր մարգարէից բան ,  
Թէ լըցայ իրին այրի տրտմութեան .  
Նաեւ ցամաքեաց ծաղիկըն շուշան ,  
Թարշամեաց քաղցրիկ վարպետ Յովնաթան :

1) Զեռ. Բանիցդ : 2) Զեռ. Վըր. 3) Զեռ. Անւամբ :

Երկնից հրաւիրովըն դան առ քեզ դասեն ,  
Եղնորհը զիտութիւն ի քէն պակասեն 1) ,  
Բազուծ սիրելիք ովբալով կ'ասեն ,  
Ուր է մեր վարպետ նաղաշ Յովնաթան :

Ելլն հըրածան երկնից տիրական ,  
Նոյն ժաման խաւարեցաւ բիր ական ,  
Ասաց՝ Ողջո՞յն ձեզ , որդիք սիրական ,  
Քաղցրութեածք յանձնեաց հոգին Յովնաթան :

Հառաչմածք ովբայ Յակոր քո որդին ,  
Բարեխօս առնէ ըզսուրք աճլորդին ,  
Դասել հոգին քո դասը չորրորդին ,  
Իմ ծերունի՛ հայր , վարպե՛տ Յովնաթան :

Հարազատ հօրէդ զատեալ հեռացաք ,  
Բարի խրասուց քոց մեկնեալ զըրկեցաք ,  
Թէպէտ շատ լացաք , ոչինչ շահեցաք ,  
Դարձեալ առ Աստուած ապաւինեցաք :

Ո՞վ իմ սիրելիք , եղլա՛րք պատուական ,  
Յորժած ընթեռնուք երգս ովբերգական ,  
Խնդրեմ որ ասէք 2) սրտիւ լիական ,  
"Տէ՛ր քեզ ովորմեացի , վարպե՛տ Յովնաթան" :

Հաստատուն էիր զղջմածք մեղայի .  
Զձահ քո յիշելով անձամք դողայի .  
Զքեզ գովիճք և առնեճք մէկ3)"Հայր մեղայի ,  
Գորովագութ հա՛յր իմ , նաղաշ Յովնաթան :

Ծարսպրող բանիս նուաստ և անպիտան ,  
Ողբացեալ Յակոր զերիս անարժան .  
Ես ծառայ լինիմ միշտ և յաւիտեան ,  
Քո զերեղմանիդ , իմ հա՛յր Յովնաթան :

---

1) 2եռ. Պակասին : 2) 2եռ. Ասել : 3) 2եռ. ա.

# Բ Ա Ռ Ա Ը Ա Ն<sup>1)</sup>

— — — — —

Համառօտապրութիւնք . — ա. արաբերէն , պ. պարսկերէն , թ. թուրքերէն , մացեալները ռամիկ հայերէն :

~~~~~

## Ա

Աղամիանա , (պ. Ասկմիանէ) ճարդու պէս , վայելչորէն :

Աղասի , (պ.) սնդուսէ զգեստ :

Աղանէ , (թ. Ալանա) երփներանդ , խայտաբղէն :

Աղ-ըստանգ , (պ. Ալ-րէնկ) կարծրացոյն , շառապոյն :

Աղջղլերիշ , (թ.) առուտուր:

Ալմաս (թ. Էլմաս) աղամանդ :

Ալիրզաման , (պ. Ալիրզէնան) վերջին ժամանակ , որ վերջին դատաստանի :

Անուզար , (պ.) ախ ու վախ , ողբու կծ :

Ահս ու փեյզան , (պ. Ահս պ. Փեյզան պ.) դաշնիք ու պայման :

Աղասար . (թ. պ.) աղաներու զըլիսաւոր :

Ամարաք , (պ. Իմարէք) ամրոց . ապարանք :

Այլիշ , նորէն :

Այլան , (պ. Ելվան) սիւնազարդ սրան :

Աջար , (պ. Աճեար) արգեօր:

Արզ , (պ.) յայտնել , տեղեկացնել ,

Արխաղուին , (թ. Արֆալը) կողկասեան տեսակ ծը զգեստ :

Արմաղան , (թ. Էրմեղան) հեռու տեղէ եկած ընծայ :

Աւարայ , (պ. Ավարէ) դաստիրկաշըջիկ . թափառական , անգործ :

## Բ

Բագաստան , (պ. Պէզզազիսթան) կտաւախճաներու շուկայ :

Բալա , (պ. Պէլա) փորձանք :

Բալիի , (թ. Պէլիի) թերեւու :

Բաղ , (պ. Պաղ) այզի , սլարտէզ :

Բաղվան , (պ. Պաղվան) այզեսպան , պարակզպան :

Բանաւշայ (պ. Պենեթէն) ճանուշակ :

Բանիդիւնան , (պ. Պէնիւնին) կապուած , սիրանարուած :

Բանկի , (պ. Պէնկի) պէնկող հարբող [պէնկ = տեսակ ծը թունաւոր թծրեցուցիչ բոյս' հաւիթ] :

1) Այս բառարանը կազմելու մեջ օգնած են , Տիրեանեան խան , Վենետիկ Մուրա-Մախյելեան վարժարանի բութերէնի ուսուցիչ Պ. Յակով Գրապանեան և Խեցոց վարդապէտ Մանուելանց , որոնց կը յաշնեն մեր ժողովակալու թիւնները :

*Բարեխար , (պ. Պերսապեր) հետ ,  
միասին :*

*Բարիսանայ , (պ. Պարխանայ) վա-  
ճառատուն , ճանապարհորդական պա-  
հետատեղի :*

*Բերագա , (պ. Պիլիթա) անհաւա-  
տարիծ , ապերախտ :*

*Բերինապ , (պ. Պիինամ) անխիղճ ,  
անիրաւ :*

*Բերուրդար , (պ. Պերիբավկը)  
անզութ , ամարզի :*

*Բեռուշ , (պ. Պինուց) ուշակորոյս ,  
անզգայցեալ :*

*Բեշարէ , (պ. Պիշարէ) անձար ,  
խեղճ :*

*Բիրեան , (պ. Պիւրեան) խորոված :*

*Բուսան , (պ. Պուսրան) բուրաս-  
տան , պարտէզ ծաղկանց , բանջարանոց :*

*Բուժքր ու բոհտան , (պ. Քիւթք ու  
պիւթքան) հայնոյանց և զրադարտու-  
թին :*

*Բօղազ , (թ. Պօղազ) սարանոց :*

## Գ

*Գաղա , ոմէկ . կարկանդակ , (պ. Կէտա)  
աղբատ , ճուրացիկ , արհամարհական բառ.  
իրբեւ կոչական :*

*Գազար , ոմէկ . ստեղին :*

*Գատէկ . կամ զաւ , զինի կամ ջուրի  
փոքրիկ , հողէ նեղաբերան աման : (Բա-  
ռարան Խ. Աբովիանի երկերու):*

*Գուլ , (պ. Կիւլ) վարդ :*

*Գուլաբըքուն . (թ. Գըլապտուն)  
սուկեթելի նմանցուած արծաթի կամ  
պղնձի թել :*

*Գուլինար , (պ. Կիւլնար) 1. նունեն-  
ոյց ծաղիկ , 2. կեռաս :*

*Գուրըքսան , (պ. Կիւրնիսրան)  
վրասան :*

*Գօղալ , (թ. Կիւլէլ) աղւոր , զե-  
զուհի :*

## Դ

*Դալու դիվանայ , (թ. Տէլի , պ.  
Տիվանէ) խենթ , խելազար :*

*Դամ , (թ. Տամ) տանիք , (պ. Տէմ)  
դամ (բունել) , ձայն պահել :*

*Դասայ , (պ. Տեսրէ) փունջ :*

*Դասուր , (պ. Տէսրուր) օրէնք ,  
արտօնութիւն :*

*Դարբեկդար , (պ. Տէրպէտէր) դանէ-  
դուռ ճուրացող , թափառական :*

*Դարտիմանէս , (պ. Դէրտմանէս) վըշ-  
տահար :*

*Դարդուր , (թ. Տէրտիսի) ցաւոս ,  
վշտահար :*

*Դըրուս , (պ. Տիւրիս) ուղիղ :*

*Դիլակ , (թ. Տիլէկ) խնդիրք , աղա-  
շանիք :*

*Դիպա , (պ.) դիպակ :*

*Դովրան , (պ. Տէվլիրան) ժամանակ ,  
շըշան :*

*Դուղի , (պ. Թուրի) թութակ :*

*Դուրադ , (թ. Թուրամ) գերի  
[պատերազմի մէջ բանուած] :*

*Դունեա , (պ. Տիւնեա) աշխարհ :*

*Դուշինան , (պ. Տիւշմէն) թշնամի :*

## Ե

*Եարադ , (թ. Եարամ) անկողին :*

*Եալմուրլուին , (թ.) վերարկու [ան-  
ձրեւապահ] :*

*Եալլուրդ , (թ. Եալլըրդ) թաշկինակ :*

*Եաղի , (թ. Եաղի , Եակի) թշնամի ,  
շնուրուածուած :*

*Եանուդ , (թ. Եանըրդ) այրած :*

*Եաս , (թ.) լաց , ողբ , սուզ :*

*Եասաման , (պ. Եասենէն) յասմիկ :*

*Եարա , (թ.) վէրը :*

*Եարադ , (պ.) զէնք , սպառազինու-  
թին [բառարան Խ. Աբովիանի երկերու]:*

**Եափունցի.** (թ. Ասփիննի) ձաձկոց,  
ձմբան վերարկու (թաղիքէ):  
**Եմիշ.** (թ.) միրդ:

Զ

**Զաբուն.** (ար. Զըպուն) բաճկոնակ:  
**Զալում,** (ար. Զալիմ) անդութ, վայ-  
րագ, հարատահարիչ:  
**Զամբաղ,** (ար. Զենպար) շուշան:  
**Զանցիլ.** (ար. Զեննիր) շղթայ:  
**Զառ,** (ար. Զեր) սոկեղէն, սոկե-  
թիլ, սոկեղոյն:  
**Զառնիշան,** (ար. Զերիխան) սոկե-  
նիշ, սոկեշող:  
**Զարրագ,** (ար. Զերպաֆ) սոկենուն:  
**Զարընցի,** իրր յու ան էջմիածնի  
դաւառի զիւդ ճը:

**Զենիար,** (ար. Սանաթ) արհեստ:  
**Զերա,** (ար. Զիրա) վասնդի:

Է

**Էհշիպար,** (ար. Իրիպար) մեծարանք,  
պատիւ:  
**Էշիւ** (ար. Աօֆ) սէր:

Ը

**Ըռախս.** (ար. Բախս) գործիք, կաղ-  
ձանք, կարասիք, հագուստ, հանդիր-  
ձանք:

**Ըռահմ,** (ար. Բահմ) գութ:

Թ

**Թազայ** (ար. Թազէ) թարճ:  
**Թազի,** (ար.) բարակ, տեսակ ճը  
որսի շուն:  
**Թալիմ** (ար.) հրահանդ, վարժութիւն:  
**Թախր,** (ար.) դահ, բազմոց:  
**Թախչայ,** (ար. Թահչէ) փանչ:  
**Թամանի,** (ար. Թամանի) ժրաստ, ժրա-  
ստթիւն:

**Թամանի,** թամանիլ, (ար. Թէմանի)

կասարեալ, լիակատար, լրանալ, կո-  
սարութիւն:

**Թամաշայ,** (ար. Թէմաչէ) դիանել:  
**Թաջիսար,** (ար. Թանիսէր) զիլու-  
պակի:

**Թաս,** (ար.) թաժակ:

**Թարկել,** (ար. Թէրէլ) լքանել, ձգել,  
վերջ տալ:

**Թաւէ,** (թ. Թավէ) տալակ:

**Թըղանգ,** բուանգ, (թ. Թիւնէնին)  
չրացան:

**Թօրիս,** (թ. Թօրսա) տալլակ:

**Թօրոն,** թոնիր, [բառարան Խ. Արով-  
եսի երկիրու]:

**Թունիլ,** (թ.) հողէ կամ պղնձէ ա-  
ճան, ոմէ. բղուդ, կուժ:

Ւ

**Իդրար,** (ար. Իֆրար) խոսում, խո-  
տվանութիւն:

**Ինթիմաս,** (ար. Ինթիմաս) յանձնա-  
րաբիւ:

**Ինչի,** (թ. Իննու) մարզիխ:

**Ինսագ,** (ար. Ինսաֆ) կարելցու-  
թիւն, խոլճ:

**Իշտահ,** (ար. Իսթիհա) ախորժակ:

Լ

**Լար,** (ար. Լէալ) չրթունք:

**Լալայ,** (ար. Լալէ) կակաչ:

**Լանկար,** (թ. Լէնկեր) պղնձէ մեծ  
պակալ:

**Լուրայ,** (ար. Լիւլէ) ծորակ:

**Լօրի,** ոմէ. խճան, անկարդ մարդ,  
հովարտան:

Խ

**Խարայ,** Չինաստան (Cathay) —  
խաթախի զօսի. չինական դօսի:

**Խալ,** (ար.) մորթին վրայ սև նիշ.  
grain de beauté.

**Խաչի.** (թ. Կաչի) լուրի:

*Խապար*, (ա. Խապեր) լուր, տեղեւիթիւն:

*Խարայ*, (պ. Խարէ) պաղպաջուն  
կերպաս [moire]

*Խումար*, (ա.) զինովութենէ առաջ  
եկած թճրութիւն:

*Խուշկ*, (պ. Խիւօք) չոր:

*Խուրման*, (պ.) արմաւ:

*Խօշ*, (պ.) 1. հաճելի, սիրուն, 2,  
զուարձալի [drôle]:

## Կ

Կագ կած զագ, երկանութեան չափ,  
հինգ քառորդ արշըն (բառարան Խ.

Երովիսնի երկերու):

*Կամսի*, (թ. Կմսի) նաւ:

*Կուման*, (պ. Կիւմէն) տարակոյս:

*Կունահինար*, (պ.) մեղաւոր:

## Լ

*Հալ ու անվալ*, (ա.) վիճակ, կաւ-  
ցութիւն:

*Հաղիղար*, (ա. Հաֆիքար) ծշմր-  
տութիւն:

*Համամի*, (ա.) բաղնիք:

*Համեայիլ*, (ա. Համայիլ) յուռութը:

*Համիշա*, (պ. Հեմիշէկ) միշտ, հա-  
նապազ:

*Հայիիք*, (ա. Հայֆ) ափսո՞ս, մե՛զը:

*Հասիար*, (ա. Հասիիեկը) արժանա-  
պատութիւն, (ա. Խասսիյեկը) յատ-  
կութիւն, առողջարար աղբեցութիւն:

*Հարամի*, (ա.) աւազակ:

*Հարկիզ*, (պ. Հերկիզ) երբեք:

*Հաւաս*, (պ. Հեվէս) տեխէ, փա-  
փար:

*Հաւէկ*, (ա. Հեվէկ) օդ:

*Հեկիմ*, (թ.) բժիշկ:

*Հեյդար*, (ա. Հայտար) առիւծ:

*Հյուրան* (ըլլալ) ա. հիանալ:

*Հեխալ*, հեխալ (ա. Հեխէլ) սրձան:  
Հիլալ, (ա.) ծահիկ, ծահկաձեւ:

## Ղ

*Ղազան*, (թ. Քազան) կաթսայ:

*Ղարար* — զասր, զասար, — չափ,  
(բառարան Խ. Ըլովեանի երկերու): «Ղա-  
թար ընկնեն մէկմէկու հնաւ», իրարու  
հնաւ կը չափուին, կը կռուին?

*Ղարամ*, (ա. Քաղէմ) զրիչ:

*Ղարամինար*, (պ. Քալէմինար) քան-  
դակագործ:

*Ղարապաշուխ*, (թ. Ղալէպէլիի) բազմութիւն:

*Ղանր*, (ա. Քանր) մեծ վիշտ:

*Ղամզա*, (ա. Ղամզէ) աշբի ծայրով  
նայուածք. զաղսագողի և քաղցր ակ-  
նարկ:

*Ղային*, (ա. Քայիմ) [ամուլ] կե-  
ցած:

*Ղանաղան*, (թ. Քանի արին) արին թափող? արեան ծարաւի?

*Ղանդ*, (պ. Քանն) — շաբար, փըն-  
րաշաբար:

*Ղասապիսանա*, (պ. Քասապիսանէ) սպանդանոց:

*Ղարաղաշ*, (թ. Քարափաս) սկայօն:

*Ղարանիիլ*, (թ. Քարանիթիլ) մեխսկ:

*Ղարատուզան*, (թ. Քարատիւզէն) տեսակ մը նուազարան, քառարար կի-  
թառ:

*Ղարար*, (ա. Քարար) հանգիստ,  
դադար:

*Ղարաւաշ*, (թ. Քարավէս=հարա-  
պած) զերուհի, աղախին:

*Ղաւ*, (թ. Քավ) արէթ:

*Ղագաս*, (ա. Քաֆէս) վանդակ:

*Ղրաղ*, (թ. Քրաղ) եղերբ:

*Ղրւրղզի*, (թ. Քրւրզի) կարմիր:

*Ղուլ*, (ա. Քուլ) զերի:

**Ղուլըանս**, (պ. Քուլպենդ) գերիի  
պէս բանտարկուած, շղթայուած :

**Ղումաշ**, (ա. Քումած) կերպաս :

**Ղումը**, (թ. Քումըու) տատրակ :

**Ղօնաղ**, (թ. Քօնաք) 1. իջևան,  
2. հիւր :

**Ղօչ**, (թ. Քօչ) 1. խոյ, 2. ուժեղ,  
քաշ :

## Ճ

**Ճիկար**, (պ. Ճիկեր) թոք :

## Մ

**Մազար**, (ա. Մեզար) աճուրդ :

**Մար** [ընել] (ա. ապչեցնել, զմայի-  
ցնել, զարձացնել):

**Մարլապ**, (ա. Մարլէպ) նպաստակ,  
պահանջ :

**Մախմուրի**, (թ.) թաւիչ :

**Մայիլ**, (թ. Մայիլ օլմաք) զմայիլ :

**Մանժիլ**, (ա. Մենժիլ) թաշիլինակ :

**Մաշի**, (ա. Մեշի) չու, երթ, "Մաշի"

դրէք", ճաճքայ ելէք ?

**Մաշլուն**, (ա. Մեննուն) խենթ,

խելակորյու:

**Մալ**, (թ. Մալի) կապոյա:

**Մարալ**, (թ. Մարալ) եղնիկ :

**Մարիփար**, (ա. Մարիֆէր) ճար-

տարութիւն, հնարք :

**Մարշան**, (ա. Մերնան) բուսա:

**Մեզան**, (ա. Միզան) կշիռ :

**Միշտան** (ա.) հրապարակ :

**Միրել**, (պ. Մեօնր—լինիք) կնքել :

**Միշիխ**, (ա. Մենլիխ) ժողով, ակումբ :

**Մոնք**, ա. վանականի փոքրաւոր :

**Մուբարակ**, (ա. Միւպարէկ) օրհ-  
նեալ, նուիրական :

**Մուշիուշու**, (ա. Միւօխիլիւ) զիժ-  
ուար, զմնակ :

**Մուրասայ**, (ա. Միւրասսա) ակո-  
նակոււ :

**Մուրկիք**, (ա. Միւրիւվիկ) ճար-  
դասիրութիւն :

**Մուրտառ**, (պ. Միւրտար) անմա-  
քուր, աղասա:

## Ն

**Նարաք**, (ա. Նեօպէր Շէֆէրի) շա-  
բարպարազակ :

**Նադան**, (պ. Նատան) աղէտ, աղն-  
ձար :

**Նահախ**, (ա. Նահախ) անարդար,  
անարդարօրէն :

**Նալայ**, (պ. Նալէ) ողբ, հեծենարք:

**Նողուլ**, (ա. Նօգուլ) աղանդիր [մէզէ]:

**Նուրար**, (պ. Նեվպէր) երախայրիք :

## Շ

**Շամալ**, (ա. Շիմալ) ձախ :

**Շամամ**, (պ. Շեմանէ) անուշանոս  
փոքրիկ սոկեզօծ ու փափակ ճորթով  
սեխ :

**Շամսի դամար**, (ա. Շեմս ու խա-  
մեր) արև ու լուսին:

**Շամսան**, (պ. Շեմսան) աշտանակ :

**Շարքար**, (ա. Շերպէր) օշարակ :

**Շեյսայ**, (պ. արքշիռ):

**Շիշակ**, (թ. Շիտէկ) շիշի խորսիած:

**Շիշայ**, շուշայ, (թ. Շիտէկ) շիշ :

**Շիրուպ**, (թ. Շուրուպի) օշարակ :

**Շպիդի**, պաղպեղ, շիպ :

**Շօհրար**, (ա. Շիհրէր) համբաւ,  
հոչակ :

**Շուռ**, (պ. Շուռ) աղի :

## Ո

**Ումր**, (ա. Էօմր) կեանք:

## Չ

**Չաղ**, (թ.) ժամանակ, պահ :

**Չախմախ**, (թ. Չախմաք) կայծքար :

**Զամպար**, (պ. Զեմպեր) 1. չըջաւնակ, 2. ճանեակ :

**Զամախ**, (թ. Զանսի) պնակ :

**Զանկալ**, (թ.) կեռ, պատաքազ :

**Զանցել**, ու. ձանկել, իւրացնել,

**Զարշաւ**, (թ.) ծածկոյթ ծահմեսական կանանց :

**Զարպաղ**, (պ.) քառակուսի կածքառածաս ալգի :

**Զընար**, (թ.) սօսի :

**Զիման**, (պ. Զեմեն) մարդագետին :

**Զիմի**, (պ.) յախճապակի, ձենապակի :

**Զուխ**, (թ. Զօֆ) շատ, չափազանց :

**Զօմար**, (թ.) հովուի շուն :

**Զօնգուր**, (թ. Զունգուր) տեսակ ծը լարաւոր նուազարան, սազի նման :

### Պ

**Պաշան**, (ա. Սէսէն) մարմին :

**Պաղի**, (ա. Պաբը) մեացական :

**Պաղչայ**, (պ. Պալչէ) պարտէղ . (պաղչի, պարտէղի, պաղչում, պարտէղին մէջ :

**Պուռմա**, (թ.) 1. ոլորք, — ճատի՞ ապարանջանի ?

**Պօյ**, (թ.) Հասակ :

### Ջ

**Ջալլադ**, (ա. Ճելլաս) դահիճ :

**Ջամ**, (պ. Ճոմ) 1. ապակի, 2. բաժակ :

**Ջամալ**, (թ. Ճեմալ) զեղեցկութիւն :

**Ջաննար**, (ա. Ճեններ) Երբայութիւն :

**Ջավր**, (ա. Ճեվր) բռնութիւն, առարգարութիւն :

**Ջավի**, (ա. Ճեֆու) առապահնք, զըրկանք :

**Ջեհիլ**, ա. Ճահիլ) 1. երիտասարդ, անփորձ, աղէտ :

**Ջեյրան**, (թ. Ճեյրան) վիթ :

**Ջընուն**, (ա. Ճիննին) խելազարութիւն :

**Ջիւան**, (պ. Ճիվան) երիտասարդ :

### Ռ

**Ռիշտն**, (պ. Բիշը) տեսակ ծը դդմաճ՝ անձակ :

### Ս

**Սարաք**, (թ. Սեփէր) կողով :

**Սադաղա**, (ա. Սատման) ողործութիւն :

**Սալակ**, (ա. Սէլագ) սէլագ ? յատ, սն. ին Տիզրիս սովին . ա. Սիլբ ? թել գիծ) :

**Սարամ**, (ա. Սէլամ) ողջոյն, խաղաղութիւն, փրկութիւն, ընդունելու թևան զահիճ :

**Սալիի**, (թ. Սէրվի) նոճի :

**Սաղ**, թ. ողջ :

**Սաչ**, թ. ճաղ :

**Սապապ**, (ա. Սէպէպ) պատճառ :

**Սապր**, ա. հաճրերութիւն :

**Սադագ**, (ա. Սատկէ) սասափ :

**Սարասար**, (պ. Սէրասէր) ծայրէ ծայր, վերէն վար :

**Սարփուշ**, (պ. Սէրփուշ) 1. զըլիսանց . 2. զըլէթաճն կափարիչ :

**Սեփիլ**, (ա. Սէֆիլ) խողճ, թշուառ :

**Սեյրան**, ա. զիսել :

**Սըռ**, (ա. Սըրը) զաղանիք :

**Սիհան**, պ. սիւ :

**Սինի**, պ. մեծ տափարակ ափսէ, որուն վրայ կը ճաշեն :

**Սիւրահի**, (պ. Սուրահի) շիշ զինոյ :

**Սիւրաք**, (պ. Սուրէր) գէճք, պատկը, ձեւ :

**Սուրմայ**, (թ. Սիւրմէ) ծարիք :

**Սուրքա**, (պ. Սուրէր) սեղան :

**Սօհպար**, (ա. Սիւհպէր) խօսակ-  
ցութիւն :

**Վ**

**Վարան**, ա. Հայրենիք :  
**Վախիք**, (ա. Վաքբ) ժամանակ :  
**Վարաղ**, (ա. Վարաք) — 1. թերթ,  
սովոր թերթ :  
Վեստ ու հալ, (ա. Հասալ ու հալ)  
վիճակ, կացութիւն :

**Տ**

**Տարախուռ**, (թ. Տարամ — սանտր) սանտրով, լաւ սանտրուած :

**Տըժիպ**, կծու :  
**Տոշիւար**, տաղաչար ?  
**Տուզան**, (թ. Տիւզէն) կարդ ու  
կանոն, զարդ, զարգարել :  
Տօղապ, պ. 1. անիւ, 2. նենդ, զա-  
րան :

**Տօրօն**, Տիւակ ձը գուհաւորող ար-  
ձատ, ներկ, Garance.

**Ո**

**Ռաբահումես\***, (ա. Բապսի ումես) վաստակ, յոյս. բարբահումեսն ամէն  
հասաւ, ոչ վաստակ մնաց ոչ յոյս  
(կեանիք, ասլրուստի) :

**Փ**

**Փաշան**, թ. Համես :  
**Փարա փարա**, (պ. Փարէ փարէ) կոտոր կոտոր :

**Փարզալ**, (պ. Փերկիսար) կարկին :  
**Փարեխանդայ**, (պ. Փերաքենտէ) ցի-  
րուցան, շփոթ :

**Փարիշան**, (պ. Փերիսան) ցիրուցան,  
կործանած, շփոթ, աւերեալ, թշուառ :

**Փարվարդայ**, (պ. Փերվէրտէ) ոը-  
նուցեալ, խնամեալ :

\* Զեռապրին մէջ՝ Պարահամիս:

**Փեշակ**, (պ. Փէսէկ) արհեստ, գործ :  
**Փոշիւաննել**, (պ. Փեշիման) զլջալ :  
**Փօչ**, փուծ, չնչին :

**Ք**

**Քաղիսուտիւն**, (պ. Քերիսիւս) սա-  
նուալը, վերակացու (ընտանիքի կած  
զիւղի) :

**Քահրուպար**, (պ. Քեհրիւպա կած  
ենիրիւպար) սաթ :

**Քարվան**, (պ. Քեարպան) կարաւան :  
**Քացի**, ա. աբացի, կից :

**Քափուլ**, (ա. Քեափիւլ) խոպսիք :  
**Քէչա**, (թ. Քէչէ) թաղիք :

**Քեամար**, (պ. Քէմէր) կամար, զօտի :  
**Քեասայ**, (պ. Քեսէն) խոր սկա-  
ւուակ :

**Քեագիր**, ա. ուրացող, անհաւատ,  
հեթանոս :

**Քիսայ**, (ա. Քիսէ) քսակ :  
**Քուզայն**, ֆիւզեն, (ա.) կուժ, սա-  
փոր :

**Քօչ**, (թ. Ակօչ) տեղափոխութիւն :

**Օ**

**Օրադ**, (թ. Օրաֆ) ձեծ վրան, սուն,  
սենիակ :

**Օյմադ**, (թ. Ույմաֆ) ձատնոց ?  
**Օրօն**, (թ. Ուրուն) անդ, հանգստա-  
վայր, բնակավայր . օրօն անել, տիրու-  
թիւն, հոկոզութիւն ընել (բառարան Խ.  
Երովեանի երկերու) :

**Ֆ**

**Ֆէնար**, յուն. լապտեր :  
**Ֆըրոքունա**, (թ. Ֆուրքունա) փո-  
թորիկ :

**Ֆըստուղ**, (թ. Ֆըսրբէ) պիստակ :

**Ֆըրսանդ**, (ա. Ֆըրսանդ) առիթ :


**Ֆիջան**, պ. աղաղակ, հեծեծանը,

ողբ, հառաջանիք :



Ց Ա Ն Կ

|                     |                                                          |     |
|---------------------|----------------------------------------------------------|-----|
| I.Բ.                | Առանձաւոր աստղեալ ի Նազաշ Յովեաթանէ ի վերայ.             |     |
|                     | կատուին և մկանց                                          | 79  |
| I.Գ.                | Տաղ ուրախութեան                                          | 81  |
| I.Դ.                | Ազօմք և տաղ գովասանութեան առ Ս. Աստուածածինն.            | 82  |
| I.Ե.                | Տաղ ուրախութեան սեղանոյ.                                 | 85  |
| I.Զ.                | Տաղ սիրոյ                                                | 86  |
| I.Ե.                | Տաղ ուրախութեան ի վերայ սեղանոյ                          | 87  |
| I.Ը.                | Տաղ սիրոյ                                                | 89  |
| I.Թ.                | Տաղ ուրախութեան սեղանոյ.                                 | 90  |
| Խ.                  | Տաղ բռն բարեկենդանին                                     | 91  |
| Խ.Ա.                | Տաղ ի վերայ մածունի՝ զոր ընծայ բերին<br>Նազաշ Յովեաթանին | 93  |
| Խ.Բ.                | Գովասանութիւն Երեւանայ քաղաքին                           | 95  |
| Խ.Գ.                | Վարք Հաւասար մոնթերին                                    | 97  |
| Խ.Դ.                | Տաղ ի վերայ Զատկին Հայոց                                 | 103 |
| Խ.Ե.                | Տաղ ի վերայ Գուրջըստանայ զօգալներին                      | 105 |
| Խ.Զ.                | Տաղ ի վերայ գարնան և ուրախութեան                         | 107 |
| <b>ՆԱԳԱՃ ԵՎԱԿՈՐ</b> |                                                          |     |
| Խ.Ե.                | Աղմերգութիւն յազագս մահուան Նազաշ Յովեաթանի              | 113 |
| Խ.Բ.                | Բառարան                                                  | 117 |



## ԱՐԻ ՊԱԿ

|    |     |     | Միան   |                      | Ուղիղ         |
|----|-----|-----|--------|----------------------|---------------|
| էջ | 12  | սոդ | 12,    | Նախաւ                | Նախաւ         |
| "  | 12  | —   | 28,    | Հիմի                 | Հիմէ          |
| "  | 12  | —   | 30,    | թ. 15ր               | թ. 156ր       |
| "  | 14  | —   | 6,     | բացեալ               | բացուել է     |
| "  | 14  | —   | 7,     | Առէլ                 | Աձէլ          |
| "  | 25  | —   | 13,    | զայն                 | զայն          |
| "  | 25  | —   | 37,    | զայն                 | զայն          |
| "  | 26  | —   | 6,     | շղպած                | շղպած.        |
| "  | 31  | —   | 7,     | տաղանդի մը           | տաղանդի       |
| "  | 44  | —   | 21,    | էր                   | էր            |
| "  | 51  | —   | 1,     | Նախաւըն              | Նախաւըն       |
| "  | 52  | —   | 4,     | ևս մայիլ             | ևս մայիլ ևմ   |
| "  | 53  | —   | 14,    | Նախաւըն              | Նախաւըն       |
| "  | 60  | —   | 23,    | էրը                  | էր            |
| "  | 62  | —   | 10,    | փրրքած               | փրրքած'       |
| "  | 63  | —   | 8,     | էր                   | էր            |
| "  | 66  | —   | 5,     | Շաղցրախօս            | Շաղցրախօս     |
| "  | 69  | —   | 2,     | էր                   | էր            |
| "  | 74  | —   | 8,     | կարօղութիւն          | կարօղութիւն   |
| "  | 74  | —   | 12,    | Տեղուցն              | Տեղուցն       |
| "  | 75  | —   | 5,     | Նախաւըն              | Նախաւըն,      |
| "  | 78  | —   | 19,    | իսրմէլ               | իսրմէլ,       |
| "  | 79  | —   | 17,    | մեռաւ, ափսու ու վախ, |               |
|    |     |     | ասդ,   | ասդ,                 |               |
| "  | 79  | —   | 19,    | բարեկենդան է         | բարեկենդան է* |
| "  | 92  | —   | 26,    | զլոյս                | զլոյս         |
| "  | 94  | —   | 1,     | Շաւանայ              | Շաւանայ       |
| "  | 97  | —   | 7,     | զրգիկ                | զրգիկ         |
| "  | 101 | —   | 11,    | բանքն                | բանքն         |
| "  | 107 | —   | 16,    | բանքն                | բանքն         |
| "  | 109 | —   | 3 և 8, |                      |               |

